



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

3. Strelitzia.

Verl. für wiss. Buch

1906<sup>o</sup>

891.99  
S-38



831.99.5

5-39

Յ. ՏԵՐԵՆՅ


-5 NOV 2011

2011-07

# ՄԵՐ ԽԱԼՓԱՆ

Վ. Հ. Պ. Կ.

ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Ձ.

Տպագործություն „ԶԵՐԱԿԱ“ Ակտիվացման վեհական

1906

(43)

21 SEP 2013

13364

## ՄԵՐ ՆՈՐ ՏՈՒՆՆ ՈՒ ԱՅԴԻՆ

Ոսւս տաճկական պատերազմը նոր էր վերջացել, երբ հօրս, որ մի ծառայող էր, տեղափոխեցին մեր մայրենի բազաքից 0...ի բազաքը:

Ծառաստանների մէջ կարած մի փորբիկ ու սիրուն բազար էր մեր նոր բնակավայրը, իսկ մեր նոր տան առաջի այգին իւր պտղատու ու փառաւոր ծառերով, իւր զոշոչան առւով, իւր սուերաշատ անկիւններով մի այնպիսի հրապուրիչ նորութիւն էր ինձ համար, որ մայրս ժամերով ինձ պիտի կահշէր ու պտռէր՝ մինչհ յաջողեցներ տուն տանելու ճաշի կամ թէյի:

Իմ այդ թափառական կետնիքի միակ ընկերը իմ տասը տարեկան քոյր Վարօն էր, որ ամեն տեղ հետեւում էր ինձ և կատարում տռանց հա-



2460-59

կաճառութեան իմ բոլոր կարգազրութիւններն ու  
հրամանները, և Վարօն միշտ վարձատրուում էր  
իւր այդ հեազանգութեան համար, ձեռքերս վեր  
բաշած մէկ էլ որոշում էի նորա համար առւի  
վերա կամուրջ շինել և առանց յիտաձգելու գոր-  
ծին էի անցնում. Վարօն կրում էր այդ շինու-  
թեան համար բոլոր հարկաւոր նիւթերը և ահա  
կէս ժամեա ընթացրում, ահազին ու հոյակապ  
կամուրջը պատրաստ էր և Վարօն լրջութեամբ և  
հպարտութեամբ անցնում էր վերայից մի տասը-  
րոտն անգամ, մինչ ես, մի բարի վերա նստած,  
հանգստանում էի ծանր աշխատանքից և զիջողա-  
զարար նայում Վարօնի թեթեամբ հաճոյքների  
վերա. Յետո որոշում էի վարձատրել թէ ինձ,  
թէ Վարօնին մեր կրած աշխատանքի համար և  
վազում էի գէպի իմ վառաւոր և սիրելի թթե-  
նին. մէկ վայրկեանում կօշիկներս հանդւմ էի,  
պահ էի տափս Վարօնի և, կապկի նման մազլ-  
ցելով, բարձրանում էի թթենիի վերա ու թա-  
փում հասած թութը Վարօն զիսին. Վարօն  
փոռում էր իւր գոգնացը ծառի տակ, թութը մէ-  
ջը հաւարում և ինձ սպասում, որ վայր իշնեմ  
ու թութը միասին վայելենք. և վայելում էինք  
այնպիսի ախորժակով, որ ճաշին ճայրս միշտ

Բայց այդ մջիսցներին պատահում էին նաև  
անախործ ու անսպասելի արկածներ: Ծառի վե-  
րա, ճիւղից ճիւղ անյնելիս, պատահում էր, որ  
անյաջոզութեան էի հանդիպում և զգում, որ  
ճիւղին կանգնելու տեղը, գետնի վերա եմ պառ-  
կած, բաւականին անքնական զիրքով: Այդ ժա-  
մանակ Վարօն, ամեն բան մոռացած, մի այն-  
պիսի ճիշ ու աղաղակի էր բարձրացնում, որ ոչ  
մի խնդիր ու թախանձանք որ լոէ, որ իմէ  
զոռա, վիճակու աւելի վատ կ'լինի, զօրծին չէր  
օգնում և բանը վիրշանում էր նորանով, որ  
ազետի վայրն էին հաւարում բոպէապէս մայրս,  
մեր պառաւ գայեակը—անտեն և ծառան և  
թիկց բռնած, նախատելով ու պարսաւելով,  
տուն էին տանում, օրհնելով նախախնամութիւ-  
նը, որ թես, կամ ոտս չէ կոտրւել: Գնացըը  
վակում էր այդ զէպերում ինը Վարօն, որին  
ճանապարհի ընթացրում, յարմար բոպէին, եռ  
ովառնական նշաններ էի անում, նորա լացի մէջ  
միայն զտենելով այս խայտառակութեան պատ-  
ճառը:

Այդպիսի օրեր մայրս մեղ էլ զուրս չէր  
թողնում սենեակից և ես ու Վարօն, որի հետ  
շատ շուտով հաշտում էինք, կամ յենեած պատու-  
հանի զոգին, նայում էինք մեր տռաջը բարձրա-

ցած սարի վերայի ահագին, վիթխարի բերդին,  
կամ, եթէ երեկոյի մօտ էր լինում ժամանակը,  
զնում անալի վեշերից էինք կպչում, որ մեզ  
բան պատմէ:

— Աման, ասում էր անան, թեշիկը մանելով,  
ձեռք վերցրէր ինձանից, թողէր գործիս նայեմ,  
թելերո թնձկեցիր. բրդերս իրար խանեցիր,  
կորիք զեացէր.

Բայց ով էր լսողը. մենք գիտէինք որ վերջ  
ի վերջայ անան պիտի սկսէ խըր հիանալի հե-  
րեալիները և միայն աւելի յարմար կերպով էինք  
նստում նորա մօտ, խալիչի վերա:

Եւ անան սկսում էր. և ինչե՛ր ինչե՛ր չէր  
պատմում նա. Քոս-օղլիի, Զահ Խոմայիլի բա-  
ջութիւնները մեզ հիացմունք ու զարմանը էին  
պատճառում աշըզ Ղարիբի գժբախտութիւնները  
մեր սրտից անկեղծ հառաշանիներ էին գուրս բե-  
րում, զեկորի ու բաջքերի արարքները մեզ վե-  
րա սրբազն սարսափ էին ազգում. նոցա  
ճանկերից թագաւորածնը կամ թագաւորի աղ-  
ջիկը տղաւում էին վերջապէս և հրեղին ձիռ  
վերա նստած, թոշում զնում էին գերութեան  
վայրից գէպի իրանց պալատները. Այնտեղ, պա-  
լատների մէջ հազարան բիւրիւնների երգերի  
ձայններն էին լսում, հուրի վերիները լողանում

էին աւազանների ու ծագիապատ լճակների մէջ,  
ահուշահոտ օդի մէջ սոսափում էին խնձորենինե-  
րը, ծանրաբեռնաւած անմահական խնձորներսվ,  
յետո նոյն օդի մէջ անցնում էր ու լսում մի  
կամաց հոգոց, ապա մի թեթե խոպաց, յետո  
զգացում էր անայի կամ մօրս ձեռքերի հպումը,  
ապա մի տեսակ թեթենութիւն և օպային ճանա-  
պարհորդութիւն—և անայի հրաշալի հերեաթը  
մահճականներիս վերա գեղեցիկ երազների մէջ  
էր վերջանում:

Վերջապէս ես եղա տասն երկու տարեկան:

Այն աննման տշնանային օրերից մէկն էր,  
որոնք լինում են մեր սիրուն հայրենիքի միայն  
աւելի շոր տեղերում: Մեր լայն այգու հեռա-  
ւոր անկիմնը կանգնած, ես և Վարօն համարում  
էինք ծառի վերա մեծ մեծ ու գեղին-գեղին  
սերկիկները, որ արգէն հատել էին և միւս օրը  
պիտի բագէինք. նորա էլեքտրոնի պէս փայլփում  
էին իրանց ծածկով թաւշեա տերինների տակից:  
Մեր հաշիւը նոր էինք վերջացըել, երբ լսեցինք  
մօրս ձայնի, որ մեզ ճաշի էր կահշում: Ուրեմն  
հայրս տուն էր եկել. մենք լւացինք ձեռներս,  
մարքեցինք վերաներս և եկերս վազեցինք ու ըրո-  
նեցինք մեր տեղերը սեղանի շուրջը:

Այդ օրը իմ աչքիցո անտես շանցաւ այն

բանը, որ հայրս մի քանի անգամ վերաս նայեց  
առանց մի քան խօսելու. Երբ ձաշի նոտեցինը,  
նա ինձ տասց.

— Սարօ, բաւական է ինչքան անգործ մեա-  
ցիր, ահա վեց ամիս եղաւ, որ ոչինչ չես անում,  
այդպէս զիտցածդ էլ կմոռանաս. պատրաստ  
եղիր ուրեմն, որ առաւոտ քեզ Միմոն խալֆա-  
յի մօտ տանեմ:

Ես ու Վարօն իրար երես նայեցինը և ապա  
երկուսս էլ-մօրս երեսին:

— Այ մարդ, ասաց մայրս, տղէն գեռ փորք  
է, ոյժերը դեռ թոյլ, չուտ չէ նորան վարժատոն  
տալը, թող գոնեա այս տարի էլ մնա մի քիչ  
կազզուրի, յետո...

— Կազզուրին, պատասխանեց հայրս, երբ  
է հիւանդ եղել, որ հիմա կազզուրի, բոզկի  
պէս առողջ է ու բարի պէս ամուր. Թող զնա,  
ինչպէս ուրիշները, այնպէս էլ ինքը. և որտե-  
ղի փորքն է, ահա տասն երեք տարին է զնում.  
Սեղանից վեր կացանք:

Ես զգացի, որ կեանքիս մէջ մեծ փոփոխու-  
թին է կատարում:

Կարծես շրջապատողներս էլ այդպէս էին  
մտածում: Անան՝ որի մօտ ես ու Վարօն խկոյն  
զեացինը այդ լուրը յայտնելու՝ տհաճութեամբ

լսեց մեր նորութիւնը.

— Հողը զլսիս, առում էր նա ինքն իրան,  
բանի տարեկան է, որ ուստա վնա. խոճ մաքերը  
չեն զրել սպանել երեսին, պիտի զիմանա էլ  
թէ, չէ... և արգալէս, վիճժինթում էր մեր պա-  
ռաւ անան մինչ տեղս պատրաստելն, ինձ քնա-  
ցնելին ու երեսս խաչակներելը:

Մօրս վերաբերմաներն էլ զէպի ինձ մի փո-  
րը փոխւել էր. նա միշտ մեզ հետ մեզմ էր  
վարւում, բայց այդ օրը մեզութեանը խտանք-  
ւել էր և մտահոգութիւնը:

Իսկ Վարօն, խեղճ Վարօ, նա այնպէս էր վի-  
զը ծուել, որ կարծում էիր թէ ահա լաց պիտի  
լինի: Ախար նա զրիւում էր, օրւա կէս մասի  
իւր միակ ընկերից, որի հետ նա այնպէս ուրախ  
ժամեր էր անցկացնում մեր վեղեցիկ այզու մէջ.  
Խեղճը բոլորովին մենակ պիտի մնար տանը և ով  
պիտի նորա համար սոկորէ խոզովակներով աղ-  
բիւրներ շինէր, ով պիտի ծառերին բարձրանար և  
պտուզ վեր զցէր, ով պիտի փորքիկ սայլեր շինէր:

Բայց իմ խեղճ Վարօ... գուրս եկաւ, որ նո-  
րա ախրութիւնը, գորա համար չէր. երբ անան  
պառկեցրեց նորան և գուրս զնաց, Վարօն վեր  
կացաւ տեղից և շապկանց եկաւ մօտս:

— Սարօ, ասաց նա սաստիկ կամաց և հեկե-

կալով, անան ասում է, թէ վարժատան մէջ ծե-  
ծում են... Եխար միզր ես, խեղճ Սարо...

### ՎԵՐՓԱՏԹԻՆ

Միւս օրը վազորդեան արեգակի ճառապայիծ-  
ները գեռ նոր էին դիպել մեր տան գէմը բարձ-  
րացած բերդի պարիսպներին, երբ անան ինձ  
զարթեցրեց քնից, երբ յիշեցի, որ այդ օրը  
վարժատուն պիտի երթամ, սիրտս սկսեց արագ-  
արագ խփել:

Հայրս արդէն վեր էր կացել, թէյը խմել  
վերջացրել և ինձ էր սպասում. շտապով ես էլ  
թէյս խմեցի և հօրս հետ միասին գուրս եկանք:

Մի բառորդ ժամից յետո մներ կանգնած  
էինք վարժատան փաթրիկ շինութեան առաջ: Մի  
սպիտակ մարտու, մի յարկանի տուն էր դա՝ տե-  
րհախիտ ծառերով ծածկւած և կանաչի մէջ  
կորած, այնպէս որ մարդ մինչեւ ուղիղ շինու-  
թեան դէմը կանգնած շինէր, հեշտութեամբ շէր  
կարսդ տեսնել: Տան դռան առաջից, իւր եղերը-  
ներին կանգնած հաստաբան ծառերի բները լը-  
ւալով, սահում էր պարզ ու մարտու առակը. ե-

ընդհանրապէս այդ փորբիկ, սպիտակ ու մաքուր  
տոննը, իւր կանաչազարդ պարտէզներով, իւր  
անհանգիստ ու զոշգոշան առւակով նայողի  
վերա խոստ նպաստաւոր տպաւորութիւն էր  
թողեռւմ:

Դեռ վազ էր և աշակերտները չէին եկել:

Չեորից բռնած նայրս ինձ ներս տարաւնա-  
խառնեակը:

Եյօտեղ պատուհանի մօտ նստած էր մի ան-  
ձնաւորութիւն, որ խորասուզւած կարգում էր  
լուսամուտի զովին դրած մի հաստ ու հին գիրը.  
Նորա զովին մրմում էր մի մեծ ու գեղեցիկ  
կատու, որին նա մերենայաբար շոյում էր:  
Մեր ներս մտնելը նա կամ չնկատեց, կամ շուզեց  
նկատել և յներերը կիտած, շարունակում էր իւր  
ընթերցանութիւնը:

Հայրս մօտեցաւ նորան.

— Ներոգութիւն առաց նա, կարելի է տես-  
նել Սիմոն խոլֆային,

— Ինչ կ'հրամայիս, առեց աչքերը զրբից  
բարձրացնելով և իւր երկար ցուցամատը զրբի  
երեսի վրայ զնելով մեր խօսակիցը. ինչ կ'հրա-  
մայիս, աղաս, կրկնեց նա, ի զուր աշխատելով  
իւր գեմքին սիրալիք արտայայտութիւն տալ,  
երբ տեսաւ հօրս նշանազգեստը:

Հէնց առաջին անգամից իսկ, երբ տեսա այդ  
մարդու երեսը, լսեցի ձայնը, մի ինչ որ ան ու  
սարսափ զզացի և տւելի պինդ բռնեցի հօրո  
ձեռքը. երեսը հիւծւած էր ու լզար, երեսի առ-  
հասարակ գեղնագոյն կաշին, ճակատից ցած սիի  
էր զարկում. ճակատը մի փորբ յետ էր զնում և  
անկիւններում ճագատ էր. հաստ ու սե յանքերի  
տակից փայլում էին նորա փորբիկ ու սե աչքերը,  
որոնք մի տեսակ վախկատ ու անհամարձակ շտ-  
րութիւն էին արտայայտում. Նորա ահազին  
բիթը կեռւում էր ծայրում և գլափի վար գնում,  
ինչպէս բազէի կտուցը, փորբիկ լնշացը չէր  
ծածկում բերանը և նորա տակից երեսում էին այդ  
մարդու բարակ ու սկազայի շրթունքները, որ  
կողպէրի պէս, պինդ փակւած էին. Նորա նօսր  
սրածայր միրուրը հաւասար չէր բննում երեսի  
վերա և տեղ տեղ երեսում էր մազի տակից  
երեսի զօրչ կաշին, զլխի մազերը երկար էին  
ու խօսպով և ինամքով յետ էին սանրւած. հաս-  
կի համեմատ այդ մարդու ձեռքերը աւելի մեծ էին  
ու երկար:

Նա հաղած ունէր սե կտորից վերաբկուի պէս  
մի հագուստ, որն ինչպէս ես յետո տեսա նա  
կրում էր տարւա ամեն եղանակներին, թէ իրրի  
վերաբկու և թէ իրրի տան միջի զզեստ:

— Սիմոն խալֆային եմ ուզում տեսնել. կըր-  
ինեց հայրս, որդուս մասին հետը բան ունեմ խո-  
սելու:

Մեր խօսակիցը, հօրո վերջին խօսքերի վե-  
րա իւր ուուր ու արագ հայեացրով շափեց ինձ  
ոտից մինչե պլուս և այդ հայեացրից մարմնովս  
ուրսուռ անցաւ մի ինչ որ անորոշ ահից, ապա  
գա վտանգից:

— Եթէ խօսակցելու ցանկութիւն ունիս, ա-  
ղաս, հետի պատւելի խալֆային, ասաց մեր  
խօսակիցը, նեղութիւնը մի զանց առնիր և նը-  
ւաստիս հետեիր... տողն մետասաներորդ, էջն  
հարիւր տասնթիններբորդ, աւելացրեց նա մտայոց  
կերպով իւր գրրին նայելով:

— Ի՞նչ, հարցրեց հայրս, զարմացած այդ  
մարդու տարօրինակ ձևերից ու ոճից:

— Եւ ոչինչ, մհծարգո տէր, պատասխանեց  
նա, վերջին նախագասութիւնն շէ վերաբերեալ  
ոչ բեղ, ոչ ուստերդ, այլ մի միայն զբաղմանց  
իմոց. կընթեռնում սրբայ հօրն մերոյ Գրիգորի  
նարեկին և հացեալ եմ մինչ էջն հարիւր տասնթին-  
ներբորդ տողն մետասաներբորդ. այս ասելով նա  
զրեց կատւին զրբի վերա և յամբ ու հաստա-  
տուն բայերով գիմեց զէսի տան ներսերը տա-  
նող զուռը:

Երբ մեր ուզեկիցը գնաց, ես խոկոյն նկա-  
տեցի, որ նա մի ոտից կազ է. մենք հետեւցինք  
նորան և, մի սենեակ անցնելուց յետո, մտանք  
Սիմոն խալֆայի սենեակը:

Մեր ներս մժնելու բոպէին Սիմոն խալֆան  
նստած էր գրքերով ու տեարակներով լցւած  
սեղանի առաջ և ֆինջանից սուրճ էր խմում. մեզ  
տեսնելու պէս նա վեր կացաւ ու դիմաւորեց  
մեղ:

Դա մի 40-45 տարեկան լիքը մարդ էր,  
զէմբի փափուկ գծերով, մեծ, բարի ու ծիծագ-  
կոտ աչքերով և արագ շարժումներով. երբ մենք  
ներս մտանք և նա բարձրացաւ ու մօտեցաւ մեզ՝  
նորա զլիսի ֆէսի փունջը այնպիսի ուժգին  
թռիչքներ գործեց գէպի վեր ու վար, որ կար-  
ծես ազատութիւն էր տենչում և պոկւել էր  
ուզում իւր բարձրագիր տեղից:

Խալֆան հազած ունէր վանի շալից մի երկ-  
նագոյն բաճկոն, որի տակից փայլում էր մա-  
րրութեամբ նորա սպիտակ ելակը. նոյն վանի  
շալից կարած անզրագարտիքը մի փոքր կարճ  
էր զալիս խալֆային և բոլորովին շէր ծածկում  
նորա զարկած ու պապղացող կօշիկները. խալ-  
ֆային առաջին անգամ տեսնողը կարծում էր,  
թէ նա բազանիսից նոր է զուրս եկել և թէ

նորա շորերը լացարարի և գերձակի մօտից  
նոր է բերած, այնքան ամեն բան նորա մէջ փի-  
զիրական մաքրութեան դրոշմ էր կրում:

Մեր ուգեկիցը մեղ ներս բերելուց յետո ին-  
քը մի փոքր յետ ընկաւ մեղակից և դառնալով  
Սխման խալֆային խօսից մէկ մէկ ու հանդի-  
սաւոր:

— Պատուիի խալֆա, այս բարձրաստիճան  
աղան ունի փափակ խօսակցելու հետն ըս իւր  
մանկահասակ ուստեր ապագայից տուժիւ, եթէ,  
հարկաւ, զու իո ունիս զփափակն նորան ունին  
զինուաւ: Արժանապատիւ խալֆան սա՞ է, աղաս,  
դարձաւ նա գէոլի հայրս, և լիր լիայոյս, որ  
հմաւու ձեռաց յանձնելոց հս զզաւակ րու:

Այսպէս խօսելուց յետո նա, երկու ձեռք  
կրծքին զնելով, խոնարհ զլուխ տւեց խալֆա-  
յին և հօրս և, կազալով, դուրս զնաց:

Այս մարդու թէ կերպարանքը, թէ շարժում-  
ները և թէ խօսակցաթեան ձեր այնքան տար-  
օրինակ էին, որ հօրս առաջին խօսքը խալ-  
ֆայի հետ այդ մարդու մասին եղաւ:

— Ներսութիւն համարձակութեանս համար,  
առեց հայրս ժպատով, բայց խնդրիմ ասացէր,

— Մեր տիրացու Յունանն է զա, պատաս-

խանեց խալֆան, մի գժբաղդ երիտասարդ, որի  
պատմութիւնը տիսուր է ու կարծ. չորս հինգ  
տարի սորանից առաջ կար այստեղ մի սմն Ղա-  
զար խալֆա, որին փոխարինեցի ես այս գպրո-  
ցում, անցաւորաց շարախօսելը լենպէտ և գովա-  
կան բան չէ, բայց իւր աշակերտների գէմ այդ  
մարդու գործած մեղքերը այնքան շատ են ու  
ծանր, որ առանց զայրայթի լիշել այդ մարդուն  
անհետարին է. գպրոցի մէջ նա վարժապետ չէր,  
այլ մի հրէշ, մի գաղան, որ իրան նպատակ էր  
սորել սորմեկի իւր սաներին մի երկու տյր սո-  
րեցնելը էժան շնատեցնել. ծեծ, բարչ, հայհոյ-  
գորեցնելը էին այս մարդու գաստիաբակչու-  
թեան միջոցները. մի օրինակ,—և բաւական է.  
ամեն երկուշարթի օրերը, կանուխ առաւօտեան,  
ձիչն ու լացը ալմկում էին գպրոցը ու շրջակայ-  
քը և զարհութանը բերում լսողի վերա—գա-  
զաղար խալֆան «սրա փալախսախ» էր զնում  
իւր աշակերտներին. սրանը այս գլուխից երկուշար-  
թի առաւօտից, պիտի ուտէին ծեծը, այն մեղ-  
քերի համար որ կարող էին կատարել յետո, և  
ահա բեզ, աղաս, հետեանքը,—այդ գժբաղդ երի-  
տասարդը: Տէրտէրութեան է պատրաստում գա-  
կ այդ ութը-տասը տարւա իւր ուսման ընթաց-  
քում ինչեր է բաշել հանգաւակ խալֆայի ձեռ-

բից այդ միայն իւր գաղտնիքն է, ինչպէս մասնաւորապէս իւր գաղտնիքն է, և այն, թէ ինչպէս հինգն համար, փալախա զնելիս, զաղար խալֆան, իւր հարբած բապէին, կոտրում է խեղճի սուր...

Բայց մեծ է այդ երիտասարդի կամքի ոլժը, սուր կոտրելու շորորդ օրը, սուր „հախուռ“ ձգած ու կապած, նա դարձեալ գալիս է իւր դահճի մօտ աւետարան կարգալ սովորելու.. դպրոցի մէջ հիմա իւձ օգնում է և ծառայում:

Բայց անցնենր գործին, տղաս, ասեց խալֆան յանկարծ, մի փոքր կանգ առնելուց յիտո, և ս նկատեցի, որ խալֆայի համար խիստ ծանր էր այդ պատմութիւնը և նա չէր կամենա նորից վերադանալ այդ առարկային: Հայրս մօտ քաշեց իւր աթոռը խալֆային և նրանք սկսեցին խօսել ւած Վեհետիկեան Մթիթարեանների պատկերազարդ հրատարակութիւններից մէկը և մի ականջով լուռմ, թէ ինչպէս է որոշում վիճակու:

Երբ դաւրս եկանք խալֆայի մօտից հայրս տուց ինձ.

— Իմացար, Սարօ, քեզ վարժատուն տւեցի և էկուցւանից կակսո զնալ դասի.

— Զատ լաւ մարդ է խալֆան, ասեցի ևս հօրս, սեպհական մտքերիո պատասխանելով:

## ԸԹԱԷՒՆ ԴԵՅ

Միւս օրը տռաւօտեան, նոր ըսրերս հագած, կոշիկներս սրբած, նոր կարած պայտուսակս— „շանհթառ“ կողքս կախում, ես վարժատուն մտա:

Խիստ վաղ էր և աշակերտներից ոչ որ զեռ շէր եկել միայն տիրացու Յունանը, երեկու մեր շտեռած մարդը, իւր առաջւած տեղը նոտած, կատուն զովը, կարգում էր:

Ես անցա նրա մօտից և գնեցի գլուխի զառսատուն, երբ լսեցի ետիցս նրա հրամայող և խիստ ձայնը:

— Կանգնիր և եկ առտ, մւր առաջ բարի:

— Դաստառուն եմ զնում, պատասխանեցի ևս յիտ զառնալով և խոկյի յիտ բաշելով նորա խոճոս հայեացրից:

— Դաստառուն երթաս, բարի, բայց ում տղան ևս, չից թէ սայլապանի:

— Ոչ ասեցի ևս, հայրս սայլապան չէ.

— Ա, ուրեմն ազայի տղա ես, ապա է՞ր ես  
մհծացել մէջն ախոռի:

— Ես ախոռում չեմ մհծացել, ասեցի ես և  
փորձեցի հռանալ:

— Կանկնիր և ունկի գիր, ասեց տիրացու  
Յունանը հրամայողական ձայնով: Ո՞ւր շտապես,  
քեզանից բան հարցանեմ:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, ասեցի ես բո-  
զաբաւոր ձայնով ու յետ յետ բաշւելով:

— Տուր ինձ պատասխան, մւր ես մհծացել,  
մէջն ախոռատան, թէ մէջն կատարեալ ընտա-  
նեաց:

— Ախոռում չեմ մհծացնյ ասում եմ ես, էլ  
ինչ ես ուզում:

— Եթէ ստոյգ է խօսք քո, ապա ուրեմն  
բազարաւար կննաց է՞ր ես մնծանօթ:

— Ի՞նչ, հարցրի ես, լաւ չ'մրոնելով Յունա-  
նի օտարութի ոճը:

— Երբ անցար մօտիցն իմ, միթէ՞ ոչ տեսեր,  
զի աստ նստած կնժեռնում:

— Ի՞նչպէս:

— Թէ ես հսս նստած կ'կարդամ գիրքն:

— Ապա ուրեմն էր զլուխ չ'խոնարհեցիր, ինչ-  
պէս մարթ է բազարաւարի մանկան: Ես լուռ

կանգնած էի Յունանի գէմը, կատուին նայելով,  
որ նարեկի թերթերի հիտ էր խաղում մինչ ին-  
րը Յունանը, ներքին հաճոյը դէմքին, զննում էր  
այն տպաւրութիւնը, որ անում էր ինձ վերա  
խր գրաբար կշտամբանը:

— Ասիմ րիզ, էր ինձ բարի, «թէմիննէ», շա-  
րեցիր, երբ անցար մօտիցս, կրկնեց Յունանը  
բարկացկոտ ձայնով, այ ինչ ասեմ:

— Այս նախասենեակում միշտ նստած ես, ես  
էլ կարծեցի թէ այստեղաց ծառան ես, զորտ հա-  
մար էլ...

Տիրացու Յունանի մինչ այդ խոժոռ գէմըը  
եղծեց բոպէապէս բմծիծաղը, որ իսկոյն տե-  
ղի տւեց նրա գէմըի վերա շարսւթեան ու տ-  
տելութեան արտայայտութեան:

— Կարծեցիր, որ ծառա եմ... կրկնեց նա  
հեգնութեամբ, հարկաւ, հարկաւ, բարձրաստիճան  
ազաների համար ամենի որ ծառա է, իրանցից  
ի բաց. նորա են միայն, որ եկած են իշխելու  
ի վայելելու հաճոյըն աշխարհի... շիր նոցա հա-  
մար ոչ մեծ և ոչ փորր, ոչ տպէտ և ոչ գիտուն,  
ոչ խոնարհութիւն և ոչ պատկառանը. արդ, գի-  
ցուր ծառա է նւաստս, առարինութեան պոտ-  
կըն չէ արգեօր խոնարհւին նւաստոց առաջ:  
Այն, արժանապատիւ աղա, այն, նուաստս ծա-

ռայ է, բայց ոչ ըստ ի բո նման անտաշ կոճղերի, այլ տիրոջն մերո Յիսուսի Քրիստոսի: Գնան ուրիմն և նոտիր տեղի բո, պարկ տպիտութեան և ամրար կովտութեան և իման որ բաղարաւար ու պարկեցած մարդու պարտքն է գլուխ խօնարհել առաջն մեծաց և գիտեականաց. զիան և միւս անգամ լեր աւելի ուշագիր, եթէ ոչ, ասեց նա, երկար ցուցամատը վերաս թափ տալսվ, որ ոչ լիցէ ունկամբ լիցէ թիկամբ:

Տասր բովէ տեսց Յունանի այս ծաղրն ու անարդանըլ և գասատուն մտա թէ չէ, սիրտո լլցւեց և ինձ սկսեց խեզել անվատաւութեան զգացմանը և անօգնականութեանս գիտակցութիւնը. անմիշապէս աշքիս առաջից անյան մայրըս. բոյրս, պառաւ անաս... ահ, ինչու անհաս մօտքս չէ. նա ցոյց կտար այդ կազ տիրացուին, որ շի կարելի առանց պատճառի ինձ այդպէս նեղացնել. այնպէս բան բանար գլխին. որ տիրացուն ականջները կախէր...

Բայց ուր էր անաս... և ես սկսեցի կամաց հեկեկալ, այնպէս, որ տիրացու Յունանը շիմանա:

Մինչ ես այս տխուր մտածոգութիւնների հետ էի գասատան գոնքները բացւեցին և աշակերտները մէկ մէկ ու խումբ խումբ սկսեցին ներս գալ:

Նրանք տեսան ինձ և սկիզբը մի կոզմ հաւարւեցին, միմիանց մէջ ինչ որ խօսեցին, անկատկած իմ մասին, և կամաց կամաց ինձ մօտեցան:

—Թաժա է, ասեց մէկը:

—Այստեղացի չէ, վրա բերեց միւսը:

—Ճատ ուռած է, երեխ անուշեղէն բիշ են տւել, աւելացրեց մի ուրիշը:

—Տղերը, լացել է նոր, գուաց չորրորդը և այդ աղաղակով հաւարեց բոլորին գլխիս:

—Երեխ ծեծով ու քարշով են բերել. նայեցէք, աւելացրեց նոյն տղան, մատը համարեա աշքերիս մէջ կսխելով. էլի պիտի լա, Մանուել, արի տնոս:

Դրութիւնս բանի վեաց կրիտիբական դարձաւ. տաս տասն ու հինգ հոգի գլխիս հաւարւած, մասխարա էին ձգում ինձ և քանի ես ձայն չէի հանում, այնքան նրանք յանդուդն էին գառնում և երես առնում և ես զգում էի, որ մի րիշ էլ անցնի, բոլորովին բանը պիտի վշանա, ես առաւել, որ արգէն մի բանի գմբոց ու շպաց ետեւիցս ու կողքերիցս զգացի: Էլ որ օրւա համար էի այնքան մուշտակիւ արել ու «գիւլաշ» բռնել ամեն մի տղի հետ, որ յանդոնում էր քար ձգել մեր բաղչէն, կամ մեր ծառներին ել-

նել, միթէ ոչ այսպիսի:

Ճիշտ է շուրջո տաս տասն հինգ հոգի էին, բայց բանը մինչեւ շպարցի ու դմբացի համեմեռց յետո, այդպիսի հաշիւներ էլ ովք է անողը:

— Չեռդ յետ բաշիր, ասեցի ես տղային, որ մատը աշրս էր կոխում, ձեռդ յետ բաշիր, կրկնեցի նորից ու տղայի ձեռին խփեցի:

— Ո՞ւմ ես զարկում, թողէր ես զրան պատեղ շինեմ, զոռաց տղան, յարձակման շարժում անելով:

Բայց ես ինքս առաջինը յարձակւեցի և խխոտ յաջսդ կերպով նրա մէջքից բռնեցի ու հէնց դառատան մէջ տեղը սկսւեց մի մենամարտութիւն երկուսի մէջ:

— Թողէր տեսնենք, որը կ'զարկէ, Զուրարը, թէ թաժէն, ասեց նա, որին տղերքը Մանուէլ էին ասում և աշակերտները, կուսզներիս առնելով լայն շրջանակի մէջ, հանդիսատես կանգնեցին:

Հակառակորդս ինձանից մեծ էր և շատ աւելի ուժեղ, բայց իմ առաւելութիւնը նրա մէջն էր, որ հակառակորդիս բռնել էի շատ յաջող և յարմար կերպով և ոչ մի հնարաւորութիւն չէի տալիս իրան գործ դնել իւր ոյժը ամրոց շափով. նա աշխատում էր գուրս պրօնել իմ ձեռից, որ ինձ նորից բռնէ, ես տշխատում էի

բաց շլողեն և, ինչքան հնարաւոր է, շուտով զետին խփել և ես նորից լարեցի բոլոր ոյժս ախոյնեանիս վեր բարձրացնելու համար:

— Տղերը, յեւ բաշեցէր, Զուրարը լնկնում է, առեց Մանուէլը և նոյն բոպէին թէ ես. թէ Զուրարը, ամենապինդ կերպով զրկախառնւած, զետին ընկանը ահագին թափով:

Զուրարը յաղթւած էր. նա հեւալով բզանեց յատակից:

— Գոգոր, հասիր, սպանեց ինձ:

Այդ բոպէին, տղաների շրջանը ճգելով, ներս ընկաւ մի մեծ և ուժեղ պատանի բանեց ուսիրցոց և այնպէս սկսեց թուի տալ. որ ես խորոյն բաց թողեցի իմ հակառակորդին և, բոպէապէս, ուորի կանգնեցի չորածս տեղից, որ վայր չնկնեմ. նոյն բոպէին Զուրարն էլ վեր թռաւ, նորից վերսս յարձակւեց:

— Եէ, այդ չեղաւ, ասեց երկուսիս մէջ տեղը թռնելով նա, որին Մանուէլ էին կոշում և ճարպիկ ձեռքերի արագ շարժումներով մեզ երերիս էլ միմիանցից բաժանեց: Եմօթ չէ, երկուսը մէկի դէմ Փրփոր, բոյիցդ ամաչիր, զու բոնմաների հետ կպիր:

Ես զարմացա այն հեղինակութեան վերա, որ սննէր տղերանց մէջ Մանուէլը: Հէնց որ նա

մէջ մասւ ու խօսեց, Գրիգորի, մհկաւորի ժպիտը դէմքին, թթի տակ փնթփնթալով առալաբիզից հեռացաւ։ Մնացած աշակերտները իսկոյն շրջապատեցին Զաւրաբին և մի կողմէ էին բաշում, մինչ սա նազուտուզ էր անում, նորից կպչելու ցանկութիւն էր յայտնում և բացատրում, որ եթէ ինրը վար լնկաւ, պատճառը իւր սայթարւին էր միայն։

Այդ իոկ բողէին գասատուն մտաւ Սիմոն խալֆան, տղերը մի ակնիթարթում ցրւեցին և բռնեցին իրանց տղերը։

— Սա ինչ բան է, առաց խոժոռած դէմքավ խալֆան, երբ տեսաւ տղերանց համախմբումը և իմ յուզուած դրութիւնը։ Այդպէս էր զիմաւորում ձեր նոր լնկերին, այդ անասուններն են միայն, որ ծեծում ու հալածում են իրանց հօտի մէջ մտած նորելին, իոկ բանական էակին դա վայել չէ, զաւակներս։ Աէր, սէր, սէր դէպի ձեզ նմանները—ահա այն ամենամեծ զգացմունը, որ մարդուն տարբերում է անասունից և նորա առարինութեանց պասկը կազմում։ Սարզիս Թոռունեանը ձեր նոր լնկերն է, տղերը, ձեր զարիք լնկերը, տաց խալֆան, ինձ ցոյց տալով, ուրեմն աւելի ես սիրով պիտի նայէք նրան։ իոկ դու, զաւակը, զարձաւ խալֆան դէպի ինձ, մի յուսահատ-

իլ, կսովորիս, իմ տղերը լաւ տղերը են, գրել կարգալ գու արգէն զիտես, զէ, ուրեմն, զնա և նստիր Մանուէլ Մանուկիանի մօտ, այ, այնուզգ։ Դէհ, տղերը, սկսենք։

Սիմոն խալֆայի վարժատունը մի գասատաւնից էր բաղկացած, աշակերտները ըստ իրանց զիտութեան շափին, երկու մասի էին բաժանեւած և տմբեն մի մասը առանձին նստարանների վերա միասին նստած։ Խալֆան երկու մասի հետ էլ միաժամանակ էր պարապում։ Առաջի մասին նա կարգալ գրել էր սավորեցնում, իոկ հրեկորդ մասին թւարանութիւն, կրօն և մասամբ աշխարհագրութիւն։ Երգեցողութիւնը, որ տղերանց ամենասուիրելի առարկան էր, երկու մասի հետ էլ միասին էր պարապում։ ամենասուիրելին էր մեզ համար երգեցողութիւնը այն պատճառով, որ ամեն անդամ այդ դասից առաջ կամ յետո, խալֆան պատմում էր մեզ զանազան բաներ մեր պատմութիւնից և մեր պատկերի հերոսական զարծերը ձայների և զեղեցիկ հնչյանների հետ էր կապւում մեր մորի և յիշուզութեան մէջ։

Թասերը հարցնելուց յետո, խալֆան սկսեց բայց կասատան մէջ և ասեց։

— Տղերը, հանեցէր տեսրակներդ, նոր երգ

պիտի թելադրեմ:

Աշակերտները տետրակները հանեցին և Սիմոն խալքան սկսեց երգի թելադրութիւնը:

Ես լարւած ուշադրութեամբ զիտաւմ էի այդ առաջին զատի բոլոր մահրամասնութիւնները, և ամենից շատ իմ ուշ ու միտքս գրաւել էր ինը խալքան: Արագ արագ նա բայցում էր զատատան մէջ և այնպէս եռանդոտ շարժումներով էր արտասանում երգի ամեն մի նախադասութիւնը, որ կարծես ստանաւորը ինքն է նոր հեղինակում ամենամեծ ստեղծագործական յուզման մէջ:

Իսկ նորա ֆէսլ... Տէր Աստւած ինչ էր բաշում այդ ֆէսի խելզ փունչը մեր խալքայի զբլիվին... և այս կողմն էր ընկենում և այն կողմը և հաւասարապէս զագաթի վիրայ էր ցրվում, իսկ մերթ ընդ մերթ, խալքայի ամենահռանդոտ շարժումների ժամանակ, այնպէս ուզգահայեաց էր կանգնում զլխին, որ ես սկսում էի կասկածել, մի զուցէ նա իւր հետ վեր բաշէ ֆէսը և մեր խալքան զլխարաց մնա:

Ֆէսի թռիշները այնքան զւժգին էին ու ստէպ, որ ես իմ այդ կասկածներս նոյն իսկ Մանուէլին հազորզեցի կամաց ձայնով:

Մանուէլը խօսրես բարեհաճառութեամբ ընդունեց և ի նշան իւր բարեացակամութեան սե-

զանի տակ մի հատ բռունցրով ծնկանո խփեց և այդ յառաջաբանից յետո սկսեց մեր կամացուկ խօսակցութիւնը:

— Գիտես, սադ աշխարհ որ ման զաս, այդպէս մարդ չես զտնիլ. առաջին դիտնականն է ու ազգառէրը:

— Ո՞րտեղից է եկիլ:

— Երզերումից է, թռւրբերի ձեռից է փախել. թռւրբերը որ տեսել են, թէ հայերը այսպէս լաւ մարդ ունին, աշբերը չէ վեցրել, ուղեցել են սպանել:

— Խօ շատ բարկացկոտ չէ, չի ծեծում:

— Բերանից մի չսո էլ չես իմանալ. ծեծող—տիրացուն ահս, մեր գահիծը նաև է:

Երբ խալքան երգը զրել տեղ, եղանակն էլ մի բանի անգամ ինըր երգեց և մեզ երգել տեղ, նա հրամայեց աշակերտներին տետրակները պահել:

Տղերը, այս երգերը, որ սովորում էր, լաւ պահեցէր մտրերդ, տանց նա, ձեզ պէտք կ'զան, շրաւոր մարդկանց զաւակներ էր դուք, անտուն ու անտէր մի շարբաշ աղգի որդիք. ձեր կեաների ընթացրում զուցէ շատ նեզութիւնների ու հալածանքների հանգիպէր. ահա այդ տիրութեան բոլիներին նորա ձեզ պէտք կ'զան. եր-

գելիս ձեր դարտերը կ'փարատւին մասամբ ու թեթևութիւն կ'զգար. երգելով աշխատեցէք, երգելով տարէք ձեր ցան ու դարտը, յուսահատւած մարդը միայն չի երգում, մի թողեէք ուրեմն, որ յուսահատութիւնը տիրէ ձեր սրտին, որովհետեւ ամեն մէկիդ համար շատ զօրծ կա անելու. ինչըան գուր գժբաղդ լինիր, ձեզանից աւելի գժբաղդնիրը կան, աւելի աղբաժները աւելի օգնութեան կարօտնիրը, ահա, բացի ձեր ցաւը հագալուց, այդ անօգնականներին էլ պիտի օգնէք. այդ գժբաղդնիրը, այդ անօգնականները ձեր կողքին են, ձեր հետն են, ձեր տարաբաղդ տաճկահայ եզրայրներն են:

Այստեղից տասը վերստ հեռաւորութեամբ, Տաճկաստանում, ապրում են մի բանի միլիոն, ասիւ կուգէ հազար հազարներ մեր տնբաղդ եղբայրներից, որոնց վիճակը վատից էլ վատ է, որոնք անասունների գրութեան են հասցրած. բերանները փտկած, ձեռքերը կապած, ոտքերը շղթայած. մինչգեռ մի ժամանակ այդ գժբաղդ ժօղովաւրդը ազատ կեանք է ունեցել և այնպիսի ազնիւ, մեծ զօրծեր է կատարել, որ պատիւ ու պարծաներ է ողջ մարդկութեանը:

Մեր նախահայր Հայկը ազատ կնաց համար միայն իւր որդիներով ու թոռներով համարձակ

գուրս եկաւ Բէլ անունով հոկա թագաւորի զէմ և թէ իբան Բէլին սպանեց, թէ զօրքը կոր ի զլուխ կոտորեց. հայոց գերբերի սպարապետ կարմիր Վարդանը, մեր սուրբ հաւատը պահպանելու ու պաշտպանելու համար, փարբիկ զօրքով, զէմ զրեց Յազկերտ պարսից զօրաւոր թագաւորի բիւրաւոր ուժին, որ Հայաստան էր խուժել քրիստոնէութիւնը ջնջելու համար, և կոր ի զլուխ կոտորեց կոապաշտ թագաւորի անհամար զօրքը. մեր ողջ պատմութիւնը, զաւակներու, տեսնում էր, կուի է եղել մեր ազատութեան ու հաւատի համար և այդ կուի մէջ մենք տմեն բան զոհ ենք բերել, թէ թագ, թէ երկիր և թէ ժողովուրդ և մնացել ենք բշոր ու մենակ. բայց ոյժը շատ ուրութեան ու զօրութեան մէջ չէ, ոյժը ճշմարտութեան մէջն է, որին պաշտպան պիտի հանդիսանանք մենք միշտ:

Առանց շեգելու մեր պատիրի ուզիից մենք պիտի գեանիր այդ ճշմարտութեան շաւզով, զոհելով ամեն ինչ և, լիայոյս եմ, մի օր կ'յաղթանարկէ ճշմարտութիւնը, կ'խորտակւի շար ու կոսիտ ոյժը, որ ներկայումս կաշկանդում է, ձմռան պիս, մեր երկիրը և մեզ համար ևս զարուն կ'զայ. Զաւակներու, առանց յուսահատութեան աշխատել ու ապրել ազգի համար—այ ձեր գեղեցիկ ապագան:

Եյ՞, զաւակներս, եղէք ծառա ձեր հայրենիաց, այս է իմ խնդիրս ու խրատս ձեղ:»

Ես մնացի խալֆայի մօտ համարեա մի ամբողջ տարի և նա այս խօսքերսվ էք վերջացնում միշտ երգեցողութեան դասը: Ես անդամին էլ այդ խօսքերը ասելուց յետո նա դուրս գիտց դաստից:



## ՏԻՄՈՅԱՆ ՅՈՒՆԵՆՔ

Սիմոն խալֆայի ետեից գուռը նոր էք փակւել որ ներս մտաւ տիրացու Յունանը, կաշէ կազմով հաստ ժամագիրը երկար ձեռքին:

Առանց աշակերտների վիրա նայելու՝ ծանր, յամրմնչաց բայլերսվ նա մօտեցաւ իւր աթոռախն և հանելով զրպանից գտնաւոր թաշկինակը, նախ մի բանի անդամ խփեց նորանով և մարքց աթոռի և աթոռի առաջ զրած սեղանի փոշին և ապա, փեշերը խնամքով վեր բաշելով, նոսեց իւր տեղը, բացեց ժամագիրը, մատը դրեց մի տողի վերայ և նոր միայն ձգեց մի կասկածոտ ու զննող հայեացը աշակերտներին: Վերջինները, որ Սիմոն խալֆայի գնալուց յետո, մի բանիսը տեղերիցը վեր էին կացել, մի բանիսը հանել էին և ուտում էին հետները բերած նախաճաշիկը իրար հետ խօսելով և վիճելով, Յունանի ներս մտնելու պէս՝ սկսեցին և մէկից դաստան մէջ

տիրեց մի այնպիսի մեռելալին լուսւթիւն, որ  
ճանձի բղզայի անգամ լսելի դարձաւ:

Սա զասամիջոց էր և տիրացու Յունանը ներս  
էր եկել իրրի «պստի խալֆա» թէ կարգը պահ-  
պահելու և թէ նոր կարգալ-գրել սովորովների  
հետ կրկնութիւններ անելու: Մի փոքր այսպէս  
հոկելոց յետո, Յունանը տեղից վեր կացաւ, մօ-  
տեցաւ փոքր աշակերտներին և սկսեցին կրկնու-  
թիւնները այս ձեռով:

—Ասիկ իի՞նչ է, հարցնում էր տիրացու Յու-  
նանը երգելով և գնելով իւր երկար մատը գըր-  
քի մի որեիցէ տառի վերա:

—Անայր է, պատասխանում էր աշակերտը  
նոյնպէս երգելով:

—Այր մալ գտիր ատաշեմ, հարցնում էր նո-  
րից տիրացուն, մատը գրքից վերցնելով. եթէ ա-  
շակերտը գտնում էր այդ նոր այրը, տիրացուն  
բէն էր հարցնում, եթէ ոչ, նա խփում էր քանո-  
նով աշակերտին և ինքն էր ցոյց տալիս այսպէս և  
շարունակում էին կրկնութիւնները սինչեւ ալփա-  
րէտայի վերջին տառերը: Այսօր էլ մի քանի աշա-  
կերտների հետ այդ ձեռվ կրկնութիւններ անե-  
լուց յետո, տիրացուն եկաւ և իւր տեղը նստեց  
ու սկսեց նորից կարգին հոկել:

Մի ձեռումը բռնած հաստ քանոնը, նա մերթ

ընդ մերթ իւր կատկածոտ և գննող աշքերը վեր  
էր բարձրացնում նարեկից և վայ էր, թէ տիս-  
նում էր մէկի շարութիւնը, բարձր խօսքը կամ  
եւանդոտ շարժումը. կաղալսվ, բայց յամի ու  
հանգարտ բայլերով, ինչպէս մի որսորդ, որ զի-  
տէ, թէ որսը իրանից չի փախչելու, նա մօտե-  
նում էր մեզաւորին և այնպիսի հարւածներ էր  
հասցնում նորա թաթերին ու թիկունքներին, որ  
զպացնի ու գմբոցը ոզչ դաստաւնին էր բռնում:

Ես էլ այդ օրը կերա տիրացու Յունանից ինձ  
հասանելիքը և այդ խոկ օրւանից իմ մէջ ամրա-  
ցաւ ու մնաց այն թշնամական զգացմունքը, որ  
տածում էին գէպի նա բոլոր տղերը:

Հիմա, երբ նկարտպահած անցած զնացած  
օրերի զլիսից թռել ու անցել է տարիների մի  
երկար շարք, երբ ախորժաներով եմ մտարերում  
նոյն խոկ այն, ինչը ինձ այնքան ցաւ էր պատ-  
ճառել և արտասուրք քամել աշբերիցու, ես գտնում  
եմ այդ խոտասիրտ մարդու անգժութեան և ան-  
որտոթեան պատճառները:

Վերին տստիճանի անընդունակ և բթամիտ  
տիրացու Յունանը սոսկալի ծեծ ու քարչի տակ,  
իւր ուսման վարձը մուրալսվ, անքուն զիշերներ  
զբքերի վերա անց կացնելով, իւր կոտրւած ոտ-  
քի գնով մի քանի այր էր սովորել հին խոլ-

փայտական գառընթացից։ Դա այնպիսի մի յազմահակ էր իւր համար, որ նա իրան այլիս իրաւունք չէր համարում շարունակել ու պահպանել սովորական յարարերութիւնները իւր շրջապատօնների հետ, որպէսզի շստորացնէ իրան և իւր զիտութիւնը։ Այսպէս նա առանձնացել էր և կտրւել բոլորովին իւր շրջանից և իւր նմաններից։ Այս զրութեան մէջ, եթէ շրջապատօնների վերաբերութիւնը թշնամական է, ծագրող, ոչ բարեցալկամ, մարդս կառկածու է դառնում։ Բայց այլ վերաբերունք կարմղ էինք ունենալ մենք, երեխաներս, զէսի մի տարօրինակ մարդ, որ բացի բժամիտ մեծամտութիւնից չուներ ոչ մի այլ մտաւոր առաւելութիւն և բացի արհամարանքից, չուներ մի այլ զգացմունք զէսի մեղ։

Եւ ահա մենք էլ մեր կազմից ատում էինք տիրացու Յունանին մեր մատադ սրտի բոլոր զօրութեամբ և եթէ զտնում էինք որիէ միջոց անպատիժ կերպով նորան վիրաւորելու, մենք այդ գործ էինք զնում նոյն բաւականութեամբ, ինչպէս ինքը մեղ ծեծում ու բաշում էր. Յունանը մի ոտից կազ էր և այդ էր ահա մեր ծագրի առարկան. անունը «Ճռփալ զի» էինք զրիլ և ահազին բաւականութեամբ այդ անունը երեսովն էինք տալիս, երբ ձեռքից պրծնելու հնար էինք

գտնում։ Այդ անունից նա կատագում էր այնպէս, ինչպէս ստանան ազօթքից և վայը եկել էր մեզ տարել, թէ մէկն ու մէկիս բռնէր. զրէժը լուծում էր անհկարազրելի անզթութեամբ։

Եւ ահա այդ փոխազարձ թշնամութիւնն էր պատճառը, որ Յունանը խուսափում էր մեզ հետ պատահելուց վարժատան շինութիւնից զուրս, փոզցում, կամ նոյն իսկ վարժատան պարտիզում։ Պատերը վերջացնում էինք թէ չէ, նա շրանում էր և մեզ այլիս չէր երկում. այդ զէսքերում մենք նայում էինք, արգեօր չենք կարող վնասել, ոչնչացնել Յունանին պատկանող սրիցէ առարկան. պատառում էինք նարեկի թերթերը, եթէ կարողանում էինք ձեռք ձգել զիրքը, որ շատ հազիւ էր պատահում, բանի որ Յունանը միշտ զիրքը ձեռքին էր մանե գալիս, վախցնում էինք և կորցնում Յունանի կոնդորաները (հոգաթափի նման ոտնամանեները)՝ եթէ պատահում էր, որ կոնդորաները, զռան առաջ հանելիս, նա նախատեսնեակին էր թողնում և իւր սենեակը չէր տանում հեռատեսութեամբ։ Օհ, ինչ բաւականութեամբ էինք մենք զիտում այգու ծառների տակ թաղնուած, թէ ինչպէս Յունանը նզովներով իւր կօնդորաներն է պառում և չի գտնում։

Եւ ահա տիրացու Յունանի մշտական կատ-

կածոտութիւնը և ահը աշակերտներից, թէ նոր ծաղը են անելու, նոր դաւ են նվաճելու զէմը, քնականաբար ատելութեան և վրէժինդրութեան էր փոխւել. և քանի որ ինը իւր ողջ կեանը ընթացում միայն ճնշումների էր ենթարկւել, նորա սիրոն ու զգացմունքները խսպառ բարացել էին և իւր ատելութիւնն ու վրէժինդրութիւնը պատիժների ժամանակ նա արտայայտում էր այնպիսի անդիմութեամբ. որ կարծես Ղազար խալֆայից իւր կերած ծեծն ու բարչը նա վերադարձնում էր աշակերտներին կրկնակի շափերով:

Իւր բժամիտ մհծամտութեան չնորհիւ նա իւր լեզուն էլ էր փոխւել և խօսում էր իւր առանձին զբարարը, բայց այստեղ տարբերութիւն էր գիտում մեր և խալֆայի մէջ, մեզ հետ միշտ աշխատում էր խօսել անհասկանակի զբարար զարձածներով, խալֆայի հետ այն ժամանակ էր միայն զբարար խօսում, երբ խօսակցութիւնը մեզ մօտ էր կատարում, կամ երբ մեզ ամրաստանում էր խալֆայի առաջ մեր յանցանքների համար:

Բայց կային երկու արարած, սրոնց առաջ պատռում էր այն հաստ ըովը, որ ծածկում էր տիրացու Յունանի մարդկային զգացմունքները.

զբանից միկը իւր պառաւ մալրն էր, միւսը-կառան: Մենք սիրում էինք զիտել այդ մեզ զարմացնող ընրուշութեան արտայայտութիւնները: Ուսումնաբան վազ զալիօ՛ մենք մտնում էինք ծառի բնի ետել, Յունանի տան լուսամուտի առաջ, (տիրացու Յունանը մօր հետ ապրում էին ուսումնաբանին կից խրճիթում) և, չունչներս պահած, ամենամեծ հետարբրութեամբ ներս էինք նայում, և ինչ էինք նկատում. ժամանակ առ ժամանակ միանգամայն անհաւատալի բան: տիրացու Յունանը մեզմութեամբ խօսում էր իւր մօր հետ և խօսում էր մեր, սովորական լեզով և, որ ամենաշազարմանալին էր,—մի մի անգամ ժպառում էր, այն ժպառում,—մի բան, որ ոչ որ, երբէր չէր տհսել նորա երեսին:

Խոկ կատուն... կատունին Յունանը սիրում էր իւր երեխացի պէս. երբ կանուխ էի զալիս ուսումնաբան, ես ականատես էի լինում, թէ ինչպէս Յունանը, նստած լուսամուտի մօտ իւր անբաժան նարեկը տուածը, խազ է անում ժպիտը զէմբին իւր «վանիկի» հետ: Եթէ կատուն մի թիշ իրանից հեռանեւմ էր, Յունանը, ամենամեծ մտահոգութիւնը երեսին, ընկնեսում էր իրանց տան ու վարժատան անկիւննեները ու կատուն պրորում. այդ բոպէներին նա չէր լսում նոյն իսկ

մեր, աշակերտներիս, ծաղրն ու վիրաւորանքը:

Ահ, անցած զնացած օրերի հրաշալի լիշատաներ, ինչպիսի փայլուն զայներսով, ինչ պայծառ լսուի մէջ էր երեսը մեզ, երբ կեանիրի զարունը անց կտցնելուց յիտո, մենք մեր ձմռանն ենք սպասում ուժասպառ ու յունետես. ինչո՞ւ է այդպէս թունդ առնում մեր սիրտը երջանկութեան բարախումով, երբ մի իր, մի չնչին խօսք, զարձնում է մեր հոգու աշրը նորից գէպի անցելը, գէպի մանեկութեան ու պատանեկութեան օրերը, արգեօր նշ թախծալի գիտակցութիւնը, այն անհոգ օրերն ու երջանեկութիւնը, որին մենք այնպէս ազան պարում ենք ապարդին, արգէն ունեցել ենք և անդիտակցաբար անց կացրել: Ահ, սիրելի խալֆա, բո բարի, ծիծաղկոտ աշրերը, բո բազցը լի անկեզծ զգացմունքով խօսքերը, ամբազչ բո զգայուն, բնրուշ անձնաւորութիւնը, բո զիկցիկ անդաստանը իւր զրբեռով, զրավ ու երգերով, իւր ծառերով, զրունիներով, անկեզծ ծիծաղկոտ ու անհոգ խազերով կանչում ու հրապուրում են ինձ իրանց, աւազ, արգէն անհասանիլի հեռաւորութիւնից և սիրտս յօւղում է անցած երջանեկութեան թախծալին բարախումով և շրանսոմ է աշրից այն ու կէտը նոյնիսկ, որ կտզմում էր մեր կեանիրի մէջ տիրտցու Յունանք:

Այն, ժամանակի զործած հրաշալի զակտնիք... ես ներուղամտութեամբ ու անյիշաշարութեամբ եմ նայում հիմա այն մարդուն, որ այներան արտասուր բամեց մեր աշրերից և այներան շատ ժամեր զողացու մեր հրաշալի օրերից...

Բայց ինչո՞ւ էր սպահում նրան խալֆան, միթէ չէր տեսնում, թէ որ աստիճան է տանջում այդ մարդը իւր սիրելի աշակերտներին:

Այն, խալֆան այդ չէր տեսնում, իսկ մենք ինքներս սշինչ շէինք ասում. նա պահում էր Յունանին և նայում էր նրա վերա իրրի մի անբազգ ու անելուսնետկ էակի, որին նիւթապէս և մտաւոր օժանդակութեամբ օգնելը իւր պարտերից մէկն էր համարում, իսկ մենք կաւում էինք Յունանի հետ մեր միջացներով: «Փամանակին այնպէս էր, որ ամեների աշքում «պստի խալֆա» Յունանի վարմունքը մեզ հետ բնական էր երեսը և մենք երբէր խալֆային Յունանից շէինք զանգաւում, թէպէտ հիմա, երբ արգէն վայուց են չոփիացել Յունանի ձեռքով թափած արտասուրները, ես պարզ տեսնում եմ, որ եթէ տիրտցու ամեն անզթութիւնը մենք խալֆային յայտնէինք Յունանը մեր վարժատան մէջ երկար չէր մնա: Ուզիկ է ինը Սիմոն խալֆան էլ պատժել զիրեր, բայց ոչ երբէր անզթութեամբ ու

անարդարութեամբ:

Բայց անցնեմ պատմութեանս:

Գեռ նոր էր տիրացու Յունանը իւր տեղը նստել աջ ու ահեակ քանոնի հարւածներ բաժանելուց յետո, երբ նրա սուր հայեացքնընկաւ այնակ, ուր նստած էր Գրիգոր Սեպան անունով աշակերտը. գա մի 15-16 տարեկան տղա էր, լայն թիկունքը, մեծ ու զգոտ ձեռքերով ու սաստիկ ուժեղ կազմւածքով. մեր վարժատան փայլը վանի էր գա և իւր ոյժի համար մեծ պատիւ ազգեցութիւն ուներ վարժատան: մէջ, աշակերտների մէջ միայն Մանուէլին էր որից վախճնում էր այդ տղան, թէպէտ Մանուէլը նորանից թէ տարով փարք էր և թէ շատ տւելի թռյլ. նա Մանուէլի լաւ ընկերներից էր և բանի որ Մանուէլին տիրացու Յաւնանը ամենից շատ էր տառմ, Գրիգորն էլ Մանուէլին հացած բաժնից բաւականին ուտում էր, այդ այն Գրիգորն էր, որ սուզեց խառնել իմ և Զուրարի մենամարտութեան մէջ:

Գրիգորի ամենասուրելի սովորութիւններից մէկը փայտ տաշելին էր, հէնց որ ազատ ժամանակ էր գտնում, գրապանից հանում էր գանակը և ըսկում էր տաշել կամ փայտի կտորտանը, կամ եթէ փայտ չըր ճարւում, սեղանի ոտը կամ նըստարանի տախտակը:

Ահա այս անգամ՝ էլ նա, առանց նայելու, որ արդէն զրաւել է իւր վերա տիրացուի ուշագրութիւնը մտազրակ կերպով տաշում էր իւր փայտերը:

— Գրիգոր Սեպան, առեց տիրացուն, հաստավիզգ Գրիգոր Սեպանց, այդ ինչնիվ ես զրագեալց սամի՞ շինես պարանոցիդ համար. շինեազի հաշեաց ժամն աշխատանաց բու անասնական. այդ ասելով տիրացու Յունանը քանոնի ձեռքն տառ. նոյն բոպէին Գրիգորը պահեց իւր փայտն էլ, գանակն էլ և արակ շարժումով սեղանի վերայից տաշեզը սրբեց:

Ինչ էր պատճառը, որ այս անգամ տիրացուն շօգտւեց առիթից և ծանալարհարդից բաեռնով դէպի Գրիգորը, գտ մեզ բոլորիս համար անյացու մնաց և մենք զարմացած վիշ եղանք, որ տիրացուն նորից խօրասուզւեց իւր ընթերցանութեան մէջ: Սակայն մի բատէ շանցած մենք հասկացանք Յունանի խօրամանի զօրախաղը: Երբ Գրիգորը ապահովւած, նօրից հանեց զանակն ու իւր փայտերը սկսեց այս անգամ սեղանի տակը տաշել, տիրացուն, որ այդ բոպէին էր սպասում և աշըրի տակից Գրիգորին նայում, կամաց ու անձայն կատւի նման կուշ եկած, մօտեցաւ Գրիգորին և բանոնի այնպիսի երկու հարւած տւեց Գրի-

գորի ձեռներին, որ փայտերն էլ, դանակին էլ խեղճի ձեռքից վար ընկան և խեղճ «փալեւանիը» սաստիկ ցաւից ձեռները բերնին մօտեցրեց:

— Թր ոչ րիցէ ունկամբ. րիցէ թիկամբ, ասեց յաղթական ձայնով տիրացուն և վերապարձաւ տեղը:

— Լիայսոյ եմ. շարունակեց նա նստած տիզից, որ այս նւագ հաստ մորթի զզաց զիրտական հարւածն փայտին:

— Տեսնում ես, տսեց ինձ ոչ բարձր ձայնով Մանուկը, դա մեր դահիճն է. չի ծհծում մորթում է:

— Ինչ անխիղճ դարկեց, խեղճի մատները թափից, ասեցի ես փոփոալով:

— Բա ինչու են անօւնը «ժողովալ զե» զրել, թէ դա մարդ է. աւելի բարձր տսեց Մանուկը էլ չզիտեմ զիտմամբ թէ սիսալմամբ:

— Բեհեղերուզի բաժին, սանդարտմետի ցանկալի հիւր զու, անօրէն Մանուկը Մանուկիան, ոչ տեսանիս զիս. տուր ինձ սլատասխան, ոչ տեսանիս զիս:

Մանուկը լուռ նստած էր:

— Ես հարցանեմ քեզ, ոչ տեսանիս զիս, զուաց Յունանը իւր խեղդած սպառնական ձայնով և տեղից զեր երաւ:

— Տեսնում եմ, տիրացու. տեսնում եմ:

— Ապա ընդէ՞ր խոնդարես զընթերցանութեանն իմ յոյժ բարձր ձայնով և անպատճառ ձհով:

— Ես ոչինչ չեմ խօսում, տիրացու:

— Ապա ուրեմն ականջը իմ խուլ են և աշը ունքն իմ կոյր և կամ զրադարձնմ զընդ:

Մանուկը լուռ իւր զատաստանին էր սպասում:

— Նորեկիգ, Սարգիս Թոռաւնիան, չէ խօսեալ հետն քս ամբարիշտն Մանուկը, ինձ ուզգեց հարցը Յունանը, բայց ես էլ լուռ մնացի:

— Ա, յոյժ բարի, յոյժ բարի, տեսանեմ, զորդէմն ուսուցչաց ձերոց կուեալ էր յոյժ պինդ զաշինք մի:

— Եկ մատիր, յանկարծ զոռաց ինձ նոյն խեղճած ձայնով տիրացուն, առ զայս բանոնն և տասն անգամ հարկ ափին գեհենոյ բաժին զաշնակցին քս, որ շասագունի:

Ես տեղս անշարժ մնացի և Յունանը, կարձելով թէ ես իրան չեմ հասկանում իւր նախագասութիւնը աշխարհաբար կրկնեց:

— Արի հոս, տգէտ անասուն, առ էս բանոնը և զարկ Մանուկի ձեռքին էնտէս, որ եփած տակի պէս կարմրի:

— Տիրացու, ասեցի ես, թողութիւն տուր մեզ:

—Ա, ասոտ հայցէր զիմովութիւն, անդ տաք ինձ զանունն անպատկառ «Ճոփալ գեի», ոչ, չիք թողութիւն անօրինաց. Եկ, առ զբանոնն:

—Ես շեմ կարող, չեմ ուզում, ասեցի ես արտաւակալ աշքերով, ինչու պիտի ես խփեմ, ով ուզում է, թող նա խփէ:

—Միրեմ զպարտութիւն, սիրեմ զ'պարտութիւն, ասեց տիրացուն իւր փորք աշքերի շար հայեացքով չափելով ինձ ոտից մինչև զլուխ, չուզես հպատակել հրամանին մեծաց, չուզես կատարել զիմ պահանջն օրինական, յոյժ բարի, անցիր և դռւ անցիր ի շարս տղիտաց, ի շարս թըշնամեաց իմոց:

—Բենուից եմ ականչ բո պատին. վերջացրեց նա սպառնալից ձայնով:

—Հաստափիզ անբան Գրիգոր, առ զբանոնն և տուր տասն հարւած ափին Մանուէլի և տասըն հարւած ափին տպտամբեալ ընդդէմ մեծաց նորեկ անօրինի Սարգոսի Թոռունեան: Տես, թէ կամաց զարկես, ինքդ կ'ճաշակես, տեղացրեց աշխարհաբար Յունանը:

—Տիրացու ձեռքերիս Ենալս զարկեցիր որ էլ բանոն շեմ բռնում, ես ինչպէս զարկեմ:

—Եւ դու և դու լեզու ելար, անբարբառ աւանակ, բարի, յոյժ բարի, տեսանենք, ով զզա իմէնց:

Այս ասելով նա ծալեց նարեկը, տեղից վերելաւ, թէկը վեր բաշեց և բանոնը ձեռին մօտեցաւ նախ Մանուէլին:

Սփդ, ասեց նա կարճ ու կտրուկ:

Առանց երկարացնելու Մանուէլը կանգնեց և ափը պարզեց տիրացուին. վերջինս տարաւ բերեց և այնպէս մի հարւած տւեց այդ փոքրիկ ձեռքին, որ շխկոցը սենեակը բռնեց և ձեռքի մատներն ու ափը կարմբատակեցին. բայց ձեռքը յետ չ'բաշեց. իջաւ երկրորդ հարւածը, երրորդը և այլի մինչև տասն և մէկ երրորդը և Մանուէլի ձեռքը արեան զայն ստացաւ:

—Տիրացու տասի տեղը, տասն և մէկ եկտու, մէկը վերադ պարտը մնաց, տասց լուրջ ու հանգստ Մանուէլը և առանց մի ցաւի նշան երեսի վերա, իւր տեղը նստեց. միայն նորա գեղեցիկ կապոյտ աշքերի գոյնը հիմա սեին էր տալիս և դա նշան էր, ինչպէս յետո ես տեսաւ, Մանուէլի ամենամեծ յուզման:

—Արա, զինչ զայ ձեռքից բո, պատասխանեց Յունանը և գնաց դէպի Գրիգորը:

—Աման, տիրացու ջան, ազաշեց Գրիգորը, ձեռս ցաւում է, ներէ այս անգամ:

—Չեռքդ, զոռաց տիրացուն և այնպէս խիստ զարկեց Գրիգորի զլախին բանոնի սուր կողքով,

որ սա անմիջապէս մի ձեռքով զլուխը բռնեց,  
իսկ միւսը ուղղեց զէտի անողում գահիճը, որ  
նորից պիտի զարծեր խեղճի զլխին. և հարւած-  
ները սկսեցին տեղալ կանոնաւոր ու մէկ մէկ.  
ամեն հարւածից յետո Գրիգորը ձեռքը բերնին  
էր տանում, վերան փշում, իսկ տիրացուն, ներ-  
րին հաճայրը երեսին, հարւած տալուց յետո  
սպասում էր ձեռքի պարզելուն:

Երբ սրա հետ էլ վերջացրեց, տիրացուն  
ինձ մօտեցաւ նոյն կարճ պահանջով:

— Ձեռք:

Ես էլ ձեռ երկարացրի և նոր միայն տե-  
սա, թէ որ աստիճանի շար ու անխիզն է տի-  
րացուն, հչեց առաջին հարւածից այնպիսի ցաւ  
զգացի, որ կարծես նոր հալած իւզ թափեցին...

Տիրացուն իմ զատաստանը նոր էր վերջա-  
ցրել, երբ կից սենեակից խալֆալի ոտքի ձայ-  
նըն եկաւ, այն ժամանակ նա դրեց բանուը ոե-  
զանի վերայ և ասեց, լւա ձեզանից ոչ խօսք  
սիրո, այլ բանն թշնամական և անունն խայտա-  
ռակ, այսուհետէ զգուշ լերուք յանոպուտ ըրթ-  
մնչանէ և ի բամբասանաց խնայեցէր զեղու, զի  
զշունչ զալտնի՝ զատարկ ոչ անցցէ և բերան  
ստախոս սպանանէ զանձի:

Այս տաելուց յետո Յունանը իւր պարտը

կատարած մարդու հզարտ և ինքնահաւածն ար-  
տայայտութիւնը երեսին գուրս գնաց:



## Կ Ա Ր Ի Ւ

Իմ ափերս էլ ընտելացան տիրացու Յունանի քանինի հարւածներին ու կոշտացան, իմ թիկունին էլ սովորեց ցաւի և անզգա դարձաւ տիրացուի կոշտ ու ոսկրոս բռունցըներից, իմ մէջքն էլ բազմիցո արժանացաւ նորա «օրհնեալ» փայտի շփումները ընզունելու, քանի որ ամեն օր դաստան մէջ, երբ ներս էր զալիս Յունանը կրկնուզութիւններ անելու և կարգ պահպանելու, միշտ կրկնւում էր այն, ինչ նկարագրեցինը նախընթաց զիւի մէջ:

Բայց շնայած այս անսիրտ մարզու բոլոր անդիմութիւններին, որ կարող էին շրացնել որեւ ցանկութիւն երկրորդ անդամ ուար կոյսել ուսումնաբանի շէմքը, ես, ինչպէս իմ միւս բուր ընկերները, ուրախութեամբ էի վազում զէպի վարժատուն: Պատճառը միայն ընկերներո շէն, որոնց հետ ամենակարճ միջոցում ես լաւ

ծանօթացա և մօտիկացա, պատճառը մեր աղտա և ուրախ խմբական խաղերն էլ չէին, որ անում էինք մենիր Յունանի ձեռքից պրծնելուց և վարժատան պարտէզը գուրս գալուց յիտո, պատճառը լինքը մեր խալֆան էր գլխաւորապէս:

Խալֆան մեր վարժապետը չէր միայն նա մեր ընկերն էր, մեր բարեկամը:

Նա սիրում էր երեխուաններին իւր սիրաշատ որտի բոլոր զօրութեամբ, և որովհետեւ զգացմանների անկեղծութիւնը երեխաններն աւելի լաւ են ըմբռնում և որոշում, քան նոյն իոկ մեծերը, ուստի մենիր մեր կոզմից պաշտում էինը խալֆային, և ինչպէս չսիրէինը. նա այնպէս պարզ հասարակ ու հասկանալի ձեռվ էր խօսում հետներս, այնպէս ինքը մեզ հասկանում էր և այնպէս մեր բարին էր ուզում: Եւր բարեացակամութեան ու անկեղծութեան միջոցով նա շատ աւելի բան էր մեզ հասկացնում, քան Յունանի պէս զիտնականները իրանց բանոններով ու փալախաններով:

Բայց պատահում էին օրեր, երբ մենիր կորցնում էինը խալֆային, — նա մեզ մոռանում էր:

Դա այն օրերն էին, երբ սահմանից նրա մօտ ինչ որ խորհրդաւոր, սակաւախօս ու խոժոռ դէմքերով մարդիկ էին զալիս: Եյզպիսի ժամանակ

Նա փակւում էր օրերսվ այդ մարդկանց հետ և  
մենք մնում էինք տիրացու Յունանին մատնած։  
բայց եթէ հետներս էլ լինէր խալֆան այդ օրերը,  
նա այլիս առաջւա խալֆան չէր. սա-  
կաւախօս, զգային, բարկացիոտ և վերին աստի-  
ճանի ցրւած, նա մեզ հետ նստած, կարծես մեղ  
չէր նկատում։ Բայց շուտ էին զնում այդ բաշ-  
րդաւոր, փափախաւոր, արեգակից ու ցրտից խան-  
ձւած երեսներով մարդիկը և նորից սկսում էին  
մեր լաւ օրերը։

Այգպիսի օրերը գասերից յետո նո գուրս էր  
բերում մեզ այդին ման զալու և խրատական ձե-  
ւով բաներ պատմելու մեր ազգի անցեալից ու  
ներկայից։

Այստեղ առանց բաշելու մենք նորան էինք  
զիմում մեր կառկածները փարատելու, մեր կար-  
ծիրները ստուգելու, և նա լուսում էր մեզ ժպիտը  
գէմբին ամենամեծ ուշագրութեամբ և մեզ պա-  
տասխան էր տալիս ամենահասկանալի ձեռվ։ Մեր  
ամենացանկալի բաւականութիւններից մէկը-բա-  
զարի բերդը բարձրանալն էր, որ ամեն շաբաթ  
օր մենք կատարում էինք խալֆայի հետ ամենա-  
մեծ ձշութեամբ։

Դա Բագրատունիների Ճամանակ շինուած մի  
մեծ բերդի մնացորդ էր. բերդին կից շինուած էր

և եկեղեցին. եկեղեցու միայն մի մասը կար, իսկ  
միւս մեծ մասի մամուապատ քարերը խափւած  
էին բերդի շուրջը՝ համարեա ամբողջ սարի տա-  
րածութեամբ։ Այդտեղ, եկեղեցու կանգուն մնա-  
ցած խորանի մէջ, միշտ այսպէս հով էր, այն-  
պէս լուս ու խորհրդաւոր... Կարծես սրբերի  
ոգիները համախմբւած, հսկում էին այդ սգաւոր  
վայրի լուսվթեան ու խաղաղութեան վերա։

Սուանց Սիմոն խալֆայի մենք չէինք յանգդ-  
նում մանել այդ խորհրդաւոր սրբավայրը, բայց  
նորա հետ մենք համարձակ էինք ու բաշ և խո-  
րանում ազօթելուց յետո, մենք դուրս էինք գա-  
լիս և շարիւմ Սիմոն խալֆայի շուրջը բերդի  
թափթփւած մամուապատ քարերի վերա։ Մեր  
առաջ բացւում էր Փոքր Կովկասի լեռնաշբաժան  
օտարստի գծերով, իւր գոյնդպոյն սարերով, տեղ  
տեղ ձիւնապատ դագաթներով, իւր հրաշափառ  
երկներով. և խալֆան ցայց էր տալիս մեզ այս-  
տեղից, թէ որ կազմն է մեր Մասիսը, ինչ հո-  
վիտներով են հօսում Աբարտն ու Ախուրեանը, նր-  
անեղ են գտնուում Անին, Կարինը, Կարուր, եղմի-  
տինը, Վանը, Մուշը և այլ մեր հին ու նոր  
բազարները, զիւղերն և այլ նշանաւոր վայրերը  
և յետո անցնում էր այդ տեղերի պատմութեա-  
նը, նրանց մէջ կատարւած մեծ պատմական իրո-

զութիւնների նկարագրութեանը:

Օհ, պատահեկութեան օրերի բուռն անկեղծ զգացմունքներ, որ մարտիրոսանալու էր մզում մարդուն առանց տատանման, ինչնւ ինչնւ մարդու մտքի և մարմնի հասունութեան օրերում մի անդամ ես շեր այցելում նորան, որ կարողանա սարերը շուռ տալ, շարէ արմատով երկրից գուրս վանել և անհնարին հեարաւոր դարձնել... Խալֆայի պատմութիւնների ժամանակ մեր աշերիմէջ մերթ անկեղծ արտասուր էր երեսում, մերթ երջանկութեան կայծեր փայլում... և ինչպէս պատրաստ էին զոհւել, լինել այն հերոսների տեղը, որոնք այնպէս անձնւիրութեամբ մնուի էին իրանց հայրենիրի ու գաղափարի համար... Մանուկ, սիրելի Մանուկ, եթէ կենդանի ես, ներիր ինձ, խոկ թէ արդէն զոհւել ես բո սիրած զործին, հաւատարիմ արածդ ուխտին, եթերի միջից խոժոռ մի հայրի վերաս... զու հերոս էիր, ես մի հասարակ մահկանացու և իմ ոչճը չ'պատեց...

Ահա, մի այդպիսի օր էր, երբ ես և Մանուկը ուխտեցինք կեաներս զոհել մեր թշւառ հայրենիրի համար:

Սիմոն խալֆան նստած բերդի աւերակների մի մամուռալտ բեկորի վերա մեղ ցոյց էր

տալիս այն տեղերը, որտեղ Տուգրիլ-Բէկը այներան անմեղ մարդ զօհեց խամբին և զողոցնուն ձայնով պատմում էր այդ քսամնելի սրածութեան բոլոր մանրամասնութիւնները: Սիմոն խալֆայի կողքին, ինչպէս միշտ, այս անգամ էլ նստած էր անբաժան Մանուկը, նորա մօտ-ես:

Մանուկը լսում էր խալֆայի պատմութիւնը ակնապիշ ու լուռ, նորա խոր զեղեցիկ կապոյտ աշբերի փայլից ու թախծագին հայեացրից երեւում էր, թէ սրբան բազմազան զգացմունքներ էին ալեկուծում այդ փորբիկ սիրու... և երբ խալֆան պատմեց վերջացրից իւր պատմութիւնը, Մանուկը, արտասուրն աշբերին, կամաց զիպատ ինձ, մենք տեղերիցս վեր կացանք ու զնացինք խորաներ: Լուռ էր այնտեղ և երբ ներս մտա՞ր խորհրդաւոր սրբավայրը՝ ահ և ակնածութիւն տիրց իմ սրտին:

— Սարօ, ասաց ինձ Մանուկը, ձեռս բռնելով, զու իմ ամենամօտ ընկերն ես, արի երդւենք այս մեր պապերի շինած բերդի սուրբ խորանում և ուխտենք կուել մեր հայրենիրի բազգաւորութեան համար, մենքնել այն քաջերի նման որոնց մասին խալֆան նոր պատմեց մեզ:

Երդւենք, ասեցի ես և երկուսս էր շոքեցինք խորանի, մոմերի ծխից ուհացած և հպումներից

մաշւած, մի խաչքարի առաջ և համբուրեցինք երեր անդամ խաչը: Վեր կացանք լոփի ու անձայն, սեղմեցինք միմեանց ձեռքը և երբ զուրս եկանք խորանից՝ մի այնպիսի թելմեռութիւն զգացինք, որ կարծես վերաներիցս մի մեծ տանչող բռու էին վերցրել:

Սարի վերայի զբօսանիրից մենք միշտ տհաճութեամբ էինք վերապանում: Խալֆայի ստեղծած բանաստեղծական աշխարհից մենք պիտի ընկալի էինք նորից առօրեա կեանքի, հոգսերի ու ցաւերի մէջ, որոնցից մէկը միշտ սպասում էր մեզ հէնց բերդից վար իջնելիու:

Բանն այն է, որ մեր բերդից վար իջնելու ժամերին, զարմանալի ճշտապահութեամբ, այն փողոցի տնկիւնք, որ բերդից տանում էր քաղաքի զանազան մասերը, հաւաքւում էին մեծ քանակութեամբ թուրքերի զատարկապարտ տպաներ և, մեզ տեսնելու պէս, յարձակւում էին վերաները և սաստիկ ծեծում. այդ երեսյթը մնացել էր քաղաքում զեռ տաճիկների տիրապետութեան ժամանակից և այնքան սովորական էր զարձել հայերի, հայ տղաների համար, որ ոչ որ չէր էլ մտածում զօրա դէմ բոկորելու, կամ մի միջոց ձեռք առնելու: Եւ եթէ մի որիէ տղա րիթք արիւնոտած, գլուխը կոտրած, կամ տւելի յաջո-

զակ դէպրում, միայն շորերը պատուած տուն, կամ վարժատուն էր զալիս, արդէն յայտնի էր, թէ ով է արել այդ և դորանով այլս չէին հետարբերում: Ծեծելլ թուրքերի բնական իրաւունքն էր, ծեծ տանելլ հայերի պարտականութիւններից մէկը:

— Տղերը, ասեց նկարագրածս օրը Մանուէլը, երբ խալֆայից բաժանւեցինք և սկսեցինք բերդից վար իջնել, բոլորս էլ զիտենք, որ այ էդ անկիւնը դառնանք թէ չէ՝ թուրքի տղերը պիտի վրա տան ու ծեծեն մեզ: Ապա մի մրտածեցէր, ինչն են ծեծում. որովհետ փախչում ենք, թողնում ենք, որ ծեծեն մեզ. այսար ինչն ենք թողնում. նրանք ուժով են, մենք ինչ պակաս ենք՝, նրանք շատ են, մենք-ընչ ենք: Տղերը, ամօթ չէ մեզ, բանի անդամ խալֆան պատմել է մեզ մեր պատմութիւնից, թէ ինչպէս տասն անդամ ըշւոր հայերը յաղթել են իրանց թշնամիներին, ապա մենք ինչն ենք թողնում, որ մեզ ծեծեն. զար զիտէք տղերը. այսօր ւանից, որ թուրքը վրաս հասնի, ես առաջինը կ'զարնեմ:

— Ես էլ կ'զարնեմ, զրահց բօրը Աստած կըտրէ, զոռաց Թրիգորը:

— 2է, տղերը, ասեց Մանուէլը, առանձին

տոանձին մենք շպէտք է կռւենք.-բոլորս մէկ եղած,-ինչպէս իրանք են անում, նորանք միասին են յարձակում մեզ վերա, տեսնում էք, և երբ մենք փախչում ենք՝ մէկ մէկ բռնում են ու տալիս հիմա որ դան վերաներս, Էլ շ'փախչենք՝ կռւենք, արիր խօսր տանք իրար: Բոլոր 20-25 տղաները համաձայնութեան աղաղակներ բարձրացրինք: Մահուէլը շարունակեց:

— Դէ որ այդպէս է, իրարուց հեռու հեռու մի գնար, ում ուժը քիչ է, թող ձեռքը փայտ ու րար վերցնէ, ևս ու դու, Սարո, դարձաւ Մանուէլը ինձ, ամենից առաջ գնանք և խուրբերը վերաներս եկան թէ չէ, նշան տանք մերսնց և առաջինք մենք զարնենք: Գրիգոր, դու մեր ետեւից արի, որ թէ նեզը մնանք՝ մեզ օգնես: Տղերը, խօսր մէկ, Աստւած մէկ. ևս գարկեցի թէ չէ. դուր բոլորդ էլ վրա տւէր և էլ բանի մի նայէք... այս անդամ որ դաս տանք, էլ ուրիշ անդամ չեն գիտչի մեզ, գէ, գնանք:

Այսպէս ասեց Մանուէլը և առաջ ընկաւ. և էլ գնացի հետը զգոյշ կերպով դիտելով, թէ որտեղ կարսղ ենք պատահել խուրբերին:

Գրիգորն ու Զուրաբն ետեներիցն էին գալիս, իսկ մնացեալ մեր ընկերները դրանց ետեից: Աւելի թոյլերը ձեռները բար ու փայտ էին առել:

Հէնց որ հասանք բերդից գուրս բերող փողոցի ծայրը, երեացին թուրքերը, որ գարան էին մտել պատերի ու ծառերի տակ: Մեզ որ տեսան, նրանցից մէկը բզաւեց «բռնեցէր տղերը հայերըն եկան», և իր զարանից փողոցի մէջ տեղը թուաւ: Նոյն բոլորին մի անգամից ու արագ զանազան անկիւններից գուրս եկան միւս թուրքերը և խըմբւեցին առաջինի շուրջը ու մի վայրկեան կանգառան, սպասելով մեր մօտենալուն:

Մենք համարեա մօտեցանք թուրքերին:

Այսուղ Մանուէլը մի փորք զիտեց մեր հակառակողներին և ապա «վրա տւեր տղերը» զուալով՝ յանկարծ, քամու արագութեամբ թուաւ զէսի թուրքերն ու դանակի պէս խուեց նոյտ ամենախիտ տեղը և սկսեց կտաղութեամբ աջ ու առհակ հարւածներ տալ. մենք հետեցինք նորան նոյն արագութեամբ և սկսեց մի կատարեալ պատերազմ:

Թուրքերը յանկարծակիի եկան և առաջի նւազ ցըւեցին. բայց երբ տեսան, որ իրանց ամենասուժիղն ու գլխաւորը կպել է Մանուէլի հետ և նեզում է նորան, նորից վերագարձան և կոխւը վերսկսեց:

Թուրքը ապշած պաշտպանում էր միայն:

Վերջապէս նաև յաջողեցրեց և պինդ բռնե-

լով Մանուէլին վեր բարձրացրեց: Նտ արդէն զետին էր խփում ընկերիս, երբ ես հասա ու ինքը բռնեցի թուրքի շլինքից ու թեր տակից և օղակի պէս սեղմեցի:

Թուրքը բաց թողից Մանուէլին և սկսեց ինձ հետ մենամարտել, սաստիկ ուժեղ լինելով, նա ինձ գէս ու գէն էր շպրտում շորի նման, բայց ես պոկ չէի գալիս, սպասելով թէ՛ Մանուէլը կարգի կ'բերէ իրան և ինձ օգնութեան կը հասնի

Մինչ մենքն բանց պլատորի հետ էինք, Գրիգորը շարժում էր իւր հերկուլէսի բազուկները և բիթ ու բերան է որ ջարգում էր. շորա-հինգին այնպէս էր խփել, որ ընկերները, թերեն ընկած, տուն էին տանում:

Հիմա Գրիգորը ուզում էր բռնել մի մեծ տղայի, որ մեր, փարքներիս ետեիցն էր ընկել, բայց սա ամեն կերպ խոյս էր տալիս և զուրո պրծում Գրիգորի ձեռներից:

Վերջը Գրիգորը դորան էլ բանեց և լուսեցին միայն թուրքի ազիոզորմ ճիշն ու ազազակը:

Մինչ այդ մինչ այն, իմ զբութինը բանի գնում վատահում էր, թուրքը ինձ գէս ու գէն էր ձգում իւր պարանոցի շուշը, ինչպէս մի թաշկինակ, իսկ Մանուէլին այլ ես մօտս չէի տես-

նում. Նա ամեն տեղ հասնել էր ուզում:

Վերջապէս թուրքը ձեռներիցս պրծու և այնպիսի սարսափելի ուժով ինձ գէպի ինրը բաշեց ու սեղմեց իւր թերի մէջ, որ շունչս կարեց և ես միայն այն զգացի որ, ցեխերի մէջն եմ զլորւսւ. սարսափելի պիտի լինելը իմ պատիմը այդ կատաղած մարգու ձեռից, եթէ վրա չ'հասնէր Գրիգորը: Ենչպէս մի ուժգին հազմ, որ իւր հետ բշում ու զլորւսւ է ամեն ինչ՝ այսպէս վրա հասաւ Գրիգորը և զօրեղ ձեռների մի հարւածով գէն ձգեց վերայիցս թուրքին:

Բայց սա իսկայն սորի կանգնեց և սրանց մէջ սկսեց մի այնպիսի մուշտակոխւ, որի հարւածների հնչիւնները լուսում էր և ալդ իրաշնցումի ժամանակ:

Թուրքը Գրիգորից մեծ էր հասակով, բայց ոչ ուժով, և կոխւը շարունակում էր փոփոխակի յաջողութեամբ. Թուրքը ուզում էր սոսով խփել ու վեր ձգել Գրիգորին, իսկ սա ձեռով էր միայն գործում, բայց այնպիսի թափով, որ նորա ամեն մի հարւածից յետո թշնամին գէս ու գէն էր ընկեսում բժըժածի նման:

Վերջապէս մեր «փայլեվանը» հաւարեց իւր բոլոր զօրութիւնը և այնպէսի մի սարսափելի հարւած տւեց թուրքին, որ սա իւր եր-

կայի բոյի շափով տարածւեց զետնի վերա և անշարժ մնաց:

Սա թուրբերի գլխաւորն էր, այդ յարձակումների նիւթապը և զեկավարը, բազարի յայտնի Մօլա Դուրբան ազայի տղան:

Թուրբերը, որ ամենին էլ բաւականին տուժել էին, երբ տեսան իրանց գլխաւորի պարտութիւնն ու անկումը, անամօթ հայհոյեանքներ ու յիշոցներ անելով թողին, և ասպարիզից հեռացան:

— Բռնեցէք ու խփեցէք, որ խելքները պլուխները գա, զոռաց Մանուէլը որ յոպնածութիւնից հետոմ էր փուրսի նման և վազեց թուրբերի հոտներից. մնեք հետեւցիներ նրան ու այնրան հալածեցիներ փախչողներին, որ այլիս փոփոցում ոչ որ չ'մնաց.- բամու պէս փախան բոլորը, բացի Մօլա Դուրբան ազայի տղայից, որ գեռ տարածւած էր զետնի վերա և տնբում էր ջարդւած. մնեք յաղթանակով էինք տուն վերագառնում:

Ճանապարհի կիսին ես յանկարծ յիշեցի այդ ջարդւած թուրբին և յետ նայեցի, թէ ինչ եղաւ նա և ինձ թւաց, թէ նորա գլխին տիրացու Յունանն է կանգնած, գոնեա բարձր ֆէոը և վերաբկուն Յունանինն էին... Բայց դա ինարիէ իմ երեւակայութիւնը կ'լինէք. ինչ զործ ունէք այդ ժամանակ, այդտեղ Յունանը, ինչն պիտի դար,

պարզ է որ դա աշբիս է երկացել միայն... և ես հանդիստ սրտով շարաւնակեցի ճանապարհու:

յի պատահելին և վերաները չ'յտրձակւէին, բայց  
նախախնամովթիներ մի կես ժամ յետո մեզ  
ցոյց էր տալու ուրիշ աւելի նշանաւոր հետեւ  
ւաներներ:

Հէնց որ մատնը վարժատան պարտ զը, առա-  
ջին մարդը, ու մեզ պատահեց, տիրացու Յունա-  
նըն եղաւ, Կա մի արագ ու շարագուշակ հայեց-  
քով նայեց վերաներու և իսկոյն մտաւ ներս. վա-  
վատ նշան էր, մի շար նախազգացում յանկարծ  
տիրոց մեր սրտերին և մենք վարժատան դռան  
առաջ կաեգ տռաներ:

— Սարօ, ասաց Մանուէլը, երեկուա բանը  
տիրացուն տեսած չլինի:

Իսկոյն երազի պէս մտրիս միջից անցաւ այն  
բարձր ֆէւոր մարդը, որ երեկ կանգնած էր  
մօլա Ղուրբան աղայի տղայի գլխավերին և Մա-  
նուէլի հարցը ինձ համար հիմա զբականալէս  
վճաւած էր. Մանուէլի ձեռքից բռնեցի և յիտ  
գտանալու նշան արեցի:

— Ո՞ւր, ասոց Մանուէլը, էսօր որ փախչենը,  
էզուց չ'պիտի գանք. ինչ որ լինելու է կ'լինի.  
զինանը. և մենք ներս մտանք զասատուն:

Միմսն խալֆան դասր սկսել էր. մենք զգոյշ  
կերպով անցանք աշակերտների մօտից և տեղի-  
րըս բռնեցինք:

## ՅԵՊՐԱՌԻԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Միւս առաւօտ վարժատուն գալիս ես Մա-  
նուէլին պատահեցի, որ նոյնպէս արագ արագ  
վարժատուն էր զնուում և մենք միասին շարունա-  
կեցինք մեր ճանապարհը:

Ուսումնարանի նեղ փողոցը գես չ'հասած,  
պատահեցինք Մոլլա Ղուրբան աղայի տղա-  
յին, որ զլոււիը կապած և երեկուա ընդհարման  
այլ նշանները վերան մի պատի տակ կուչ էր հ-  
կել և մի ուրիշ թուրքի տղայի հետ ինչ որ խօ-  
սուում էր. մեր մօտենալու պէս՝ երկումն էլ շրա-  
ցան և կորան մօտակա նեղ փողոցներից մէ-  
կում, մինչդեռ մենք մօտերից անցնուում էինք ամե-  
նայն բոպէ կուի պատրաստ երկու արազակների  
նման:

Երեկուա յազմութեան ամենաշօշափելի հետեւ  
ւաներներից մէկն էր զա. անկարելի բան էր, որ  
ուրիշ անդամ երկու թուրք տղա երկու հայ տղա-

Դուռը բացւեց և երեաց Յունանի մոայլ կերպարանքը:

Նա երկու երեք բայլ տռաջ եկաւ, հանգիստուոր կերպով զլուխ տւեց խալֆային և անձայն կանգնեց գասատան մէջ տեղը: Գրիգորը իմ երեսին նայեց, ես նայեցի Մանուչիրն, իսկ սա յարւած նայում էր տիրացուին, կարծես վախում էր, մի գուցէ աշրից բաց թօսկնէ նորա մի որհէ շարժումը:

—Ի՞նչ կա, տիրացու, մի բան ունիս ասելու, ասեց հետարքը թեամբ խալֆան:

—Այժմ մեծ, կարի մեծ ոճրի մասին զեկուցում մի տալու եկալ իմ.

—Ի՞նչ, ոճրի, ի՞նչ ոճրի, ի՞նչ ես խօսում, տիրացու, գոչեց խալֆան և տեղը նստեց.

—Ոճրի, որ գործեալ են մանկտիրն բուրաստանիդ.

—Մեր տղերքը, մի բան են արել տղերքը...

—Ո՞չ մի բան, պատեիլի խալֆա, ոճրի մի, սպանութիւն մի, որ սարսկցուցանէ զմարդ և սասեցնէ զարին երակաց նորա.

—Ի՞նչն է բանը վերջապէս, գոչեց համբերութիւնը հատած խալֆան, հասկանալի կերպով ասա, տիրացու, ի՞նչն է բանը:

—Քանզի կատարելոց եմ, պատուելի խալֆա,

սկսեց հանգիստուոր կերպով տիրացուն, սեպուն պարտականութիւնն իմ, չկամիմ ծածկել ոչ մի պարտգայի ահաելի գիտւածոյն:

Տիրացու Յունանը ամբատանելու էր եկել մեզ և նորա ոճը բանի գնում տւելի և աւելի գասական էր գառնում:

—Երեկ, շարունակեց նա, յետ երկար ընթերցանութեան «զէն հոդեորի»՝, զուրս եկի բիշ մի ձևնելու կողմն բերգին և նայելու, թէ չեն իջեալ աշակերտըն ի սարէ և յանկարծ լւա զձայնն ահաւոր կականի և հտառչանաց. զնացի զեպի վայրն այն. ուսկից զային ձայնը այն ահապին և զինչ տեսի հեռուն. աշակերտըն քո միացեալ ոյժով և գագանակով և ահապին քարերով և փայտերով գանակութիւնն թեթե վաշտ մի տաճիկ մանկանց. ճիշն ու արտասուր այն տառապելոց ոչ յիտ կասէցուցանէին ի չար գործին մանկահասակ դահճաց և բանի մեծանար լացն ու կոծն տառապելոց և փանգւածօց, այնքան մեծանար անզիւթիւնն բարբարսաց և աստ կոտորւէին պակունը և բիթը տաճկական, թափէին ատամունը նոցա և կաթէր արիւն ի մերա զաշտին ահեղ ճակատամարտի, և մինչ այս մանկանը բարբարսար կատարէին զոյս զործն եղեռնական՝ տաճիկ տշխարէին և առլին, ընդէր հարկանէր

և սպանեանելը՝ զմիկ յահով տեղի. և աստ ես,  
որ ամենայն ինչ աշօրս տեսի և ունկամբն իմ  
լուս, տիրահասաշ վկայեմ զոր մանկունքն տաճ-  
կաց վարելին զինքեանս որպէս զառն Քրիստոսի,  
մինչ հաւատացեալքն կոտորէին և ջարգէին զեռ-  
սա որպէս զինւորքն չերովզ, որ զմանկունքն Սիօ-  
նի. Եյսպէս ասելով տիրացուն մի յազմական  
հայեացը ձգեց բոլոր աշակերտների վերա և յե-  
տո սենուց իր հայեացը իմ, Մանուէլի և Գրի-  
գորի վերա. խալֆան զարմացած և անհանգիստ  
աշրով նայում էր մերթ մեր, մերթ տիրացուի  
երեսին և նորա ծիծալկոտ ու բարի աշքերի մէջ  
նիմա երեսմ էր բարկութեան կայծը...

— Յիտո, տիրացու, յիտո, ասեց նա կամոց  
ձայնով, պատմութիւնից շատ զարմանալի է.

— Եւ յոյժ ցաւալի, պատւելի խալֆա, վրա  
բերեց տիրացուն.

— Յայց ախար նվ սկսեց և լինչալէս եղաւ  
հարցիսում էր բորբոքելով խալֆան.

— Նվ սկսեց... Են, տեսի աշօրս, ստուգեցի,  
լուս ունկամբ՝ զայդ ջարգն սոսկալին նախաձեռ-  
նեաց և կատարեաց ամրարիշտն Մանուէլ Մանու-  
կեան. մէջ գաշտին պատերազմի նա սկանայր յայս  
կոյս և յայն կոյս որպէս հոգի մի մահաբեր և  
ամենուրէր սփուէր զարիւն և զցաւ, զսոսկում և

զսարուափ. և ինքն հարկանէր և ինքն խորտակէր  
և այլոց խրախուսէր և հրաւիրէր շարսնակել  
զգործն գժոխալին, «զարիէր», «սաղ մի թողէր»  
զայս միայն լուս բերանից նորա յրնիժացս ողջ  
ճակատամարտին և ձեսօր ու ոտիւր և ատամօր  
նա կոտորէր և փշրէր զամենայն ինչ, որպէս գա-  
զանացեալ զինւոր մի փոշտացի. Ոչ յիտ մնայր  
ի ընկերէ իւրմէ այն նորեկին անօրէն, զոր նոտեալ  
է այժմ նման անմեղ գառան, իբրհ և ոչ մի զործ  
վատթար չէ զործեալ», ասեց տիրացուն, իւր  
երկար ցուցամատը իմ կոզմս ուղղելով.

Մակայն ընկալ վաղճան զործիս, պատ-  
ւիլի խալֆա, շարսնակեց Յանանը, մինչ ան-  
րարիշտն Մանուէլ Մանուկեան վանեալ, և զոր  
լային և կածէին, առաջի տանէր, հաստարազուէն  
Գրիգոր Սեսյեան հալածէր և ջանայր բոնել զոր-  
դոյն արժանապատիւ մոլա Դուրբան աղային,  
որ չնորհի իւր կոյր բազգին էր մէջն ճակատա-  
մարտի. հեղանամբոյր մահուէն մոլային սարսա-  
փահար կատագութենէ Գրիգորի ջանայր խոյս  
տալ և չքանալ, սակայն ի զուր. որպէս դիշակեր  
արծիւ ի վերա անմեղ աղաւեոյն սաւառնէր ան-  
խիզմն Գրիգոր զլոսյն Մոլայ Ղուրբան աղայի  
մանկան. սա տայր փախուստ, նա ոչ կարէր  
բռնել, սակայն ի վերջո հաստարազուէն Գրիգոր

լարեաց զամենայի զօրութիւն իւր բօրօղանի և որպէս բորենի թռուաւ ի վերա որդոյի զերամեծար մոլլայի և այնովէս ահազգին թափով բռնեաց և զետին տապարեաց զնա, որ արար կիսամեռ։ Երբ վայրենի ճիշօր և ազազակօր զնայր ի տուն հրասակին այս հեթանոսական, եկի և տեսի զգաշտին զոռ մարտի, որպէս սուբբե ելլիչ զաշտն Աւարայրի և տեսի ի վերայ զիտենին վիայտը կոտորեալը, արիւն լճացիալ, ատամունք թափիալ. ոչ շատ հետի մանուկին մոլլայի դիաթմաւալ կայր ի վերա զետնի, ծանր չնշայր և արիւնն զնայր ի բերանէ, և ի ոնեկանէ վիրատոր և հո խնամէի զվերսն նորա մեծամեծ և կապկատէի և կանչէի զմի արարա և ծախիւր իմ տարի զկիսամեռ մարմինն տուն և աստ լուա մեծահառաշ լացն մօրն նորա համեստափայլ կեսչն մոլլայի և հօրն նորա զերապատիւ մոլլայի։ Հարիմը, որ եկին հապձէպ հրատիրանոր մոլլայի և տեսին զվիրաւարն և վերսն նորա, տաէին՝ թէ չէ կենաց և թէ մանուկին անմեղ մեսանելոց է զայս տի կամ գիշերի։ Արդ խօսիր, հաստաբազուկդ Գրիգոր Սեւայեան, զօշեց վերջը տիրացուն, զժբազգ Գրիգորին զիմելով, պատուելի խալֆայի զիմաց զիմ սուբն բռնիր, ասկացոյց զոր զբարանմ զրել. զայս մեծ զտւն նիւթող, խառնակիչդ և կործա-

նիշդ ամբարիչտ Մանուկել Մանուկեան էր կաս լուռ, էր չպնդիս, թէ սուտ խօսի նւաստու և զու ըմբաստացեալդ Սարգիս Թոռունեան, որ միացիցեալ ես բանակին ամբարշտաց, ընդի՞ր ոչ խօսիս. Էր են լուռ շրթունք ձեր հայհոյիշ։ Ոճիրն այս է, արժանապատիւ խալֆա, տսեց Յունանը և խօսր գլուխ տաւեց խալֆային։

—Յունան, այդ սուտ է, զոռաց մեր տեղը խալֆան, այդ բաները, որ զու պատմեցիր, իմ տղերըը ընդպանակ չեն անելու.

—Պատմեցի զոր ինչ տեսի և լուա. թոզ խօսին, ում ամբաստանեմ, պատասխանեց Յունանը անողօր աններսպամտութիւնը երեսին. ցաւեցուցանէ, զիս թերահաւատութիւնը րո, աւելացրեց նա և նորա ձայնի մէջ հնչեցին այս անզամ կոստութեան հնչիւններ։

—Սա ինչ անսովոր բան է, ասացէր, միշտ ստ սովոր է, Մանուկել, Գրիգոր, Սարգիս... զուսում էր խալֆան։

Ինչ պատասխանէինը, մենք լոիկ վար էինք նայում և զգում, որ ստով զիսով տիրացուի ձեռքումն ենք։

—Ցղերը, պատասխանեցէր, տղիզ է արգեօր այս անխիղմ ձեծը, աւելի և աւելի յուզելով զառում էր խալֆան.

— Զունեմ կտսիած, որ որպին արժանապատիւ ճօլլայի մեռանի և վաղը լինի յուզարկաւութիւնն հանգիստուոր. Տիրացուն, որ լաւ զիտէր խալֆոյի զիւրազրդիո բնաւորւթիւնը իւր նկատողութիւններով կրակի վերայ իւղ Եր տծում, երբ իւր նոր հարցին Էլ պատասխան չստացաւ, խոլֆոն սաստիկ կարմրեց, ուժով խփեց առաջր դրած սեղանին և գոռաց նորից.

— Մահաւէլ, Գրիգոր, Մարգիտ, պատասխան.

— Աւզիդ է, խալֆա, ասեց Մահաւէլը վճռողական ձայնով, վեր կենալով տեղից. ուզիդ է, մենք երեկ ծեծեցինք թուրքերի տղերանց. նորա միշտ մեղ ծեծում են վարժանուն զալիս ու զետիս, դորա համար Էլ մենք ծեծեցինք նրանց... որ տսում է թէ մոլլա Ղուրբան ազի տղին մեռնում է, ուում է խօսում «թոփալ դել», նա ոզչ է, եռ ու Յարօն առաւողը տեսահր նրան:

Երբէք չեր պատահել, որ խալֆայի առաջ մենք առլինք տիրացուի աւելորդ անունը և երբ Մահաւէլը արտասահեց այդ բաւերը ես տկամունարա երեսը նայեցի. սաստիկ հոգեկան վրդով մունքից էր, թէ զառը զիտակցութիւնից, ոչ ինը բաժնութագովին Յունանի ձեռքումն է, Մահաւէլի կտպայտ աշրերը համարհա ուսացել էին և զզացում էր, որ նա կարող է այս բոլորին արտա-

յայտել իւր հոգու խուզութիւնը ահազին կրբի անսպասելի բռնկումով.

— Ուրիմն ուզիդ է, պատմածն ուզիդ է, ասեց խալֆան երեսին մը այնպիսի զայրայթ, որ մենք երբէք չենք տեսել, զու, անտամօթ, արգարտնում ես նորանով, որ տղային սազ Եր թողել, չէր սպանել... և իմ առաջ բերանիցդ եկածը աշէք սպանել...

Սորանց վերա խօսը չի ներզործում, այսպէս ասելով, խալֆան, ձեռքը ճակատին, համարեա գուրս վազեց զասարանից և ահազին թափով գուրս վրա զարկեց իւր ետեից:

— Զի՞նչ ասէք հիմա եղբարբ սիրեցեալը ի Քրիստոս, չէ մարթ որ «զել», որ ապրի մէջ գժուխրի, անէ զգատաստան գժուխրին, ասեց Յունանը մի զիւական բրիլշ արձակելով և Մահաւէլին նայելով... բայց նա թոզ ապրի զեռ, չի է լին նայելով... բայց նա թոզ ապրի զեռ, չի է հասեալ ժամանակ իւր... Այսպէս ասելով նա բաննը ձեռքն առաւ և բոլոր աշակերտներին, բայցի ինձանից, Մահաւէլից, Գրիգորից և երկու ուրիշներից, կանգնեցրեց զասարան մէջ տեղը, ինը կանգնեցրեց առաջները և բզաւեց իւր խեղզւած ձայնով.

— Զօրեցէր առաջո և համբուրեցէր զայս փայտին, կաւզեմցոյց տալ ձեզ, թէ ի՞նչ զգային երեկ տաճիկքն զանակած եալը:

Եյսպէս ասելուց յետո նա սկսեց հերժով խփել շորածներին, որի զլիսին, որի ձեռներին, որի մէջրին, որին շատ և որին բիշ, բայց բոլորին այնպիսի սարսափելի թափով, որ փայտի փարտելու ձայնը ականջ էր ձակում: Գտատան մէջ սկսեց սարսափելի ճիշ ու աղաղակ, նորանը, որոնք ծեծ էին ուտում, լոլիս էին ցաւից, որոնք գեռ չէին կերել—ահից ու սարսափից:

և Մանուէլը և Գրիգորը նստած էին վերջի նստարանին և սպասում էին:

Վերջապէս Տիրացուն վերջացրեց իւր զատատանը և յացով ու թացով բոլորին տուն ճանապարհ դրեց: Մնացինը մնիր երերս, ուրիշ երկու աշակերտ և ինը լուսացուն:

Գտատան մէջ մի փորբ լուռ ու մորերի մէջ ընկած ման գալուց յետո տիրացուն պարզեց իր զանակը վերը յիշած աշակերտաներից մէկին և սսաց.

Առ զայս դանակին և զնա կտրիր այգուց ճիւկեր ուռենիի մկոնն և ոչ բարակ, իսկ զու, գարձաւ Յունանը միւսին, զնա և բեր բզանցը ըստ քո տապիցի խոշոր, որ կա եղերբին առւակի.

յիտ այսօրիկ ըեր երեր մեծ ու ծանր բար, զոր ուժգ տտնի. Տիրացուն պատրաստում էր մեզ համար իր ամենաանուըբ տանջաներներից մէկը և այդ կարգագրութիւնների ժամանակ նորա փորբիկ ու չար աշբերի մէջ երիւմ էր կատարեալ հաճոյրի արտայայտութիւններ:

Տգերը բերեցին թէ ճիպոտները, թէ բարերը և թէ աւազը:

Տիրացուն աւազը խնամքով փռեց յատակի վերա. յետո ջակեց ճիպոտներից ամենաաստերը և ճկունները, փարտեց նորանցով մի բանի անգամ օդի մէջ, մէկը ինըը ձեռն առաւ, միւս երկաւը իւր օգնականներին տւեց և գտնալով նոյն խեղգւած ձայնով, որով նա տրտասահաւմ էր միշտ «Ճեսրդ», «Շորեցէր», գոռաց, «Հանեցէր սաներն ձեր, վեր բաշեցէր շորերն, ո՞՛մերկան ծնկներն ձեր»:

Մենք սիահգամայն տիրացուի ձեռքն էինը և անհնարին էր չհնացանցւել, ուսկայն ևս և Գրիգորը գարձեալ տատանիւմ էինք:

Առանց տատանւելու, կարծես իւր անտարբերութեամբ և անդգայութեամբ պատժել ուզենար տիրացուն և սահմանափակել նորա զիւային բաւականութիւնը, Մանուէլը մերկացը իւր ծընկները և առանց տիրացուի հրամանին շորեց աւազին:

Մանուէլի օրինակը շրացրեց մեր տատանմունքը և ես-ու Գրիգորը նոյնպէս չորեցինք առաջի վերա Մանուէլի կողքին. Եյն ժամանակ տիրացուն ջոկեց բարերից ամենածանրը և տևց Մանուէլին և միւս երկուուն էլ ինձ և Գրիգորին և հրամայեց բարերը բանել և օդի մէջ պահել. յետո, զիմելով իւր օգնականներին, սավորական լեզով, երեխ վախճեալով, մի գուցէ տղերը իրան լաւ չ'առկանան, տսեց.

— Եաւ ականջ զրէք, ինչ իմ առում, հինց որ էս անօրէնները բարը վար իջեցրին, զարկէք զոցաց զարշելի ձեռքերին ինչ որ ուժ ունիք, թէ չուզէք իրանց օրի ընկնել, այլ էսպէս...

Այս տոնելով նա փարտեց ճիպսում օդի մէջ և ոյնպէս մի սոսկալի հարւած իջեցրեց խեղճ Մանուէլի ձեռին, որ իսկայն արնեկզոյն շերտը երեւաց վերան և թիշ մնաց բանած բարը վեր ընկնելը ձնկներին. յետո խորին ատելութեամբ Մանուէլին նայելով նա շարունակեց.

— Երդ պիտի փարձենք, յազմէնոց է համբերութիւնն «թոփալ զիի», թէ ոյժն անասնական ձեռաց ձերոց:

Եւ շարագուշակ լառութիւնը տիրեց սենեակի մէջ. տիրացուն համբերութեամբ սպասում էր մեր թհերի բեղարելուն, որ հարւածները անխնա

տեղու մեր ձեռներին, մինչ մենք ահազին ոյժ ու չանը էլինը զործ զնում, բարերը որոշ մակերեսիթի վերա պահելու:

Տիւյ երկու բոսէ, մեր ձնկների տակի աւազը ծակում էր մեր մարմինը. մեր ձեռքերի մկանունիքները, երկար լարւելուց, սկսեցին անզգայանալ կամաց կամաց և այլ ես չ'ապատակւել մեր կամքին. և ահա հետզհետէ յարերը վար իջան ..

Յանկարծ ուժգնապէս ուուլց ճիպսուը և Մանուէլի ձեռ ի վերա երկրորդ արիւնազոյն շերտը երեւաց. Սուլեցին և մեր դահիճների ճիպսուները և մեր աանչանը աննկարագրելի զարձաւ:

— Գժոխրի բանցկելիք, ես ձեզ ցայց կտամ, որ չէ իրաւունք անարգել զանձանց զիտնականաց, որ թգուկը էր անօգնականը ի մէջ ձեռաց իմոց և կտրհմ ճզմիլ զձեզ:

Պինդ, պինդ խփեցէք, գաւաճաններ, զոշում էր տիրացուն իւր օգնականներին և ինքը խփելու այնպիսի օրինակներ էր տալիս, որ ես մինչի խմ ցաւալի գրութեան մէջ խզմում էի Մանուէլին:

Մանուէլի ձեռքերը դարձել էին արդէն կակաչի պէս կարմիր և տեղ տեղ երեսում էին արհան կարմիր բծերը:

Մեր գրութիւնը գեռ ևս այնքան սարսափելի

չեր ինչպէս Մանուկինը, բայց և այնպէս այլ ևս  
համբերել անհնարին էր.

—Տիրացու ջան, տիրացու, խնայէ, թողու-  
թիւն տօւր, մեռա ասաց Գրիգորը ձեռի բարը  
վար իջեցնելով, էլ շեմ անի. բեզ վատ ասովը,  
թող ինըը վշտնա, խնայէ...

—Յոյժ կարճ է, յոյժ կարճ է միտրդ հաս-  
տագլուխ Գրիգոր, որ մսացեալ ես, թէ ինչ-  
պէս անխզաքար կտրատեալ էր գանեակով բո-  
զիօշիկն իմ, աւագակելով զայն ի դռնէ իմմէ.

—Ես չեր, տիրացու ջան, էլ շեմ անի...

Կամ կարծես դու, թէ գաղտնիք է, զոր խոր-  
հրդով այս անօրինի, դու պոկնցիք զի՞երին որր-  
ոյն նարեկի իմոյ, այս տսելով տիրացուն Մա-  
նուկին ցոյց տւեց և նոր ոյժով խփեց նորա  
ձեռներին:

Ես էլ սկսեցի հառաշել և ուզում էի տիրա-  
ցովի սիրաը ինդրանօր մեղմացնել, բայց ճիպոտի  
երկու հարւած այնպէս ձագկեցին ձեռներս, որ  
տսելիքս զարձեալ հառաշանքների փոխւցին:

Միայն Մանուկին էր յուռ և նորա զէմքի  
վերա և աշրերի մէջ չեր նշմարվում տանջանքի  
և ոչ մի նշան և նա տանում էր իւր ցաւը նա-  
հատակների նման: Այդ անզգայութիւնը իսպառ  
կատաղեցնում էր տիրացուին և նա այս ինկի-

զիցիալի վերջերում բոլորովին կորցրեց իրան  
տիրապետելու ընդունակութիւնը. վայրենի խըռ-  
պոցներով, անասելի հայնոյանիներով զրաբար,  
թէ աշխարհաբար, բրտինը ճակատին, նա, հար-  
բածի պէս ձաղկում էր Մանուկի ձեռները, երե-  
սը, զլուխը և կոտորվում էին մէկը միւսի ետեից  
արիւնանիներկ ճիպոտները և թուշում էր ճիպոտնե-  
րից արիւնը իրան, Մանուկի, և մեր երեսներին,  
իւկ ձեռներից ծորտծը ներկում էր բռնած ապտ-  
ուած բարը և կամաց կաթում յատակին:

Տիրացուն արգէն փոխեց հինգերորդ ճիպոտը  
և նորանով նոր ոյժով արգէն մի անգամ խփեց  
Մանուկի երեսին, երբ պատահեց այն դէպրը,  
որ վերջ տւեց մեր տանջանքներին.

Երբ տիրացուն փարտեց ճիպոտը, որ նորից  
խփէ Մանուկին, յանկարծ սա ազիսզորմ ձտինով  
բարձր աղաղակեց «խալֆա, Սիմոն խալֆա»,  
ահագին բարը ձեռից վար ձգեց և ուշաթափ  
տարածւեց տիրացու Յունանի սորերի տակ: Մինչ  
դիւտկան բաւականութիւնը երեսին, տիրացուն  
հրամայում էր իւր օպեականներին վեր հանել  
Մանուկին, սենեակի զուռը բացւեց և ներս մը-  
տաւ Սիմոն խալֆան: Խորին տհաճութիւնը երե-  
սին նա մօտեցաւ, կարեկցարար բարձրացրեց

Մահուէլին, ուշքի բերելով կանդնեցրեց և դաս-  
նալով տիրացուին ասաց:

— Միթէ կարելի է այսպէս տիրացու. խօս  
խոզագ չես մեռցրել խոպառ, այս ի՞նչ է սոցա  
ձեռները.

— Կատարեցի զպարտ իմ և հրաման ըս և  
եղէ վատամարդ, պատասխանեց Յանհանը աւելի  
շատ յանդիմանական, քան արդարանալու եղանա-  
կով և գուրս գնաց:



## Ա Բ Ե Ժ

Այս միտոնին կրած հայածաներն ու տան-  
չաներները ամբապնդեցին իմ և Մահուէլի մէջ ե-  
ղած ընկերութիւնը, բացի ուրախութեան և տրբո-  
ւութեան ընկհանուր լինելը մեզ մօտեցիում էր  
և այն, որ մեր ընաւորութիւնները, խիստ յար-  
մարում էին իրար. Մահուէլի պակասութիւննե-  
րը նոյն իսկ իհձ առաւելութիւն էին թւում. Մա-  
հուէլի վերին աստիճանի ընքոյզ և զգայուն սրտի  
մէջ կային միմեանց հակասող ծայրանեղ զպաց-  
մունքներ. խոր սիրո, զարմանալի անփեհերու-  
թեան և մեծահոգութեան հետ միտոնին, նորա  
սրտում ապրում էր սարսափելի վրէժինդրութիւնն  
ու աններողամտութիւնը. Իր սիրած մարդու հա-  
մար նա անձնագործեան էր ընդունակ, յանձն էր  
առնում ամենազժարինը. պատրաստ էր տարու  
իւր սննեցածների ամենաթափակիցներ և ընկհա-  
կառակը իւր շսիրած մարդուն նա առնում էր

իւր սրտի բոկոր զօրութեամբ և նորա միշտ ար-  
թունք ու ճարպիկ միտքը, ոչ մի վայրկեան չէր  
դադարում նոր ցաւ ու շարութիւն մտածելու և  
կատարելու այդպիսի մարդու դէմ: Վերին առար-  
ճանիկ անվտիս ու աննըլկուն, նա պատժից չէր  
վախսենում և ստացած պատժը չէր ուզում նո-  
րան և յետ կատացնում իւր մտքին զրածից, այլ  
ընդհակառակը ամրապնդում էր նորա վճռակա-  
նութիւնը: Կա մի ընաւորութիւն էր, որ միշտ  
պատրաստ էր կուի, ամենաօրհասական կուի,  
ընաւորութիւն, որ երբէք կուում ընկճել, խո-  
նարհնել չգիտէր: Եթէ կարելի էր նորա վերա  
ազգել՝ զա անկեղծ սիրո խօսրի էր և այդպիսի  
խօսրի առաջ միայն տեղի էր տալիս նորա հո-  
գու ահապին զիմտպրական ոյժը: Տիրացու Յու-  
նանը սիրո խօսրեր չունէր և Մանուէլը կուեց  
նորա հետ մինչեւ զերց. Սիմոն խալֆան բացի  
սիրո խօսրից ուրիշ խօսր չունէր և Մանուէլը  
սիրում էր նորան իւր սրտի բալոր ուժով... Հի-  
մա, երբ նայում էմ հեռուից Մանուէլին և տիրա-  
ցուին, ես տեսնում եմ, որ եթէ մի հրաշը պա-  
տահէր և մի օր տիրացուի բերանից Մանուէլը  
մի անկեղծ փակաքաշնը լսէր, նորանից մի բա-  
րեցակամութեան ապացոյց տեսնէր, մի հրաշը  
և պիտի պատահէր և Մանուէլի առելութիւնն

ու վրէժինեղբառթիւնը զեպի տիրացուն պիտի  
հալչէր ու կորչէր անմիջապէս նորա վեղեցիկ  
յատկաւթիւնների մէջ՝ ինչպէս, արեի ճառագայ-  
թի ազգեցւթեան տակ հալուում ու կորչուում է  
սառուցի կոշտը: Դէպի իւր ընկերները վերին  
առարճանի մեծահոգի և արդարամիտ էր Մա-  
նուէլը. իրանից լժոյի հետ նա երբէք զլուխ չէր  
զեռում, դասատան մէջ բոլոր լժոյիկրի պաշտպանը  
նա էր և բոլոր մեծերի ու ուժեղների սարսափը  
նոյնպէս նա, թէպէտ շատ շատերից նա և փոքր  
էր և թոյլ:

Բայց ինչ անսահման և վառ երեակալութիւն  
ոնկը իմ ընկերը... նո յիշում եմ հիմա այն եր-  
ջանիկ օրերը, երբ ես, Մանուէլը և Գրիգորը, որ  
մեր անբաժան ընկերն էր, զաներից յետո մի  
որ և իցէ ժայռի տոկ նստած խօսում էինք, թէ  
եթէ մեծ լինէինք, հարուստ լինէինք, ուժեղ լի-  
նէինք, թագաւոր լինէինք, ինչ կանէինք: Մանու-  
էլի երեակալութիւնը լժոչում էր ծիծեանեկի ա-  
րագութեամբ, ես յետ չէի մնաւմ նորանից և Գրի-  
գորը լսում էր մեզ հիմաց ու տարւած, և մե-  
զանից աւելի սգիորւում:

Ի մեծ ուրախութիւն նորա, մենք յանկարծ  
տեղափոխում էինք թագաւորական պալատները  
և զայրացած թուրքերի կամ պարսիկների ան-

գթութիւններից, ահազին նաւերով տար երկրներից բերած սեամսրթների զլուխն անցած՝ պատերազմի էինք դուրս զալիս թշնամիների գէմ...

Գլուխ է, որ թռչում էր մեր հարւածներից, դիակ է, որ թափում էր զաշտի վերա... Գրիգորի ցնծութիւնը զազաթնակէտին էր համում, երբ մենք յոզնած, զալրած պալատներն էինք վերագառնում և խսկոյն չրամայում խնձորներ սարքել յազմութեան առթիւ... Գինին ջրի պէս էր հօսում խնճոյրում, բաշովին, զանազան խորովածները, բազրաւենիները վայելում էր ամրող ժողովուրդը, որի համար մնիք բաց էինք անել տալիս՝ մինոյն ժամանուկ մեր խաղնին և սովոր գլխներից «ականջքաշուկ» անում: Բայց մնիք ինքներս, ի մեծ զարմանը և տհաճութիւն Փրիզորի, այդ մեծ առատութեան մէջ անզամ ծոմ էինք պահում և ազրատ մնում. ինչ վայել էր հայկական բաց սպարապետներին շռայլութեան մէջ յոզալ...

Մի օր, էլի մեր վարժատան լայնածաւալ պարտիզի ահազին ծառերի տակ նստած էինք ես, Մանուկը և Գրիզորը, բայց այս անզամ մեր մարերն, էլ հայկական աշխարհում շէին սաւառնում:

Մեր ձեռները նոր էին սակացի տիրացուի

վերջին ձագկոցից, մեր ծնկները նոր էին լաւացիլ աւազի բացած վերբերից և մենք խօսում էինք այդ զառն օրւա լիշտութիւններից:

— Խալֆան վրա չ'համեէր, տիրացուն մեզ կսպանէր այն օրը, ասեց Մանուկը բարկութեամբ. թէ մենք մեռնէինք, տիրացուն կուրտիսնեար:

— Մենք ինչու մեռնենք, ինքը սատկի աւելի լաւ չէ, ասեց Գրիզորը, եռանդոն կերպով տաշելով իր վայտերը:

Ասո, ինչ էինք արել որ այզրան ծեծ կերպնը, մի բանի թուրբի բիթ ու բերան էինք շարդիլ, էլ...

— Տիրացուի համար չէ թէ թուրբը, չուն ու զիին էլ աւելի լաւ է, բան թէ մենք, ասեցի եօ:

— Այդ անցաւ տղերը զոր հիմա այն ասացէր ինչ անենք, ասեց Մանուկը և նորա աշերը փայլեցին վրէժինդրութիւնից:

— Ֆէսը վախցնենք.

— Կոնկորդը կորցնենք.

— Ժամապիրը պատռնենք.

— Եւր ժամի շաղկի վերա թանար թափներ.

— 2է, տղերը, ասեց Մանուկը մտազրադ հզանակով, այդ բիշ է. ֆէսն ու կօնզորմը կորցնենք—խալֆայից փող կուզի, նորս կտանի, ժա-

մազիրը պատռենք—մէկ է իւր համար, ամբողջ բերան դիտէ, ժամի շաղկին էլ որ թանար թափենք,—այսպէս թանարոտ է հաղնի, ինչ օգուտ այստեղ պէտք է այնպէս բան բերել զլխին, որ սիրով ցաւի:

—Սիրտ սնի, որ ցաւի.

—Ես գրա սիրտը կ'ցաւեցնեմ, կ'տեսնէք.

—Բայց ինչպէս, ինչ անենք, հարցրինք ամենամեծ պատրաստականութեամբ ես և Գրիգորը, վերջինք մինչև անզամ իւր փայտերը մի կողմ թողեց:

—Այնպէս բան եմ մտածել, որ իւր արածների փոխարէնը մէկից կտանա:

—Մանեւէլ, ինչ է, հարցրինք երկուսս միասին ամենամեծ անհամբերութեամբ.

—Տիրացաւի կատնեն, կատուն մասացնէլ էք.

—Կատնեն, կատուն ինչ անենք, կորցնենք.

—Կատուն կորցնենք, պատախանեց Մանուէլը վճռական ձախով:

Գիտէք, աղերք, տիրացուն իւր կատուն ինչ-քան է սիրում.—իւր մօրից առելի է սիրում, չը տեսնում թէ մի քիչ կատուն մօտը շի լինում, քիչ է մնում խելքը կորցնէ... այ, երբ նորա սիրով կ'ցաւի:—

Մանուէլ, զօրդ ես տառւմ, դորանից էլ լու

օյին շի լինի, առաց Գրիգորը և վերջնականապէս ծալեց և զրագներ զրեց զանակին էլ, փայտերին էլ:

—Բայց կտուին ինչպէս կորցնենք, Մանուէլ, առացի ես, ուր էլ որ բռնենք տանենք, կտուն էլի յետ կ'գա:

Ընառ առում է, որ կատուները այնպէս սովոր են իրանց տներին, որ կ'վնագառնան, ուր էլ որ տանես, տիրացուի կատուն, որ շատ խելօք կտուն է, միշտ յետ կ'գա:

—Մարօ, պատախանեց Մանուէլը, լաւ ես տառւմ, կատուն այնպէս կորցնելը դժւար է, բայց իմ տտան էլ տառւմ է թէ զող կատուն որ կորցնել ուզենաս, նորա պոչը պիտի կտրես, կտուի պոչը որտեղ որ կտրես, էլ այնտեղ երբէք չի վերագանալ:

—Պօչը կտրենք, հարցրինք անվճռուզականութեամբ ես ու Գրիգորը.

—Պօչը կտրենք և հէնց այստեղ, պատախանեց Մանուէլը կտրճ ու կտրուկ. այն ժամանակ գուր տեսէք նորա սուզ ու շիւանը. կուզէք հէնց էպուց:

—Էպուցւանից ուշ շի կտրելի, վրտ բերեցնեք ես և Գրիգորը.

—Որ ալզպէս է, զուցէ առաւոտը մնենք այնպէս

պիտի ուսումնաբան գաներ, որ խալֆան առաջին զայը նոր վերջացրած լինի և տիրացուն գաստուն մտած, այդ ժամանակ մենք կատալին կրթանենք և պաշլ կ'կտրենք. փայտ ջարդելու կացինն էլ խալֆայի մարազի մէջն է միշտ, բայց, տղերը, չինի թէ ձայնը գուրս ելնի, տիրացուն մեղ սով սազ կուտէ. մենք երգւեցինք գաղտնիքը ովինդ պահնել: Կատի պաշի զէմ այդ դաւագրութիւնը պատրաստելուց յետո երեք շարագործներու միտունին գուրս եկանք վարժատան պարտիզից:

Միւս առաւտա, ճիշտ նշանակած ժամանակին, մենք վարժատան բոլորովին հակառակ կողմից— ցանկապատից վար թառնիք այզին և կտմաց ու զգոյշ բայլերով, ինչպէս զիշերւա աւազակներ, սկսեցինք մօտենալ տիրացուի բնակաբանին, որ կից էր վարժատանիք:

Քասատան բաց պատուհանից գալիս էր տիրացուի խեղպւած ձայնը, «զիռունք անհշանք, անբանք գարշելիք, մի շարժեսցիք, զի տատ է փայտըն խրատական», «տգէտը վայրենիք, ես ցոյց տամ զձեղ բանսնաւն, թէ մարթ չէ բամբասել և շարախոսել մեծաց ձերոց», նոյն բոլէին տիրեց մի շարագուշակ լուռթիւն, որից յետո անմիշապէս սկսեցին զալ գասատանից աշտիկրտների լացի և ճիշի ձայնը: Բոլէն ամենալավա-

էր և մենք արտզ արտզ մօտեցանք տիրացուի պատուհանին ու ներս նայեցինք: Ազրատիկ սենեակի մէջ, միակ տախտի վերա մի հին կապերտ վերան առած, գլուխը մի կեզառտ բարձի վերա գրած խոմիում էր տիրացուի պառաւ մայրը, նորա սաների մօտ աշրելը փակած, նոյնպէս նիրհում էր տիրացուի սիրելի կատուն:

—Գուր ականջներդ ձայնի պահեցէր, ասեց մեղ Մանուէլը և նոյն բոլէին, կատի արագութեամբ, ներս թռաւ սենեակը և ոտքերի թաթիւնի վերա մօտենալով տախտին, բռնեց կատուին և ինչ արագութեամբ որ ներս մտաւ, նոյնպէս էլ դուրս թռաւ սենեակից: Մենք կատուն հատներս, չբացանք զողութեան տեղից ծուխի նման: Ճանալարհի կիսին Գրիգորը մեզանից բաժանեց, ուզգւեց վլամի խալֆայի մարազը, կացինք բիրելու: Նա վերադառն կացինք ձեռին և մենք հաւաքւեցինք նշանակւած տեղը:

— Ծուտ արէք, տղերը, վերջացնենք՝ կատուն կը փախչի, ասեց Մանուէլը շոյելով կատինե, որ կտբծու նախազգալով իւր գլխին զալիք սոսկալի զժբաղդութիւնը, լալազին ձայնով մլաւում էր և աշխատում զուրս սրբնել Մանուէլի ձեռներից:

— Գու, Սարօ, ետի սոներից բռնիք, ես առա-

չից կ'բռնեմ, իսկ զու Գրիգոր զարկ, շարունակեց Մահուէլը:

Նա կատախին զետնին զրեց և պաշր ուղղեց:

—Երբ ասեմ մէկ, երկու, երեք, Գրիգոր զարկ:

Գրիգորը կացինը բարձրացրեց, իսկ ես բըռնեցի կատախ ետեի ստերը և սեղմեցի գետնին:

—Երբ խովէ, Սարօ, զու խոկոյն ստերը բաց թող, թէ չէ երեսիդ կը թռչի:

—Մէկ, երկու, երեք,

Նոյն բազին ահազին ուժով կացինը կատախ պոշին իջաւ, քամու արագութեամբ կատուն շրացաւ և կարաւ ծառների մէջ և մեր տռաջ մետք նորա բրգուտ զեղեցիկ պոշը:

Վերջացաւ, ասեց Մահուէլը. տիրացուի կատախն կորած է, հիմա թէկուզ ինձ սպանէ էլ, պէտք չէ, մենք մերը արինք. կացինը տեղը զընենք ու գնանք զաստուն, տղերը:

Մենք նոյն ծառապարհով, որով մտել ենք պարտէզ, զուրս եկանք, վերտպարձանիր սովորական ճանապարհով վարժատուն և ոչնչից անտեղեակ անմեղ զառների նման՝ եկանք ու նստեցինք մեր տեղերն այն ժամանակ, երբ խալֆան արդէն երկրորդ զան էր սկսել և առում էր աշակերտներին.

—Աւրեմն ուշմերորդ պատվիրանըն է. —մի գողացնար, այս ինքնի գողութիւնն ով անիլ և իններորդը «մի սպանանելը», այսինքն չնշաւոր էակ մի սպանիլ:



մի իշխակ զգացմունք — անհուն վիշտ և միայն մի միտք՝ գտնել, գտնել, անպատճառ գտնել կատարել:

Առաջի օրը, երբ տիրացուն համոզւեց, որ կատան իրօք կորել է, նա ամեն ինչ մոռացած, առանց քաշելու աշակերտերի ծալրից, առանց նոյն իսկ նկատելու նրանց, առանց թարցելու իւր ահազին ցաւը, ցնորւածի պէս, ընկառ իրանց տան, վարժատան, պարտողի բոլոր քունջ ու պուշախները, որ զույց գտնել կատարին: Նա մի տեղից միւս տեղն էր վազում, մի մեծ բան մոռացած մարդու մտազբազութեամբ, կզանում էր կամ շորում ամեն մի ճեղքի, ամեն մի բացւացքի առաջ, ընթաց փաղաքշական ձայնով «փիսօ, «փիսօ» կանչում և փոշոտած, կեզտոտած վեր էր կենում, որպէսզի ուրիշ տեղ գնա պտուելու: Երկրորդ օրը, երբ առաջին տպաւորութեան զօրութիւնը անցաւ և տիրացու Յունանը համոզւեց, որ կատան ճիշտ որ կորել է, նա սկսեց դարդ անել այս բառի բռն նշանակութեամբ:

Տիրացու Յունանը իր գիտնական բարձրութիւնից յանկարծ վար իշտ, անմիջապէս կորցրեց իւր սահմանափակ անձնապատճանութիւնն ու հպարտութիւնը և մէկից գարձաւ մի սպարմելի, մի խզճալի անօգնական էակ, մի սովորական մարդ, որ տընում է իւր անբազութեան ծանրութեան տակ:

Զրացաւ նորա ծայրահեղ կտուկածստութիւնը, կորաւ նոյն իսկ նորա արհամարտանը ու թշնամութիւնը գլուխ աշակերտները և նորա մէջ մնաց

— Քրջապատսզներին բոլորովին մոռացաւ նա, բոլորովին մոռացաւ իւր պարապմունքները, գրրերը, վարժատունը, եկեղեցին և ժամերով շարութեակ գարձեալ ման եկաւ վարժատան պարտիզի, իրանց տան գանազան անկիւնները, բայց

Նիմա ոչ երեկուա հապճէպութիամբ, այլ աւելի հանգարտ, բայց և աւելի տխուը ու տրտում... Խըզնի խայէ՛լոց զգալով, մենք, ես և Մահուէլը, ակամա հետեւում էինք Յունանի որոնումներին և ժամանակ առ ժամանակ զգաւմ էինք մեր կատարած շարագործութեան համար, այնքան սպարմելի էր դարձել Յունանը, այնքան զժբաղզ: Միշտ խնամքով սանրւած մաղերը զգգլած, վերայի հազուտը կեղոստուած, երեսը անլւա, միրուրն ու բնիսերը լինձկւած ու խաւեւած, իւր կօնկորաները հապիւ ետիկից բաշելով, մի անկիւնից միւսն էր զնում սպօրմելին, մի տեզում հանգոստութիւն շգտնելով: Եւ նորա խորն ընկած ու մարտծ աշքերի մէջ, նորա գալկացած, հիւծւած՝ ու վշտոտ երեսի վերա մենք կարգում էինք հիմա մի բան՝ «ո՞ւր է»:

Նորա կաշէ կազմով, խնամքով պահպանւած նարեկը ընկած էր այն վարժատան նախասնեեկի պատի տակ, նորա «օքնեեալ վայտը», մեզ վերա սարսափ բերող բանոնը, ընկած էր, իւր տիրոջ ոկտ անօգնական և անզօր, զրբի կողքին և Յունանը զրանց մօտից անցնելիու այսու շէր էլ նայում իւր զիստութեան ու իշխանութեան յատկանիշ պատկանելիքների վերա: Նա մեզ տշակերտներիու էլ չէր նկատում այլ ես ուրիշ ան-

դամ, ականջը ձայնի ոլահած կասկածոտ Յունանը, որ ամեն մի անմեղ ակնարկ կամ շնունջ, իւր գէմ գաւ ու բամբառանը էր կարծում, հիմա ատելի «թոփալ զե» անունը, եթէ երեսին տուած լսէր, անձայն ու անխօս կանցնէր, մտապազ ու յուսահատ:

Եբբ այդ բայրը խուզարկութիւնները ոչ մի հետեաներ չունեցան, տիրացու Յունանն ու իւր մայրը փակեցին իրանց տունը և փողոցներին ընկան կատան ման գալու:

Մի անգամ ես ներս պատահեցի այդ ողորմելիներին, նրանք տուն էին վերտպոնում անյաջով սրնուումներից դուրսած ու յուսահատ, Յունանը զլուխը կախ, վերտպիկուի կոճակները բացւած, վէսը անկանոն զիսին զբած, կաղալով տուածից էր զնում, մերիթ ընդ մերիթ տխուր ու զինող հայեացրներ ձգելով պատերի տակին, կըտուրների վերա, իսկ յետից զնում էր նրա պառաւ մայրը իւր ամրող ուշագրութիւնը, իսկըն ու միտրը զամած իւր թշւառ որդու վերա... Սրանք այսու ման եկան ամբողջ բաղարը երեք օր, բայց տպարդիւն՝ կտաւին շգտան, սասով զըլիով կորել էր կատան և ոչ ոչ մի տեղեկութիւն անգամ շէր կարսղացել տալ ողօրմելիներին:

Քրանից յետո նրանք մի ամրող շարաթ

փակեցին տան մէջ և Յունանը այդ ժամանակ  
համարեա թէ այլ հս չերեաց միը տշրին... բայց  
այն հառաջանքիները, այն ազիսպորմ ձեխը, որ  
ես լսում էի Յունանի սենեակից առաւօտները  
վաղ վարժատուն զալիս՝ պարզ ապացոյց էին,  
որ Յունանը իւր ցաւի հետ է զեռ:

Այն «մանիների» ձեռվ և եպահակով, որով  
հին ժամանակիները մայրերը իրանց մահացած որ-  
դիների համար տիրանեագ էին երգում, Յունա-  
նը, մի կողմ թագած գրաբառը, ողբում էր իւր  
վիշտը, իսկ ողօրմելի պառաւը, իւր որդու ձե-  
ռից գիտը տեսնելով, զիխին էր տարիս ու հա-  
ռաշում:

— Ահա, երգում էր Յունանը կցկառւը հառաշ-  
ներով, անտ, տարան իմ կատուն, իմ սիրուն  
կատուն, անառաւածները անգութ ձեռներով պո-  
կեցին նրան ինձանից ու տարան:

Զէ, անա ջան, չէ, նա ինքը չփախաւ, նը-  
րան զօրսվ տարան... անօրէնները լաւ զիտէին,  
թէ ինչ են տահում ու զօրսվ տարան կատուն...

Ախ, անա ջան, ախ, մոր է, մոր է, ինչու  
բովս չէ, ինչու մլաւելով չի բաւում ձեռիս, ա-  
նուշ մրմուցը ինչու էլ շեմ լսում... ախար նա  
ինձ իւր մրմուցով էր ընացնում...

Մնա, ես երեխի պէս մեծացրի նորան, և

ինչքան սիրուն էր և ինչքան ուրախութիւն էր  
պատճառում ինձ. մարերս ցրում էր, հոգսերս  
ու թշտառթիւնու մոռանալ էր տարիս ինձ,  
բայց ինչ ոգուտ, տարան, գտժան, թշտամիներս  
տարսն...

Իմ թշտամիներս շատ են, մէկը հազարի վեմ  
ինչպէս կալի... նրանիր յակթեցին ու տարան,  
տարան անա ջան, տարան...

Այսպէս էր ասում խեզ Յունանը և նորա-  
ձայնի ցաւատ ելեէնները, նոյն խոկ ընթայչ հիշեն-  
ները, ցայց էին տարիս, թէ որբան անկեզծ ու  
մեծ է նորա կոկիծը:

Որդի, պատասխանում էր նորան մայրը զով-  
գոջուն ձայնով, խնայէ րեզ, ի ուր Սոտուծո-  
գու րեզ հալեցիր, մաշեցիր, զու րեզ ալդպէս  
տանցելով, կենդանի կենդանի վերաս քար ձգի-  
ցիր, հոգը զիխիս տիր, իմ տշրի լուս, իմ գլու-  
ցիր արի Յունան ջան, խնայէ րեզ, խնայէ մօրդ,  
զոր արի Յունան ջան, ինչու զիխի, կ'զանի,  
զարդգ ներս մի ձգիլ... կ'զանի, կ'զանի,  
Սոտւծ սղօրմած է...

— Ինչու, ինչու, յանկարծ զուսում էր յաւս-  
հատական ձայնով Յունանը. ինչու կորցրիր... ին-  
չու պատահանը բաց էիր թսպել, թողել էիր որ  
զու պատահանը բաց էր թսպել, թողել էիր որ  
փփախչի, որ տանեն, որ զովանան... անա, զի-  
փփախչի, որ տանեն, որ զովանան... անա, զի-

ցիր... զոլանից յետո լսում էր անբակդ պաշումի հեկեկանքն ու լացը.

— Վայ, հոգին իմ զլխին, տղիս ձեռքէ զնում է, տղիս զարդ վելատա արաւ, վայ հոգին իմ զըլխիս... ձեռներ, ձեռներ, տանող ձեռներ, չոլխնար, զուշմաններ, զագեր, եարստիր, որդնոտիր ու թափիր... էլ ինչու պիտի շրուանան այս աշերը, որ չտեսան տղիս զուշմանին, ինչու չպիտի թափին այս ձեռները, որ չպահեցին, չրպահանեցին աղիվս աղբանքը... նորից ոկրում էր խեղպւած հեկեկանքն ու լացը...

Այդ յուսահատական աղպակներն ու լացը այնպէս սաստիկ էին աղբում մեկ վերա, որ թէ ես, թէ Մանուէլը, երբ լսում էինք հարհան ոենեակից մօր ու որդու խօսակցութինը, աշխատում էինք ֆախչել և շիմանալ այդ զանգատներն ու լացը, որոնց պատճառը միայն ու միայն մենք էինք:

Մենք զգում էինք, որ Յունանին շատ խիստ ենք պատճել, մեր խիզճը մեկ տանջում էր և մենք բաշւում էինք հիմա միասին այդ բանի մասին նոյն խոկ խօսերուց:

Մեր մէջ միայն Գրիգորն էր, որին ամեննեին չէին շարժում տիրացուի այդ կոծն ու շիւանը և որը նայում էր Յունանի այդ վշտին ոչ առանց

բաւականութեան. Նա թէի տակը նոյն խոկ ծիծագում էր Յունանի վերա և զարժանում, որ մենք, իւր գաւակիցները, չենք ուրախանում Յունանի այդ վերջնական տապալումով:

Մի անդամ նա Յունանին նոյն խոկ ծագրեց.

— Տիրացու, ասեց նա Յունանին, վարժատուն գալիս այսօր, պատովիկնեց այգու ցանկապատի վերա կտաւիզ տեսութիւնը ուրիշ կատար հետ. խոկ բո կտաւն էլ, ինձ տեսաւ թէ չէ խոկոյն վախաւ բազը մտաւ:

Այդ խօսակցութեանը ես ներկա էի. Յունանի խորի ընկած աշերի մէջ վիալից այնպիսի յոյսի, ուրախութեան և խոր չնորհակալութեան նշաններ, որ ես աղշած մնացի և սաստիկ խղճի խալթոց զբարով, թողեցի և յետ բաշւեցի:

Նոյն վարկեանին տիրացուն արագ արագ, ինչքան որ թոյլ էր տալիս իւր կոտրւածոր, մսունալով նոյն խոկ ֆէսը ծածկել, զուրս եկաւ փողոց և զնաց գլամի Գրիգորի ցոյց տւած տեղը...

Գասերը վերջանալու ժամանակ նա 'ի հարկէ, ձեռնունայն յետ եկաւ և սոսնց յանգիմանութեան անցաւ իմ ու Գրիգորի մօախց և զնաց տուն, երկրորդ անգամ ես զգացի խզճիս խայթը...

Ենցաւմի բանի օր ևս, ու կամաց կամաց, տիրացոն սկսեց վարժատուն յաճախել և զորանից առելի սղորմելի ու գժբազգ պատկեր ևս չեմ կարող երեակայել. մազերը զզզդւած, գէմքը զալկահար, մարմինը կարծես աւելի փարբացած, մէջը կուացած, շորերը կեզտոտ, վերաբերն չկոճկած, նա ուրաւիտնի պէս ման էր զալիս զառերի ժամանակ իւր նախառենեակում: Մերթ ընդ մերթ նստում էր իւր սովորական տեղը, լուսամուտի առաջ ժամագիրը կարգալու, բայց վայրկենապէս, սրտի ներքին խսովումիւնից, վեր էր բարձրանում և նորից սկսում բայցել:

Գառամիջացներում թէպէտ առաջւառ պէս էլի ներս էր զալիս կրկնութիւններ անելու և կարզը պահպանելու, բայց զա այլ ևս այն տիրացու Յունանը չէր. նա աշակերտներին էլ չէր նկատում, կամ թեին կռվնած մի որ և իցէ կէտի էր նայում, մատայլ ու ախուր, կամ կարդում էր մնարեաբար իւր նարեկը: Ոչ որի այլ ևս նա չէր զիպչում, բաններ—«օրհնեալ վայտը» կորել էր և առանց այդ «օրհնեալ վայտի» նա նմանում էր հիմա մի սղորմելի ընտելացած գայլի, սրի պատմները բաշել են:

Նա հիմա շատ բիշ էր խօսում և եթէ խօ-

ուսմ էլ էր, խօսում էր համարեա մեր սովորանիան բարբառով:

Մի խօսրով՝ Յունանը կատարելապէս կերպարանափոխեց և մի անզգա բան դարձաւ. իւր օդնականի այդ դրութիւնը վերջապէս խալֆային էլ անհանգստացրեց, որ մինչե այդ՝ տուննձին նշանակութիւն չէր տալիս Յունանի սաստիկ վըշտին. խալֆան հիմա պարտը էր համարում Յունանին ժամանակ առ ժամանակ, միսիթարել նոյն իոլ.

— Տիրացու, ասում էր մեր բարի ու միամիտ խալֆան, ախար ինչ է կատուն, որ զօրա համար այդպէս սաստիկ զարդ ևս անում. չկա կատու, մի ուրիշը զալիս, սիրելիս, ախար զա երեխայութիւն է արածզ.

— Դու զաւակ չանես, արժանապատիւ խալֆա, պատառխամիսմ էր Յունանը սաստիկ լրջութեամբ, բայց եթէ պատահեր և զտնէիր փոզոցի մէջն երեխաս մի անօպեական, զրելիր, տուն բերէիր, խնամէիր ու խապայիր իւր հետն և ուրիշ միսիթարութիւն չունենալով տատասկոտ աշխարհ հի մէջն, նորանից տհանէիր ուրախութիւնն և գլուխնայիր, որ միակ չնշաւորն է մէջ փուշ աշխարհի, որ բեզ սիրէ, ապա եթէ երեխան այն կորչէր, բաւականանայիր և համոզվէր արզեօք

զու, թէ ասէին, չէ պէտք տիրել, բան զի կան  
այլ ահառէր երեխայր: Ոչ, արժանապատիւ խալ-  
ֆա, մի մխիթարէ զիս, վիշտն իմ մհծ է, ան-  
սահման, հասան նպատակին իւրեանց թշնամիքն  
իմ բազում. լամ ևս ներկայիս, ինկան նորա...  
բայց Աստւած եմ յուսացի, Աստւած եմ յու-  
սացի. շատ շուտ կոտանան հատուցում անօրէնք:  
Եյնժամ, միայն այնժամ, ով արժանապատիւ  
խալֆա, երբ լան նորա, կմխիթարւիմ և կը-  
ինդամ ևս. հիմա մի մխիթարէ զիս:



## Կ Ա Տ Բ Ի Պ Ա Զ Է

Ենցաւ մի քանի օր և կտրծես տիրացու Յու-  
նանը հանգստացաւ և մոռացութեան տեսց իւր  
ցաւը: Իւր սովորական ճշտապահութեամբ, ինչ-  
պէս առաջ, նա սկսեց եկեղեցի գնալ, վարժառուն  
գալ, դասամիջոցներին կարգ պահպանել և այլն.

Վերան, զլուխոր, մազերը կարգի բերեց, իւր  
զործին կանգնեց և մեր վարժաբանական կեանին  
ստացաւ իւր սովորական հստանը այն տարրե-  
րութեամբ միայն, որ Յունանը հիմա այլ ևս մե-  
զանով այնքան չէր հետարրբուում և, հետե-  
պէս, առաջւան նման էլ չէր ծեծում ու քաշում:

Նա մտրի մէջ էր լնիկի:

Դասատան մէջ նստած, հինգ տասը բոսէ  
շարունակ նա լարւած մի բանի վերտ էր նա-  
յում և նորտ ուշագիր, անիթարթ նայող աշերի  
հայեացրից պարզ երեսում էր, որ նա մտածում  
է ու վճռում մի ինչ որ լուրջ ու նշանաւոր հարց...

Դասամիջոցներից յետո Յունանը անմիջապէս առանձնանում գնում էր պարտիզի խորքերը, այնաև հս մենք հասուց նկատում էինք նորա երեսին նոյն լարւած մտախոհութիւնը:

Պարզ էր, որ Յունանը գեռ չէր ավտուել իւր կորստի տղաւորութիւնից և այդ մտախոհութիւնը հինգ դօրա մտսին էր: Բայց շուտով մենք համոզւիցինք, որ մենք էլ ենք առարկա այդ մտրերի:

Դասատան մէջ նոտած, դասամիջոցներին, Յունանը գնում էր ժամագիրքն իւր առաջը իրքի թէ կարգում է, և անթարթ նայում էր վերան, բայց մէկ էլ լանկարծ նորա զննող, խուզարկու հայեացը զրից վեր էր բարձրանում և ընկնում մերթ Մանուելի, մերթ իմ վերա և այնպէս երկար վերաներս մնում, որ մենք անհապաւութեամբ աշերս խոնարհում էինք, սոսկումով զգալով, որ Յունանը մեզաւորին է սրոնում և համարեա կուռում է:

Այդ երկար, թինող, զննող, խուզարկու հայեացըները մեզ համար աւելի տարեկիչ սկսեցին զառնալ, բան նորա բանանի հարաւածները: Եւ ցան թիշ է, բանի զնացին, այդ հայեացըներն աւելի կառկածս գտրձան, հալածող, ճիշով:

Մերթ տնձայն հեղինում էր նա մեզ և նորա

հայեացը կարծես առում էր. «զուք հանգիստ էր՝ ի հարկէ, բայց ես արդէն պարզում եմ բանը», մերթ նա մեզ սպասնում էր և նորա անձայր շաբաւթեամբ ու վրէժինդրութեամբ լի հայեացը պարզ տրախայտում էր «սպասեցէր զուք, իմ ժամանակն էլ կ'գտ», մերթ նա յանգիմանանում էր մեզ և նորա վշտոտ աշերի մէջ մենք կարպում էինք. «անխուզներ, ինչու, ինչու արեցիր»:

Այսպէս շաբաւնակ, որտեղ էլ մենք հանդիպէինք Յունանին, նորա երկար անթարթ հայեացըները հետեւում էին մեզ, հայտնում և մենք հիմա աշխատում էինք նորանից խոյս տալ, ինչպէս մի ժամանակ, զուրու, ինքն էր մեզանից խուսափում և խորշում:

Մեր մէջ միայն Գրիգորն էր հանգիստ և ամենին չէր էլ ուզում տեսել ու հասկանալ տիրացուի տնձայն ախտարկիները.

— Ինչուց էր վախում, առօս էր նա մեզ, երբ առանձնացած էինք լինում և մեր կասկածները միմիանց պարզում. կատուն ստով զիսով կարել է, էլ սրտեզից տիրացուն պիտի տհոնի, թէ պոչ չունի, այնպէս բան ենք բռնել, որ տիրացուն չէ, նորա պտղն էլ լինի բան չի հականալ.

— Բայց ախտր պարզ երեսում է, ասեցի ես,

որ տիրացուն մեզ վերա է կասկած տահում, ինչ  
անենք, եթէ մեկը տեսած լինի բանը և տիրա-  
ցուին տած:

—Ի՞նչ պիտի անենք, ասեց Մահուելը, պա-  
տասխանը պիտի տահը.

—Ոչ որ էլ չի տեսի, դարդ մի արեք, ասեց  
Գրիգորը, այնպէս տեղ չկտրեցինք, որ մարդ տես-  
նէք:

Բայց զուր յայսեր էին գորա, բանը բացւեց  
այնպիսի պարզ կերպով, կատարւած զործը  
հաստատւեց այնպիսի անվիճելի փառառով, որ  
մտրերով էլ երբէք չէինք կարող անց կացնել:

Մի զեղեցիկ օր, երգեցութեան զասից յե-  
տա, երբ խալֆան ամենամեծ աշխուժով և ոգե-  
րութեամբ պատճում էր մեզ մի ամենահատա-  
քրիք զետք մեր պատճութիւնից և մեր ան-  
թարթ, ամեն բան մոռացած լուսմ էինք նորան,  
յանկարծ ահազին թափով զառատան զուռը  
բացւեց և ներս ընկաւ տիրացու Յունանը:

Նա հեւում էր ու զունաթափւել էր սաստիկ  
յուզմունիրից, նորա աշքերը փայլում էին ահառ-  
փոր փայլով, ձեւքերը գոլում էին:

Ենսովոր տեսարանից մենք բոլորս վեր թը-  
ռանք, իսկ խալֆան իւր կանգնած տեղը մեխ-  
ած մնաց:

Երբ հասաւ գացատան մէջ տեղը, տիրացուն  
յանկարծ ձեռը ծոցը տարաւ, հանեց այնակից  
մի ինչ որ երկար բրդոտ բան, որբութեան պէս  
գլխաւ վերա բարձրացրեց և զուաց տնենկարա-  
գրելի կատաղութեամբ:

—Երգարաւթիւն, արգարաւթիւն:

Ես ու Գրիգորը ցնցւեցինք:

Տիրացուի ձեռի մէջ կատւի պոչն էր, մեր  
կտրած պոշի:

Մինչ մենք սարսափահար Յունանին էինք  
նայում, իսկ խալֆան ապշութեան ու զարմանքի  
մէջ, մերթ պաշին էր նայում, մերթ իրան Յունա-  
նին, ոա մի բայլ ևս տուած եկաւ զետի խալֆան  
և, կատւի պաշը օդի մէջ թափ տալով, նորից  
զուաց:

—Երգարաւթիւն, արգարաւթիւն հայցեմ.

—Հանգստացիր, տիրացու Յունան, հանգստ-  
ացիր, ասեց ուշի զարով խալֆան, ինչ է  
պատահել, այդ ինչ բան է.

—Ինչ բան է, պոչն է, պոչը, զոչնց Յունա-  
նը սղբերգտկան ձայնով.

—Պաշը, ինչ պոչ, ում պոչը, խելտպարել  
ևս բոլորսին, ինչ է...

—Ում պոչը, իմ կատւի պոչն է նոյն եղա-

Նակով կրկնեց Յունանը և պաշին նայեց անասելի դառնութեամբ:

— Ըստ լաւ, թող լինի քո կատի պօչը, բայց ինչն ես բերել, ես ինչ պիտի անեմ այդ բանը... ֆու, ինչ գարշելի հոտ ունի, տար զէն ձգիր այդ ազրը.

— Քեզ համար ապր, բայց թշւառիս զուցէ միակ մխիթարութիւնն է այս. Էր այգալու անարդ զիս, պատելի խալֆա. յետ այսորիկ զայս բերած եմ իրեն փաստ արդարագատութեանդ համար: Ազերում, հայցեմ, պահանջեմ զայդ արդարագատութիւնն:

Այսպէս տսելով՝ Յունանը իւր անոտհման վը թժխնդրութեամբ լի հայեացրը ձգեց տոտջ Մանուէլի և ապա իմ ու Գրիգորի վերա:

Գրիգորի տեղին ու տեղը չսրացաւ:

Ես, սարսափահար, Մանուէլի երեսին նայեցի. Մահեւէլի նստած էր անյոզգոզդ և ոչ մի մկանանք չէր շարժւում նորա երեսի վերա: Նա անթարթ տիրացուին էր նայում, ինչպէս մի ըմբշամարտ, որ չափում է հակառակորդի ոյժի ու շարժումները:

— Այն, պահանջեմ բեզանից արդար դատաստան, կրկնեց խալֆալին դառնալով՝ Յունանը և պոչը սեղանին դրեց,

— Բաւական է վերջապէս զուրս տար, տիրացու, ինչ է ուզածդ, ինչու ես խանգարսում ինձ, ինչ դատաստանի համար է խօսրդ, ասաց խալֆան աւելի և աւելի զրգուելով և զայրանալով: Առաջ, կամ վեր առ այդ գարշահստ պօչը և զուրս գնիա...

— Եվերսոմ, պահանջեմ զունկնդրութիւնն, ոչ երթիցին... ասաց վճռական կերպով և պահանջի եղանակով Յունանը. ոչ, ոչ երթիցին:

— Դէ, պատմէ ուրեմն, բացատրէ, որ հասկանամ—անհամբերութեամբ առեց խալֆան:

— Ունեին զիր, արժանապատիւ խալֆա, բանեզի բարերար ես եղած ինձ, հայցին ՚ի ըլին զվերգի բարերարութիւնն—դատաստան մի անեաշաս, չին բարերարութիւնն—դատաստան մի անեաշաս, յայտ է ըեզ, զիտեական տեր իմ, զի ունեի ես կատաւ մի զեղեցիկ, զարն ինհամելի և պահէի ի մահուկ տիսց, յայտ է ըեզ և այն, զի օր մի շարժում տիրացուին էր նայում, ինչպէս մի ըմբշամարտիկ և ասլարազդ կորտւ այդ արարածն շարաբառուիկ և ասլարազդ կորտւ այդ արարածն շեորհալի. առաջի նւագ զիպւածն այդ ցաւալի ես վերազրեցի շար հանգամանաց և անբազութեան իմս, բայց տպա երբ ուշի ուշավ զիտեցի պարագայրն իմ, տեսի զի բազում են թշնամիքն իմ և կատարեալ է առա եղանակործութիւն իմն սոսկալի. մտաբերեցի զայն զժբագդ աւուր իմն սոսկալի. մտաբերեցի զայն զժբագդ աւուր իմն շրացաւ կատուն իմ, ամենայն մահամաս-

նութիւնը հ ստուգեցի, որ բազում լժշամիաց խօսց ամենակառավագիքն, լժւով երեք, այն զժրազդ օրին ոչ կացնի մէջն զասատան, ուր ես կարգ պահպանելի: Տուն եկի և տեսի զի օրին այդ ընեալ եր մայր իմ և պատուհանը սենեկին իմո բաց. չը պարզ արգեօր արեգակի նման, զի այդ կատազի լժշամիքն իմ զսպացեալ և տարեալ էին զկատուն իմ անօպնական, մտնելով մէջն իմ սենեկի բաց պատուհանիցն: Բայց արդ, մոր էին ատացոյցը, այդ ատացոյցը ոչ կային, սակայն ինքն ամենական, արգարազատն Առած օվանեաց ինձ և տեսաց ինձ տհա: Երբ ժամ մի առաջ ես ճեմելի Տեռու անկիւնում պարտիզի և մտածէի և կրկին մտածէի սսոկալի եղեանազործութեան տոթիւ, ոտք իմ սայթարւեցաւ, բուելով մի զիւրտահ բանի և ես զայր ընկա և զի՞նչ տեսի, զի՞նչ տեսի... ոչ, տեսի պոչն իմ կատուի, զոր առտ հանգչի ի վերա սեղանի ի մեծ զարհութանը պոշահոտ անօրինաց...

Այս ասելով տիրացու Յունանը պոչը սեղանից վեր առաւ և խալֆային ցայց տալով շարունակեց. զու հարցանես, Էր կա առտ պոչն. պոչն այս առտ կա, որ սարսափ բերէ, սսոկում ու զարհութանը ազգէ ի վերա ամբարիշտ շարազործաց, այս ասելով տիրացու Յունանը նո-

րից ձգեց իւր հայեացը մեր, երեք զաւադիլ-ներիս վերա և պոչը սպառնական շարժումով ցնցեց օդի մէջ:

Խալֆան ուշագիր լսում էր Յունանին և երբ ուս վերջացըրեց նա ասաց.

— Ուրեմն բո կարծիքով, տիրացն, այդ պոչը բո կատուի պոչն է և կտրել են մեր տղերը:

— Որ պոչն է սա իմ կատուի զա պարզ է, նոյնպէս, ինչպէս սու մատն է իմ, ասեց Յունանը ցուցամատր տնկելով:

— Ճատ լաւ, յետն.

— Ցետ այսորիկ առա են պոշահատըն և զա նոյնպէս ճիշտ է և պարզ, ինչպէս այն, որ ասու է այս պոչն, արգարաւթիւն, տուր ինձ արգարաւթիւն, բարերարդ իմ:

— Բայց մզքեր են տիրացու, ում վերա ես կասկածում. տղերը ինչու պիտի կատուիզ պոչը կտրեն:

— Կտրեալ են, կտրեալ և զարհութելի ոճիրն կտաքազովքն, անխիզմ պոչը կտրովքն են Մանուկին Մանուկեան, Սարգիսն Թոռունեան և Գրիգորն Սեյյան, ասեց տիրացուն և ուզիզ կանգնեց մեր զէմուգէմը:

Ես ու Գրիգորը սարսափեցինը տիրացուի հայեացը մէջ փայլող ահաւոր վրէժինդրութիւնից:

— Բայց ինչու ես հեխապրում, ինչու ես կարծում, որ անպատճառ նորմնը են, կարսդ էին ուրիշ մարդիկ կտրել, զօր օրինակ թուբրի տղայք, շարութեան համար, շարունակում էր վիճել մեր բարի խալֆան, չկարսդանալով հաշտւել այն մտրի հետ, որ պաշտ մենք ենք կտրել:

— Ոչ, ոչ արժանապատիւ խալֆա, մի երկրայիր, զօրտ են, զօրտ երգւում եմ կենացն փայտիւ.

— Տպերը, լսում եք ինչ է առում տիրացուն, պատասխանեցէք, զար եք, առաց խալֆան դիմելով մեզ երերիս: Բայց երերիցս միան Գրիգորը խօսեց արտգ արտգ ու անկապ:

— Ինչու պիտի մենք կտրենք կտուի պաշը, խալֆա... տիրացուն սուտ է խօսում... ինչ զործ ունենք մենք նորտ կտուի պաշի հետ... կտրելի է ինքն է կտրել, մենք խարար չենք...

— Տգետ և անմիտ բարբացանք. — ինքս կտրեմ զպսչն սեպհական կտուի, առեց տիրացուն դառն հեղնութեամբ ու արհամարանքով, եթէ այդ է խօսք նոցա, շարունակեց նա, ապա ուրիմն թոյլ տուր ինձ, արդարամիտգ խալֆա, քննեմ տշտկերաց և իմանամ զծմարտութիւնն:

Խալֆան տատանւում էր:

Մենք հասկանում ենք, թէ ինչ է նշանակում Յունանի քննութիւնը. անվերջ ծեծ ու բարչով նա մեզ խստավանել պիտի տար մեր յանձանըը: Եւ Մանուէլը տեղից վեր կացաւ, մի թեթե զսնատութիւն միայն յայտնում էր նորայուղմունը:

— Խալֆա, առեց նա, նայելով, ուզիղ խողփայի երեսին. տիրացուի կտուի պաշը ես եմ կտրել, էլ ոչ որի շմեղագրէք: Ուրախութեան կայծը փայլեց Յունանի աշերի մէջ և նա զուցեց շտապով.

Տհսար, արժանապատիւ խալֆա, տեսմր... բայց սուտ խօսի եղեռնապործն, մի ջուխտ ձեռաց զործ շէ կտրելն պոչի, մի ջուխտ ձեռաց զործ շէ...

— Այս, մենակ ես եմ կտրել, կրկնեց Մանուէլը:

Ի՞նչպէս, ինչպէս կարսդ էի ես թոյլ տալ, որ իմ սիրեցեալ ընկերը իմ մեղքելն էլ ինքը բաւէ, ես էլ վեր ելա.

— Խալֆա, առեցի ես, Մանուէլը մենակ չէր, ես հետն էի... միասին կտրեցինք.

— Ի՞նչ առեմ, խալֆա, երբ ամեն բան բացւեց, ես էլ եմ մեղքաւոր, տաշջ սուտ խօսեցի, առեց Գրիգորը իւր գօտիկի հետ խաղաթիւ:

Տիրացու Յունանը յաղթական հայեացրով  
նայեց մեր խալֆայի վերա։ Գտա սպանուզաց  
իմոց և գատաստան, գատաստան պահանջեմ։

Մեր սճիրը ապացուցւած էր ամենաակների  
կերպով և սաստիկ զայրոյթը երեսին խալֆան  
արագ քայլեց ոննեակի մէջ։

— Աւեմնի իմ չանրերիս, աշխատանքիս պլ-  
տուզը սա է, ուրեմն իմ խրատները, խօսքերը,  
ոչինչ են ձեզ համար . . . , այդպէս մարդուն  
սաստիկ հարւածել . . . , չարազործի պէս արիւն  
թափել . . . միանդամայն անսպասելի էր, միան-  
դամայն անոռուսելի . . .

— Թող պատճին եկեռնապարծր, ազաշեմ,  
յահճնէ շտրագործաց գատաստանին իմո. եռ ուզ-  
գեմ զայտ, ուզգեմ, բարերարդ իմ, առեց Յունա-  
նը մարդահամ ձեսով, տեսնելով խալֆայի յուզ-  
ւած ու զայրացած զրութիւնը։

— Եյդպիսի եկեռնական ձեսվ մարդուն այդ-  
քան խօր վիրաւորովները՝ արժանի են պատճի,  
տիրացու, արտ դատաստանդ, ասեց խալֆան  
ամենամեծ զայրոյթով և արագ զուրս եկաւ զա-  
ստանից։

Նոյնպիսի արագութեամբ գատաստից զուրս  
զեաց և տիրացուն և գատաստան զուրը վերա-  
ներս փակեց, որ չինի թէ զուրս փախչենը։

Մի րոպէ չանցած նա վերապարձաւ ահագին  
փալախան ձեսին։ Գտ այն փալախան էր, որի  
մէջ կոտրւել էր իրան, Յունանի ստը և այդ գոր-  
ծիրը Յունանը իւր տան մէջն էր պահում իրի  
յիշատակ, որ մնացել էր նախկին աւսուցիչ  
Ղազար խալֆայից։

Փալախան անցած ժամանակների բարբար-  
սական պատճիմների մի գործիք էր, որի մէջ հին  
խալֆանները զնում էին իրանց տշակերտների  
մերկացրած սաները և ճիպոտներով ծիծում զար-  
շապարը. զա մի մեծ փայտ էր, որի մէջ անց  
էր կացրած երկու կողմից պարանի ծայրերը և  
ամբացրած. պարանի և փայտի մէջ տեղի էին  
զնում պատճւողի սաները և փայտը կամաց կա-  
մաց պալացնում այնպէս, որ պարանի երկու  
կողմից էլ փայտին դատիքաթւի. պարանի և փայ-  
տի մէջ եղած տարածութիւնը բանի զնում պա-  
կասում էր և սաները սինդ սկզբան էին մնում  
պարանի ու փայտի մէջ տեղը. պատճւողին պար-  
կեցնում էին մէջրի վերա, փայտի երկու ծայրե-  
րը բանել էին տալիս երկու հոգու և երր այդ-  
պիսով աշակերտի սաները մնում էին օդի մէջ,  
ոկում էին փայտերով խփել սաների տակին։

Երբ փալախան կարգի բերւեց, տիրացուն  
հրամայեց աշակերտներին հեռանալ գատաստից։

Մնացինք ևս, Մանուէլն ու Գրիգորը և ամենամեծ աշակերտներից երկուսը, որ պիտի օգնէին տիրացուին պատճի ժամանակ։

Դիւական ժպիտը երեսին, ճիպոտը օդի մէջ փարտելով տիրացուն ասեց.

Եկաւ, եկաւ և իմ ժամանակը, ինչպէս զիս լացուցիք, լացուցանեմ և ես զձեզ. անմեղ ու ձեր ձեռօր տանջիալ չորրոտանու համար մի տիրանաւագ երգել տամ, որ ուր էլ լինի նա, լու։ Հան ստներդ, ասաց զահիճը Մանուէլին, զու առաջինը պիտի ուտես կերակուրն խրատական, բան զի առաջինն ես մէջն ամենայն չար գործի. հան ստներդ, ահօրէնկ զու։

Առանց մի որ և իցէ տատանման Մանուէլը հանեց ստները։

Արագ շարժումավ տիրացուն գետին ձգեց Մանուէլին մէջրի վերա, կապկի ճարպիկութեամբ իւր զօնի ստները փալախայի մէջ զրեց և արագութեամբ փալախայի փայտը պլատցրեց. յետո, երբ փալախան պինկ սեպմեց խեղճի ստները, տիրացուն փայտի մի ծայրը մի տղային միւս ծայրը միւսին տւեց, որ բոնեն, իսկ ինը ուզգեց իւր թերթը և սկսեց խփել ստներին, բայց ամենիսի թափով, որ ես և Գրիգորը նայել չէինք կարսղ. և բանի զնաց այդ թափը չպա-

կասեց, ընդհակառակը, բանի զնաց՝ տիրացուն կատաղեց, նորա հրեշտակին անզմութիւնը աւելացաւ և հարւածները տեղացին մէկը մէկից աւելի ուժզին, մէկը մէկից ահոելի, կարծես այդ ստները կենդանի չլինէին...

Մանուէլը լուս տանում էր իւր տանջանքները.

— Է՞ր շես երգում, Է՞ր շես երգում, մեզմ են հարւածը, ահա նորը, ասում էր տիրացուն կատաղութեամբ նայելով Մանուէլի զերմարդկային համրերութեանն ու անզպայութեանը.

Երդէն հէնց առաջին մի բանի հարւածներից Մանուէլի ստները արիւնոտեցին, ապա արիւնը սկսեց վաղել աւելի և աւելի, բայց զտ չէր կանգնեցնում տիրացուին, նա շաբունակում էր խըգել գոռալով.

— Մինչեւ շասես «մեղա», մինչեւ «համբուրես» ձեռքս և այս պոչը, որ զու ես կտրել տւակակող ձեռամբ քս, չիր քեզ փրկութիւն։

Բայց Մանուէլը լուս էր. ոչ թէ «մեղա», մի հեշին էլ զուրս չէր գտիս նորա կրծքից. սարսափելի ցաւից նա շրթունքն էր միայն կրծում. յանկարծ նա ինձ նայեց և ես նորա բերնին արիւն տեսա... սարսափելի ցաւերից Մանուէլը կծել էր իւր շրթունքը և արխին հանել. Երբ ես տեսա այդ արխինը, և նայեցի այն կտաղու-

թեանը, որով տիրացոն խփում էր Մանուէլին, իմ մէջո յանկարծ շանթի նման մի միտք անցաւ. թէ տիրացոն սպանելու է Մանուէլին—գնատիկ նման թռա տեղից և այնպէս արագութեամբ զուրո վաղեցի գասատնից, որ տիրացուն յետիցս այլ եռ չհսուաւ:

Սաստիկ լալով ես մինչե խալֆայի սենեակը մէկ վաղեցի և ազագակեցի խալֆայի ձեռը բըս-նելով. «Խալֆա, սպանում է, սպանում է»...

Խալֆան, որ խօրասուզած կարգում էր, ամեն ինչ հառկացաւ... Վիրաւորւածի պէս նա յանկարծ տեղից վեր ցատկեց և կայծակի արա-գութեամբ վաղեց զէպի գասատուն. ես և նա իրար ետեից գասատուն մտանք:

Տիրացուն շաբունակում էր իւր ծեծը զաղա-նային անդութեամբ, բայց յանկարծ ամեն ինչ ընդհատուց տիրացուի համար ամենասպասելի կերպով. մի արագութեամբ ու թեթեութեամբ, որ չէր կարելի սպասել մեր հաստ ու վէր խալ-ֆայից, նա յանկարծ թռաւ ու բնեց տիրացուի ուսերից և այնպիսի գօրսութեամբ նորան զէն շարտեց, որ տիրացուն վայար ձեռին մի սրբն-ժաց զնատիկ նման շորո հինգ բայլ հեռու ըն-կաւ զետնին և զլուխը սպատիկ թափով դիպաւ պատին:

— Անգութ, անօրէն, բանի մէկ զու սորանց տանջես, զուաց նա և ինքը իւր ձեռներով հա-նեց փալախան Մանուէլի սոներից, բանկը, բան-գոր բեզ բէչ է, այս ինչ է սորա սոները:

— Բարի, բարի, տանց տիրացուն սորի կանգ-նելով, զու էլ զուշմաններիս կողմն անցար.

— Լաիր տպուշ ու տիմար, զու էլ սատկես, բա զուշմաններին էլ, կորիր աշրիցո, եթէ ոչ ես իմ տէրը չեմ ու սոկորներգ կ'փշրեմ... զուրո, զուրո... ու էլ աշրիս չերկաս:

Խալֆան այնպէս էր կատաղի իւր տառշը բացւած զարհուրելի տեսարանից, որ բիշ էր մնում նորից յարձակւի Յունանի վերա, բայց ինչրան անգութ էր Յունանը փարքերիս հետ, այնիբան նա վախկոտ էր մեծերի առաջ, նա խո-կոյն թագեց իւր խօսակցութեան յանդիմանական ձեր և արտասանեց խօնարհութեամբ.

— Հպատակիմ, հպատակիմ և հեռանամ. և մօտենալով սկզանին, նա մի ձեռով վերցրեց կատուի պաշը իսկ միւս ձեռով փալախան և զը-նաց գէպի զուռը. չէմքի վերա նա կանգ տառաւ, խոնարհ զուխու տւեց խալֆային և արտասանեց.

— Ճնորհակալութիւն, արքանամուտիւ խալ-ֆա, Ճնորհակալութիւն, որ հատուցիր վարձն իմ

աշխատանագ առատութեամբ... զօրաւոր բռունց-  
քսվին րու:

Խալֆան շարժւեց պէտի զուռը Յունանին  
բռնելու, բայց ոտ հոգմի արագութեամբ ահ-  
հետացաւ:

Մինչ այս մինչ այն՝ մենք օդիում էինք Մա-  
նուէլին. Նորա ստները զառել էին մի մեծ վլրք  
և նա չէր կարող զետնին կանգնել:

Վերջապէս երբ ահագին նեղութեամբ ու  
զժւարութեամբ նա հագաւ իւր կօշիկները և մի  
փոքր հանգստացաւ, ես ու Գրիգորն ընկանք նո-  
րա թերերը և ամենամեծ զգուշութեամբ տուն  
տարանք. Խալֆան էնքը սւզեկցեց մեզ մինչև  
ճանապարհի կէսը և մի բանի խրախուսիչ խօս-  
րեր Մանուէլին ասելուց յնտո, յիտ զարցաւ:

— Մանուէլ, ասեցի ես ճանապարհին, երբ մենք  
մենակ մնացինք, այդ ինչ բան էր, միթէ չէր  
ցաւում, որ ոչ մի ձայն չհանեցիր:

— Սարօ, զիտես, պատասխանեց նա, հինց  
հիմա էլ ասես կրակի վերա և՛ կանգնած, բայց  
ինչո՞ւ ցոյց տամ ցաւս «թսփալ դեին». նա որ  
մեր ցաւը տեսնի՝ կուրախսանա:

Ես և Գրիգորը տուն տարանք Մանուէլին և  
նորան յանձնեցինք իր պառաւ մօրը:

## Պ Ա Տ Ա Բ Թ Ա Բ Ի Ն

Ես լսել եմ մեր մեծերից, որ իբրև թէ ամեն  
տան մէջ մի օձ է ապրում, որը պահպանում է  
տունը, օջախը, եթէ յայտնւում է, որ այդ օջա-  
խի պահտպան օձը տանից հեռացել է, դա վատ  
նշան է համարւում և պառաները զուշակում են,  
որ այդպիսի տան գլխին գալիքներ կան:

Ահա մի այդպիսի օձ էր տիրացու Յունանիք  
մեզ համար, թէպէտ չալէ, բայց մի պահպան  
հոգի էր նա մեր զսրուցում: Նա զնաց չգնաց  
մեր զպրոցից, վերջինիս կետները կարծես իսկոյն  
փոխւեց ու խախտւեց. կարծես իւր չար բերենով  
Յունանիք անիծեց մեզ ու մեր գործը և ամեն  
ինչ սկսւեց բայրայւել:

Ինչպէս վերիք մի անգամ արգէն լիշած էի,  
ժամանեակ առ ժամանեակ խալֆայի մօտ տաճ-  
կաստանից օտարականներ էին գալիս և այդ ժա-  
մանեակամիջացներում խալֆան բոլորովին մոռա-

նում էր թէ մեզ, թէ իւր վարժատումն ու իւր գործը. նա այդ ժամանակ ընկեռում էր մտածմունքների մէջ, ցըսած ու անուշաղիք էր զառնում և համարեալ ուսումնաբան էլ չէր զալիս, կամ եթէ զալիս էլ էր՝ աշխատում էր մի կերպ զառը չուտավ վերջացնել և զնալ իւր խորհրդաւոր հիւրերի մօտ:

Դորոնց հետ խալֆան կամ փակում էր իւր ոննեալը և երկար ու ծածուկ խօսակցում, կամ ասեամ նորանցից մէկին-երկուսին և ուր որ զրնում էր, վերադառնում և նորից զնում: Բնշալէս այսօր, ես յիշում եմ այդ մարդկանց խիստ ու խօժու կերպարանքները, զէմքերը ցրրախց ու արեից զարկւած, ու փափախները մինչ հաստ ու ու յանքերը բաշած, բաշպիները ուսուերին և բրդատ հափունչիները վերաները, նորանը յիշեցնում էին ինձ անայի պատմութեան միջի բաշերին, որ զեկերի ու հրէշների հետ էին միշտ կախ մկում:

Մեր տղաները համարեալ բոլորը բաշւում ու վախենում էին գրանցից.—այնպէս գորանը տարբերում էին առ հասարակ մեզ շրջապատով մեծերից, այնպէս խիստ էին և կենզրոնացած իրանց մէջ: Միայն Մանուէլն էր, որի որտի վարդերը բացւում էին, երբ զալիս էին այդ մար-

զիկը. Նա շատ անգամ ժամերով սպասում էր վարժատան գոռն առաջ, կամ փողոցի մէջ, այդ մարդկանց զարս զալուն, երեալուն:

— Սարօ, ասում էր ինձ Մանուէլը, սաստիկ զբայց ու ծածուկ կերպով, զիտիս ով են զըրսներ... զրանց եկած ճանապարհներին մատադ, զրանք մեր ազգի մարդկին են... մեր խալֆան էլ է զրանցից, աւելացնում էր նա ահազին հրամատութեամբ...

— Ե, ինչու են եկել, հարցենում էի.

— Երկրի համար են եկել, ասում էր ամենատարհրդաւոր կերպով Մանուէլը և այնպէս կրտրուկ ձհօսի, որը այլ ես նոր հարց կամ հակածառութիւն թողլ չէր տալիս:

Ահա այդ մարդիկ նորից եկան, Յունանին զարս անելուց երկու թէ երեք օր յիտօ, և մեր ուսումնաբանական կենակը խապառ խախտեց այս անգամ:

Խալֆան ուսումնաբան կամ չէր զալիս կամ զալիս, շատ շուտ էր մեզ արձակում. Յունանը չկար և մենք միանգամայն թսղնւած էինք մեր ընքին. ուզում էինք՝ զալիս էինք ուսումնաբան, ուզում էինք՝ չէինք զալիս, ոչ ոք հսկող, նայող չկար... Զատ անգամ պատահում էր, որ զաստաւուն մտնելու տեղը, հեռանում էինք պարտիկի

հեռաւոր անկիւններից մէկը և այնտեղ կամ խօսում էինք կամ խազում մեր բէֆին և տուն վերագառնում...

Յարձակման համար դարան մտած մի ոռոգունի նման, Յունանը իւր նկազի նեղ պատուհանից նայում էր այս ամենին միալար ուշազրութեամբ և, ըստ երեսյթին, ոչինչ թէ մեր, թէ խալֆայի արարմունքից նա բաց չէր թողնում իւր ոռը ու խազարկու հայեացրից: Հարկաւոր դէպրերում, երբ պէտք էր խմանալ, թէ խալֆան ի՞նչ է անում, նորա մայրն էր զուրս զալիս և զնում խալֆայի ընակարանի կողմը փայտ, չուր կամ մի այլ բան բերելու պատրակով: Թէ ես, թէ Մանուկը թէպէտ նկատում էինք Յունանի և իւր մօր արարմունքները, բայց մեզ միանգամայն Յունանի ճանկից ապատւած համարելով, շատ հեռուն չինք նայում և միայն ծիծազում էինք Յունանի և իւր մօր անատամ շարութեան վերա և խոկոյն մոռանում նորանց...

Սյոպիսի մի օր խալֆան կանչեց մեղ պարտիպից և տսեց.

— Տղերը, անկարծ շատ մնացիք... բայց մեզը ձերը չէ, իմն է... զործ ունիմ, որ մի շափաթ էլ զես կրաշէ և քանի որ հետներդ զբաղւել էլ շեմ կարող, արիք ձեղ մի լաւ ուրախ

գործ տամ, մի շաբաթ. յետս Վարդանանց տօննէ, ևս որոշել եմ հանգիսաւոր կերպով տօնել այդ օրը ուսումնաբանի մէջ և գուրք պիտի ինձ օդնէք, ահա ես լինարել եմ լաւ լաւ ստանաւորներ ու պիտի բաժանեմ ձեր մէջ, որ բերան սովորէր և հանգիսին ասէք, միւսներդ պիտիներ կ'հիսուեք, որ զարգարենք դահլիճը: մի բանի խօսք էլ ես կ'խօսեմ այդ օրւա առթիւ ձեր ծընողներին, որոնց այս օրւանից հրաւիրեցէք իմ կողմից հանգիսին... ի՞նչ էր ասում, զաւակներս, լաւ բան չի լինի:

Մէնք ուրախութեան ազազակներ բարձրացրինք:

Յետս խալֆան բաժանեց մեր մէջ ստանաւորները, Մանուկը զլխաւոր հոկիշ նշանակեց մեր նոր աշխատանքների ժամանակ ու հեռացաւ, հրաւիրելով մեղ առաւօտը վազ զալ ուսումնարան և գործի կանգնել:

Միւս առաւօտ մեր ուրախութեանը չափ չկար, երբ վարժատոն գալով մենք յանկարծ նախասնենակում տեսանք մի ահազին կոյտ մայր ծառի կանաչ ու գալար ձիւզիք: Մանուկը անմիջապէս զործի զլուխ կանգնեց և այնպէս վարպետ կերպով բաժանեց աշխատանքը մեր մէջ, այնպէս հսանգով ինքը զործի ձեռք զարկեց,

այնպէս ուշադրութեամբ սկսեց հետեւ ամենի արածին ու զործածին, որ մենք նէնց այդ առաջին օրը մեր աշխատանքի երրորդ մասը արդին կատարեցինք և ինքներս էլ չնկատեցինք, թէ ինչպէս խփեց տուն զնալու ժամը։ Բայց իրանց գարանի մէջ մտած շար սովուներն էլ ընած չէին. նորանք էլ զործի էին կանգնել. տուած Յունանի մայրը մի երկու անգամ մտաւ նախասենեակ իւր որդու նարհիլը պարելու պատրւակի և ամեն բան նայելուց, զնելուց, բնելուց և իմանալուց յետո գուրս զնաց ու սկսեց վարժատան տառչ պահապան զինորի նման ման գալ մի առ ժամանակ և յետո չրացաւ. Նինդ տասը բոսէ չանցած՝ զուրս եկաւ ինքը, տիրացու Յունանը. անցնելով նախասենեակի զոնից նա ճիշտ այնպէս ներս նայեց, ինչպէս նայում էր մի ժամանակ քանոնը ձեռին մեզուոր որոնելիս և նոյնպէս չրացաւ։ Երբ մներ զուրս եկանք տներս ցրւելու և անցանք Յունանի պատռանի մօտից, ևս ու Մանուէլը ներս նայեցինք և տեսանք, որ սինեակի խորրում Յունանն ու իր մայրը, բիթ բթի տւած, ինչ որ խօսում են...

Բայց հիմա ով էր Յունանի վրա ուշադրութիւն դարձնողը. նորա տաամները թափւել էին

և մօր ու որդու երկշոտ ու կառկածոտ հայեացը-ներին մենք արհամարհական ժպիտով պատասխանեցինք և միայն մեր հանգիստվ զրապւած, խաղով ու խնդումով աներս զնացնը։

Բայց ինչպէս երկի Յունանը մեզանով և մեր զործերով աւելի էր զրապւած, բան մներ կարծում էինք.

Մենք մեր ճաշը նոր Էլինք վերջացրել, հայրս սեղանատնից զեռ նոր էր իւր նիշարանը զնացել, երբ սեղանատան պատռանից զուրս նայելիս, աշրիս տառջ կանգնեց տիրացու Յունանի շարագուշակ կերպարանը։

Պարզ էր, նա զէպի մեզ էր զալիս։

Կայծակի արագութեամբ զլիումո միտք անցաւ, թէ տիրացուն զալիս է շարունակիւալ վերաս իւր զատաստանը կատափ պոչի առջիւ և տանելու է ինձ այդ նպատակով. այդ տատիճան սպառնական էր նորտ չարագուշակ մոայլ ու արգեղ դէմրը։

Ես զեռ իմ անելիքս էի մտածում, երբ արգէն լսեցի մեր նախասենեակում տիրացուի բայլերը և, զլուխոս կորցրած, ի մեծ զարմանք մօրըս, որ զեռ սեղանատան մէջն էր, սկսեցի վազվակի սինեակի մէջ թագնելու տեղ որոնելով և աւելի յարմար տեղ չգտնելսկ' մտա երկար սրփ-

սոցով ծածկւած սեղանի տակը: Նոյն բոլենին  
գուռը բացւեց և տիրացու Յունանի ներս մտաւ.

— Ոզդայն զրեղ, պատեղի խաթունի, տանց  
նա զոան մէջը կանգնած և հրկու ձեռքն էլ  
կրծքին զնելով մօրս խոր զլուխ տւեց:

Ես ամեն բան տեսնում էի սեղանի տակից  
և զուալի սպասում, թէ սորա վերջը ի՞նչ է  
լինելու:

— Բարի ձեղ, պատասխանեց մայրս, ի՞նչ  
կ'հրաժայէք.

— Կարեմ արգեօր տեղեկութիւն մի հայցե-  
լու ի թէն, թէ տանին է բարձրաստիճան ազան.

— Եղան ընած է, պատասխանեց զարմացած  
մայրս, բայց ի՞նչ էիր կամենում.

— Եթէ ընանա, զներոզութիւն հայցեմ և հե-  
ռանամ, տանց տիրացուն և նորից զլուխ տալով  
հեռանալու շարժում արեց.

— Բայց ի՞նչ կ'հրաժայէիր հազարզել իրան,  
տանց մայրս, կարելի է զարթեցնել, եթէ հար-  
կաւոր գործ է:

— Ոչ, ոչ պատասխանեց Յունանի, ձեռք  
գէտի մայրս ուզզելով, ոչ երբէք յանձն տանին  
խանգարելու զհանգստագոյն նինջն բարձրաստի-  
ճան ազային. եկեալ էի բան մի հազարզելու յա-

զակս սրբս նորա Սարգսի Թռոռնեան, բայց  
բանզի հանգստանա...

Կատուի առարկան պիտի անես, զիտեմ  
մտածեցի ես, բայց ինձ նորից ձեռք ձգելը մըտ-  
րիցդ հանիր».

— Ներոզութիւն, ես Սարգսի մայրն եմ և  
ինձ համար նոյնպէս հատաքրրիր է ձեր խօսքը,  
ինչպէս և հօր... բաքեհաճեցէք խնդրեմ ներս  
հրամմել.

— Ոչ յանդինեմ, ոչ յանդինեմ, տսում էք Յու-  
նանը կեղծաւորութեամբ, աշխատելով իւր ձայ-  
նին մեզմ հեշիւններ տալ, ոչ յանդինեմ խլել  
ի թէն զթանգազին ժամանակ բռ: «Զոռ ու ցաւ-  
քեղ, կեղծաւոր ագւէս», մտածում եի ես սեղա-  
նի տակ:

— Համեցէք սպարսն, նոտեցէք խնդրեմ, կըրկ-  
նեց մայրս սեղանի մօտ զրած աթոռու ցայց  
տալով և ինը սեղանի միւս կողմի աթոռին  
նստելով:

Եւ ի՞նչ բաւականութիւն էք «Ճռփալ զեի»  
հետ խօսելու, որ մայրս անպէս զօրում էք, ես  
չեմ հասկանում, թռզ կորչէք զնար էլի.

Յունանը մօտեցաւ աթօսին, խոր կերպավ  
նորից զլուխ տւեց մօրս և, նստելով աթոռի  
ծայրին, այսպէս սկսեց իւր խօսքը.

— Յայտ լիցի զրեղ, մեծարելի խալթուն, զի «պստի խալֆայի» եմ ուստերին ըստ աղեւառոհմ և համեստաբարո Սարգսի Թոռունեան և է ահօն նւաստիս Յունան, մականունեալ տիրացու, քանդի արժանացեալ եմ զրադին չնշին ուսումն իմ աւարտելու լընթացս տասն և հինգ տարւա:

Մեջ անգատաստանին զիտնական Սիմոն խալֆայի «պստի խալֆայ» զորով ուսումնասիրեցի զնթացս ուսման ուստերին ըստ պարկիշտազոյն Սարգսի Թոռունեան և պարտք համարեցի տալու բարձրաստիճան աղային զեկուցում մի կտարեալ վասն այգորիկ...

— Խնդրեմ, տիրացու, պատմեցէր, ինձ նոյնպէս հետաքրքիր է, պատասխանեց մայրս...

Եյն, այգպէս պատասխանեց մայրս, փոխանակ ծառային կանչելու և տիրացուին զուրս անելու...

— Եյն, պատմեմ, զի սեպուհ պարտականութիւն իմ համարեմ զայդ. ընթացն ուսման ուստերդ խելամիտ և համեստաբարս, չէ բարի և ոչ տանի զինքն դէպ ի բարին։ Ուսումն այդ տանիցէ ի կորուստ հօգեկան և մարմնական...

— Ի՞նչ էր ասում տիրացու, և ինչն էր այդպէս կարծում, բացականչեց մայրս.

— Ոհ, չէ ինձ իրաւունք բանալ զգակտնիքն

և յայտնել պակասութիւնն մեծին իմս, զի միայն խօնարհութեան եմ սովոր.

— Պարսն, զուր այնքան արդին տոնեցիր, որ հիմա պարտական էք բացադրելու ինձ, ինչումն է բանը և ինչն է ձեր այցելութեան նպատակը։

— Հպատակիմ ուրեմն, հպատակիմ ճակատագրին իմս և ազգու հրամանին քս, կործանելոց է ապագայն որդւու քս, խալթուն, զի նա մէջըն տնկատաստանի արժանապատիւ խալֆայի ոչ սովորի զիտութիւն։ ոչ սովորի, զի ոչ սովորեցնեն.

— Ապա ի՞նչ են սովորեցնում, հարցրեց մայրը աւելի և աւելի անհանգիստ ձայնով.

— Ոչ հերքեմ, զի ինքն խալֆան է այր մի յոյժ զիտնական, ոտկայն ձեն պարապմանց նորա է յոյժ սխալական և կորստաբեր, սովորեցնէ ոչ թէ ճշմարտութիւնը աւետարանի, նարեկա, մաշտոցա և այլ ժամապրեանց սրբազնոց և տառ թէ կերակուր հոգեսր և հոգեշահ, այլ ուսուցանէ զբանն մարմնաւորն, խօսակցի հիան երեխայոց յաղազս առարկայից հասարակաց, պատմէ աշակերտաց զպատմութիւն մարմնաւոր իշխանաց և թագաւորաց մերոց անցելոց և զրգու զմիաբն մանկան և դհոգին ըննկեմ արդի իշխանաց և թագաւորաց, ասելով թէ ժողովուրդն

հայկաղեան տանջւի ի մէջ Տաճկաստանի ի ձեռաց գերամեծար փաշայից և նորին մեծութեան օպստափառ Սուլթանի. և յորդորէ անմեղ մանելուոյն, ոչ թէ զնալն ի ճանապարհ հոգւռ փրկութեան, այլ զնալն ՚ի մէջն տգէտ ու խաժամուժ ամբոխին, անդ տպրիլ կենօք նորա անասնական և բարողել նմա զմբոստութիւնն ու զապստամբութիւնն. և խօսի պատւելի խալֆան զհետ աշակերտաց ոչ յազագս հրեշտակաց, հրեշտակապետաց, որբոցի մարտիրոսաց եկեղեցեաց և վանուց, այլ յազագս մարմնաւոր աբանց և բանից...

Նւասոս լւա, տեսի զելմացն այս խայտառակ ու անբարիշտ գիտնական Սիմոն խալֆայի, թափեցի զճիվն համբերելու և համբերեցի ժամանակ մի, բայց ի վերջո խոռովիցաւ հոգին իմ ուսմանէն այս կործանիչ և անօրէն և խուսափեցի անդտանին այն խոռովարար և կամ ազատ ի խալֆայութենէ ի մէջ զպրոցի:

Թէ որ աստիճան փշացնէ մանկուոյն սխալ ընթացրն խալֆային երեխ ի հետեւալէն. ունէի ես անասուն մի անմեղ, որ զմուկ որսա, և բըռնէին զայգ արարածն մանկունքն մեր վարժատանին և հատանէին անկուր անգլթաթեամբ զամբողջ պոչն նորա արմատաւ, արդ հարցանեմ. յետ որսկան արարածէն, ոչ սպանանեն մի այլ անա-

սուն, և յետ սորա ոչ սպանեն զմարգն. ընդէր լիցի այս. չէ պարզ, մեծարելի խաթուն, որ լիցի ի նմանէ, որ ոչ սովորի երեխան զրանն հոգւոյն, սուրբն, աստուածայինն, այլ մարմնաւորն, պիղծն և մարդկայինն...

— Ի՞նչ սարսափելի բաներ եր ովատմում տիրացու, ասեց մի փոքր լուսութիւնից յետո մայրս. պէտք է գուրս բերել տպային, աւելացրեց նա ինըն իւր հետ խօսելով:

— Այս, մնծարելի խաթուն, զգամ, հասկանամ հիմա, որ պէտք է բանամ կապանք իմ լեզւին և կապանք իմ ձեռաց. վտանգեալ է տեղիս մանկութին անօպնական և մոռանալու ևմ համեստութիւնն իմ և ցոյց տալու զգիտութիւնն իմ բազմազան և փրկելու մանկուացն, զհոր, աստւածահաճո զպրոց մի բանալով, որսվ չախջախելոց ևմ զգլուխն եօթնազլիսեան վիշտավին շարութեան և անօրէնութեան, որ բուն եղիալ է ի մէջ անդաստանին իւր՝ սխալանաց մէջ թաղեալ ու կործանեալ զիտնական Սիմոն խալֆային. յայտ լիցի և այս բեզ, մեծարելի խաթուն, թէ հանելու ես զգաւակ բո արդի անդաստանէն սրոմի. Կատարեցի զպարտք իմ, խաթուն, և աղերսեմ զթողութիւն, ասեց տիրացուն և տեղից վեր կացաւ:

— Ճատ չնորհակալ եմ տիրացու, շատ չնորհակալ եմ տեղեկութիւններից համար և շատ վշտացած, ասեց մայրս և տեղից վեր կացաւ. հօր հետ կ'իսուեմ:

— Աղերսեմ զիմովութիւն, կրկնեց տիրացուն և խոր գլուխ տալով մօրս, հեռացաւ:

Երբ նա գուրս գնաց, ես գուրս թռա իմ գարանից և իմ վշտացած ու ապշած մօրս երեսին կատապաւթեամբ գոռացի.

— Մուտ է, սուտ է, սուտ է խօսում «մոփալ գել». խալֆայի ճկութը չի արժում և նորա սոն է խածում...

Այս ասելով ես գուրս թռա տանից և մինչև Մանուկելից տուն մէկ վաղեցի:

Մանուկելը արդէն ինձանից առաջ զիտէր ամեն ինչ, գուրս եկաւ, որ Յունանը մեր տանից առաջ ման էր եկել բոլոր միւս աշակերտների տները և նոյն լիրք զրավարտութիւններն արել, թէ խալֆայից իւր վրէժը առնելու և թէ իւր նօր բացւելիք դպրոցի համար աշակերտներ որսալու:

— Եմնեն տեղ եղել է արդէն, առեց Մանուկելը, միայն մեր տունը չէ եղել և չի էլ զա, որովհետի գիտէ, որ եթէ զա սկնեալի շէմքի առաջը

հօր կ'փարիմ և վերան կ'ծածկիմ, որ տուն շմբտած, մէջն ընկնի և միւս ոտն էլ կոտրիի:

— Բայց, Մանուկել, այդ անովիտանի մաւրազը փորը պիտի թողնել, մի բան պիտի մտածել ախար.

— Երբ եկար, ես էլ այդ էի մտածում, պատասխանեց Մանուկելը, իմ կարծիքով լաւ կ'լինի զնալ ու խալֆային ամեն բան պատմել, նա գիտէ, ինչ կանէ:

Մենք վճռեցինք այդպէս էլ անել և ես գուրս եկա տուն վնալու:

Բայց երնի, այդ օրը վիճակւած էր ինձ միշտ Յունանին պատահել:

Երգէն երեկո էր, երբ Մանուկելինց փողոցից ծուեցի և մտա բաղարի փողոցներից ամենամեծը, երբ յանկարծ իմ բթի տակը մի գուռ բաց ւեց և միջից գուրս եկաւ ճիշտ իմ գէմս... տիրացու Յունանը,

Երիկնապահին, այսակազ, միեն-մինակ և յանկարծ տիրացու Յունանը...

Առաջին շարժումս եղաւ փախչել, թէկուզ պէտն ընկնելու համար՝ փախչել, բայց նոյն բուգէին այնովիսի մի զարմանալի բան կատարւեց, որ ես, սարսափս մոռացած և զարմանրից բարացած, տեղն ու տեղը կանգնած մնացի. ինձ

տեսնելուն պէս ինքը տիրացու Յունանը երեսը  
ծածկելու փորց արեց և այնպիսի արագութեամբ  
ֆախաւ և ժօտակա նեղ փազցներից մէկի մէջ  
չըցաւ, որ մի կազ մարդուց երբէք չէր կարելի  
ոպասել:

Ես դարձացած շուրջս էի նայում. և ստու-  
գում, թէ որտեղից զուրս եկաւ տիրացուն. և  
ամեն բան պարզւեց. առաջս բացւած զուռլ քա-  
ղաքի ժանդարմների զլխաւորի զուռն էր:

Եյս անգամ մի բոլորովին ուրիշ, ահծանօթ,  
աւելի ահեղ ու մեծ ահ սարսկցրից ինձ և հս-  
նոյն արագութեամբ, ինչպէս և մատնիշը, վազե-  
ցի և տուն ընկա.



## ԽԸԼ ՓԱՅՏՆ ԶԵՐԲԱԿԱՎՈՒՄ ԵՆ

Ամեն ինչ կազմ ու պատրաստ էր. մեր գա-  
ստան միջից աշակերտական նստարանները  
գուրս էինք տարել և գօրանց տեղերը հանդիսա-  
կանների համար աթոռներ էինք շարել. սենեակի  
պատերը զարդարել էինք պատկերներով, զրա-  
սանդներով, պսակներով, տերեններից ու ճիւղե-  
րից հիւտած շղթաներով ու կոյնզգոյն զրօշակ-  
ներով:

Ճիշտ մուտքի գլուղէմբ, մի մեծ պսակի մէջ  
և գեղեցիկ զրօշակների տակ, կախւած էր Մա-  
միկնեան հերոսի պատկերը, սակաւարտը զլուին  
և խաչը ձեռին:

Վարդանանց տօնի նախնթաց օրն էր:

Մեր խալֆայի հետ մենք ման էինք զալիս  
զաստան մէջ և հիացմունքով նայում մեր աշ-  
խատանքի արդիւնքի վերա:

Խալֆան հրաշալի տրամադրութեան մէջ էր

և հետներս հանարներ էր անում: Հրաշալի է, տղերը, հրաշալի ենք սարքել զահլիճը. տեսնենք վազը ինչպէս կանցնի. էրնեկ, տղերը, շարաւնակեց նա, այնքան կենդանի մնայի, որ բոան տարի յիտո տեսնեի, թէ էգուցա օրը գուր ինչպէս պիտի անց կացնէիր. արգեօր նոյն զգացմունքներով, ինչպէս հիմա, թէ, տարւած ձեր առօրեա զործերով, անտարբեր բոլորովին...

Մանուէլ, թեզ ես քահանա կուզենայի տեսնել «նորահրաշը» երգելիս, կամ ժողովրդին քարոզ խօսելիս, թեզ, Սարգիս, վարժապետ կուզենայի տեսնել, այսպէս հանդէսներ սարքելիս, ինչպէս ես, աշակերտներով շրջապատւած, թեզ, Գլուխոր, ազնիւ արհեստաւոր կուզենայի տեսներ, որ իւր զաւակներով շրջապատւած, եկեղեցի է զնում նահատակների հոգեհանդսաթին մասնակցելու. ձեզ բոլորիդ, տղերը, իրանց պարտը կատարող, իրանց երկիրն ու ազգը սիրող, այս օրով ողերուղ տպամարդիկ կուզենայի տեսնել, որ մեռնելու էլ լինէի, նոր կեանք առնէի...

Այսպէս էլի երկար խօսեց տղաց հետ խալխան և արձակեց:

Մնացինք ես և Մանուէլը:

Մենք մօտեցանք խալխալին, և ինչպէս որ լորհուրդ էինք արել, պատմեցինք նորան Յու-

նանի արարքները, թէ զրաբրտութեան նպատակը թէ նորա մեր տները գալը և թէ ժանդարմի մօտ զնալը:

Խալֆան մտած մունքի մէջ ընկաւ.

— Յունանը անգութ ու վատ է, ասեց նա, բայց շկարծեմ թէ այդ աստիճան... ուսկայն թղթերիս կարգի բերելը վնաս չի ունենալ, աւելացրեց նա ինքն իրան և հեռացաւ իւր սենետիր:

Վերջապէս եկաւ այլքան երկար սպասած հանդիսաւոր օրը...

Այդ աւուր բոլոր մանրամասնութիւնները տպաւութ են մտքիս մէջ, կարծիս ամեն ինչ մի երկու ժամ առաջ կատարեց:

Ահա մենք, բոլոր աշակերտներս, ամենանոր շորերս հագած, սանրւած, մարբւած, վերապառնում ենք եկեղեցուց ուսումնաբան, ուր արգին հաւաքւել են մեր ծնովները, և այլ բաղարացիք և բռնել են իրանց յատկացրած տեղերը:

Եհա մենք բարձրանում ենք մեր ձեռքով շինւած գարեւանդակի վերա և խալֆայի տւած նշանով սկսում ենք հոնդիսաւոր կերպով «նորահրաշը»...

Ժօղովուրդը խիստ բաւական էր և կուզենար կրկնութիւնը լսել, բայց մենք էլ չենք երգում, դեռ շատ բան կա ետեից...

Եհա մենք երկու մասի ենք բաժանվում, տեղ ենք բաց անում խալֆայի համար ու երբ նա բռնում է իւր տեղը, մենք լայն կիսաշրջանի ձեռփ շրջապատում ենք նորան։ Նա, մի թղթի կտոր ձեռին, հանդիսաւոր ձայնով սկսում է այսպէս. Մեծարգս հանդիսականներ, իրրի մի հայ, տեղիս զպրոցի ուսուցիչ, իմ սեպուհ պարտականութիւնն եմ համարում մի երկու խօսքով յիշեցնել ձեզ այս մեծ աւուր ահազին նշանակութիւնը, թէ անցեալում և թէ ներկայում մեր ամրոց ազգի համար. . . Տան և չորս գար սորանից առաջ, երբ զժրազդ հայ ժողովուրդը զարձեալ հիծում էր անտէր ու անզաշտպան, ինչպէս ներկայումս. . .

Բայց սա ի՞նչ չարազուշակ ձայներ են գալիս մուտքի կողմից; մւմ համար են փսխում այսպէս. «Եկան, եկան», սա ի՞նչ իրարանցում է ժողովրդի մէջ, որ բանի զնում սաստկանում է, այս սրտեղից եկաւ Յունանը, ախար նա մինչե հիմա շկար զահիճում և ի՞շմու է նա այդպէս վատ, ինքնարաւական կերպով ժպտում, սա ի՞նչ է, ի՞շմու յանկարձակի խալֆան այնպէս զունատեց և խօսը բերանը մնաց, բայց ի՞շմու է փախում ժողովրդը...

Ահ, տիսուր, վատ յիշովութիւններ, ահ, անի-

րաւ անիսիդ ժամանակներ, որ ժամանակում էիր նոյն խոկ անգիտակից մանկական օրերը, գնար ու երբէր, երբէր յիտ չ'գտք...

Խուզարկութիւն էր, ժողովի արգելում...

Մինչ ժողովուրդը հապճէպ խառնւելով մուտքի մօտ, վախչելու ջանք էր անում, նորան կիսելով յանկարձ ներս մտաւ ստորիանական պրիստաւը մի խումբ ստորին ծառայող ժանգարմներով ու սստիկաններով շրջապատւած և վայրենի ձայնով դուռաց.

— Ի՞ն ըս անցա

Ժողովուրդը իւր տեղում միխւած մնաց:

Երկու սստիկան մուտքի մօտ զնելուց յիտո, սստիկանական պրիստաւը երկու ժանգարմների հետ շտապեց, ժողովուրդը ճկելով, գէպի ամրինը, այնտեղ ուր կանգնած էինք մենք ու մեր խալֆան...

Խալֆան ամեն ինչ հասկացաւ: Թէպէտ սաստիկ գունատւած, նա հանդիսատ կանգնած էր և անկոչ հիւրերի մօտենալուն էր սպասում: Երբ սորանը արգէն մօտ էին իրան, խալֆան զարձաւ գէպի մեզ և կամաց տսեց.

— Մհար բարեաւ, զաւակներս, ինձ բռնելու նի զալիս, հանդարտ կացէր, մի վախինար:

Մինչ այդ, մենք փոքրիներս ապշած՝ կա-

տարւածին էինք նայում, հետզհետէ հասկանալով  
բանի էութիւնը՝ յանկարծ ամրողջ գահինը թրե-  
գոց մեր ազիսպարմ աղաղակիներից ու լացից:

Մահուելլը լալնի թառ ու կանգնեց խալ-  
ֆայի մի կողմը, ևս միւս կողմը, միւս աշակերտ-  
ները կենդանի օգակի մէջ շրջապատեցին մեզ,  
բայց ժանդարմների երկու ուժգին հարւածը գէն  
շպրտեցին ու ցրւեցին մեզ, ինչպէս արջի թա-  
թը մի մեղուապար և մենք վեր թափւեցինք  
վայնառուով դէս ու զէն: Ոստիկանը խոր ու  
տարաւ մեղանից մեր խալֆային...

Մի հարց միայն տւեց խալֆան: — ինչու,  
ինչու համար, բայց պատասխան չստացաւ:

— Молчать и не разсуждать, **գոռաց**  
ոստիկանական պրիստաւը, **տանելով** խալֆային:

Փղոսփուրզը լուռ դոգում էր խոնւելով  
կանգնած տեղը և ծակ էր որանում, որ փոխչի  
ու գլուխն աղատէ, բայց դռան մօտ կանգնած  
պօլիցականները ոչ որի գուրու չէին թողնում,  
խոկ ժանդարմները գրում էին բոլոր հանդիսա-  
կանների անոնները:

Խեղճերի հանգէսը սուլ գարձաւ, ուրախու-  
թինը — գառն կսկիծ ու խոր անդատութեան  
և անարդանքի զգացմոննը:

Մինչ իւր օգնականները ժողովրդին էին զը-

րում, ոստիկանական պրիստաւը խալֆային գուրու  
էր բերում ժողովրդի խուռն բազմութիւնից,  
աջ ու ահեակ ձեռքի ու ոտքի հարւածներ բա-  
ժանելով:

Մահուելլը խալֆայի փեշից բռնած գնում էր  
ետեց. բանիցս անդամ ոստիկանական պրիս-  
տաւը նորան ամենակոպիտ կերպով գէն հրեց,  
բայց Մահուելլը առանց ուշադրութիւն գար-  
ձնելու զորա վերա, նորից բռնում էր խալֆայի  
կողքին իւր տեղը:

Բայց ահա նորանի զոանիլ մօտեցան:

Այդուզ, պատի մօտ, ժողովրդի թիկունքնե-  
րի ետեր թագնելուի, կանգնած էր տիրացու  
Յունանը, նորա վտան երեսի վերա յաղթանակը  
արտայայտում էր այնպիսի զարշելի կերպով,  
այնպիսի կեդուոտ ու ցած ժպիտով, որ նորա  
երեսին մէկ նայովը, նորից նայել կ'խորշէր:

— Ահա մատնէշը, զոռաց յանկարծ Մահուե-  
լլը, երբ Յունանին տեսաւ և ահսպասուի ուժով  
ու ճարպիկութեամբ ճեղբեց ժողովուրզը, յալտ-  
եց Յունանին մօտ, երկու այտին այնպիսի  
ապտակներ տւեց, որ մատները գրոշմեցին մատ-  
նիչի զանատ երեսին:

— Ահա մատնէշը, խալֆա, զոռաց նա նորից  
անասելի կատաղութեամբ և խելագարի ուժով

բոնեց տիրացուի կոկորդն ու սկսեց խեղզել...

— Պօմօղի, ֆշաց խեղդւած ձայնով տիրացուն, սստիկանին զիմելով, պօմօղի գոռպօղին բրիստու.

Բայց տիրացուին հիմտ օգնութեան համելը շատ գժւար էր խիտ ամրսխի միջից և Մանուելը ահասելի կատաղութեամբ, համարեա ինքնամոռացութեան մէջ՝ լուծում էր մեր սիրելի նահատակւող խալֆայի վրլ. Ճը:

— Քեզ բա սսեհրը չեն օպնի, գոռում էր Մանուելը, կամ կ'սատիեցնեմ րեզ, կամ ինքո սաղ չեմ մնալ:

— Սիրեցեալ ժաղսվուրդ, օգնութիւն հայցեմ, փրկեցէր զիս, նորից աղաղակից Յունանը, բայց ապարզիւն. ամեն ոք հիմտ իւր զարդն էր լալիս:

— Լսեցէր, գոռում էր Յունանի կոկորդը սեղմելով Մանուելը, ժանդարմին ինքն է բերել, տեսնողը կա, ինքն է մատնել մեզ բոլորիս և մեղնից օգնութիւն է խեղբում, ահա ըեզ օպնութիւն, ահա րեզ օգնութիւն...

Գերջապէս, ուժասպառ Յունանը, ոք ժողովրդի խտութեան պատճառով ոչ շարժւելու հետարարութիւն ունէր ու պաշտպանւելու և ոչ էլ

փախչելու, չզիմացաւ և վար զրուեց, շարունակելով տակից աշխարհել և օվնութիւն պահնչել:

Երկու ստորին սստիկան վերջապէս կարողացան ժողովուրդը ձեզրել և Յունանին Մանուելի ձեռից աղատել:

Նորանք բոնեցին Մանուելին և սստիկանական պրիստաւի հրամանով նորան ևս ձերբակալիցին և բարց տւեցին խալֆայի մօտ:

Ուժասպառ, երկիւրից զեղնած Յունանը, ստիկանունեց և սկսեց զանգատուել ուսո անզամին ժողովրդի տշրին թող փշելու համար.

— Ե՞ր տուժեցի այսովէս ստուժիկ. բանզի սիրեմ զուսուցիչն իմ, բանզի ցաւիմ ի վերա վըժրապղութեան նորա... աւազ, աւազ մեղաւորաց ամբարշտաց, բայց ևս ներեմ, ներեմ նոցա և փրկութիւն հայցեմ ի տեսանել հոգւոցն նոցա... Վերջապէս ժողովրդի անունները զրելուց յետո, պրիստաւը հրամայեց բանալ գլները:

Անկանոն երամակի նման գուրս փախաւ ժողովուրդը, հետովի, միմեանց հրճրելով, շատերը վերաբերներն ու զտակները մոռացած կամ կորցրած:

Մնացինք սենեակի մէջ ձերբակալւած խալ-

Փան, Մանուէլը, Գրիգորը և մի քանի ուրիշ տ-  
շակերտներ և ստիլիստական ծառայովները:

— Взять ихъ въ тюрьму, կողիտ ձայնով  
կարգագրեց սրբութաւը և ձերբակալւածները  
ուազ զնացին:

— Մ'եար բարեաւ, զաւակներու, տուաց խալ-  
ֆան, արտասուրին աշերին վերջին տնկամ մեղ  
նայելով, չմոռահար՝ եղէր ծառա ձեր հայրե-  
նեաց.

— Ես հետզ եմ խալֆա, տուց Մանուէլը  
խալֆայի ետեից զնալով:

Ես ու Գրիգորը լալով զնացինք. ձերբակալ-  
ւածների ետեից մինչեւ բանդի զուռը, որ ծանր  
ու անկույթ կերպով փակւեցին նորանց յետեից.

Սորանից յետո րիշ բան մնաց ասելու: Եր-  
կու թէ երեք օրից յետո Մանուէլին, ի հարկե,  
բաց թողեցին բանալից, բայց ոչ խալֆային:

Նորան շատ երկար պահեցին և յետո Տաճ-  
կաստան ուղարկեցին, իբրև մի անցաթուղթ շու-  
նեցով, անբարեմիտ տաճկանպատակի:

Տիրացու Յուհաննի խոր նողատակին հասաւ.  
Խոկ այն տան մէջ, ուր մեր դպրոցն էր, նա խոր

վարժատանը բացեց հանգերձ տեհտարանով, նա-  
րեկով, բանունով և փալախայով, բայց թէ ինչ-  
պէս զնաց նորաց գործը, չեմ կարող ասել, ո-  
րովհետեւ շատ շուտ Սիմոն խալֆայի ձերբակա-  
լւածինից յետո՝ մենք ողջ բնոտանիրով Թիֆլիս  
աելափախուեցինք:



## ՔԱՅՆ ՏՈՐԻ ՑԵՏՈ

Ես արգին վազուց է աւարտել էի համալսարանի, տուն ու տեղ էի եղել և Տիմոխում ըլդշկութեամբ էի պարապում:

Չմեռ էր, Յունեար ամսի մէջն էր: Թիֆլիզի ամենացուրտ ատրիներից մէկն էր:

Օրւա աշխատանքից վաստակած, ես վասել էի տւել առանձնասենեակիս բաւխարին և կնոջն հետ, բախարս առաջ նոտած, թէյ էինք խմում և օրւա չարիքները տանում ու զնում... Յանեկարծ մեր զրափի զանի զանկը տեսցին և, մի երկու բաղէ չանցած, ծառան ներս եկաւ և յայտնեց, որ մի բահանա ինձ տեսնել է ուզում:

— Բահանա, ինչ բահանա, մեր ծահօթներից է, հարցրի ես:

— Ոչ, ծահօթ մարդ չէ:

— Ապա ուրեմն զու չասացիր, որ ես ժամը ուժից յետո հիւանդներ չեմ լինունում:

— Ասացի, բայց չի վեռում, առաւմ է՝ հիւանդ չէ, այլ կարեսը գործ ունի:

— Դէ ներս հրաւիրիր, տանցի ես մի թեթե ահաճաւթեամբ ծառային և կինս զաւրս զնաց:

Մի երկու բաղէից յետո, սենեակիս զուռը բացւեց և ներս մտաւ մի բարձրահասակ ու նիշար մարդ, հին ֆարազան վրան և զիւզացի քահանայի գտակը զլիսին. Խորա հասա և երկար ընչացքը եղեամավ էր ծածկած և տակից երկում էր նորա փակաների պէս սեղմած շրթունքները, նորա խիտ յանքերի տակից, խիստ խոժոս ու խոր հայեացքավ փայլիտում էին մեծ, խելացի և զեղեցիկ կապոյտ աշերը, որի ահագին սովին, որ սկսւամ էր նորա ճակատի մի կոզմից և վերջանում հակառակ կոզմի այտի վերա՝ տալիս էին այդ բահանայի երեսին մի խրսխս, բաջարի, մինչև խոկ յանդուզն արտայայտութիւն:

— Ոզջոյն, տանց նա, ներս մտնելով և մի երկու բայլ ինձ մօտենալով:

— Ոզջոյն ձեզ, պատախանեցի ես վեր կենալով, համեցէր խնդրեմ, տէր հայր:

Քահանան նոտեց առանց այլ և այլութեան իրան առաջարկած ավտուին:

— Ենչովէս կարոզ ևմ ձեզ ծառայել:

— Յարդելի պարսն, խօսից բահանան, մի զարմանար անժամանակ այցելութեանս. ինձ րե բած է այստեղ ժազովրդի ցաւը և կարիքի մեծութիւնը: Թէ ինչ եկաւ Սասնո գլխին, ձեզ, իբրև բանիմաց ազգայինի, յայտնի է... զիւզը, ուր եռ բահանա էի, ինչպէս և շրջակա գիւղորայք, բարուրանդ եկաւ և այրեցաւ թշնամու ձեռամք, չեայած ուժպին ու երկարատե դիմադրութեան, ուր մենք կուեցինք մէկը հարիւրի զէմ, ու մենք զոհեցինք մեր սիրելիներին, զաւակներին... Դառը յիշովութիւններից բահանայի խածիկ աշերը յանկարծ սեին տւեցին և երեսի երկար սպին շառագունեց... Կարճ տոեմ, տոեց նա մի զայրացած մարդու կտրուկ եզանակով, օվնութիւն է պէտք՝ բահուածք վերականգնելու, բազցածին հաց տալու և ահա ձեզ Սրբազնի ձեռօր վտերացրած ժապաւինեալ մատեանը:

Երբ ես վեր տոի մատեանը, որ իմ տուրը զրեմ, կարծես այդ մարդու զրգիսը մի փոքր անցաւ և նա աւելի մեզմ ձայնով տոաց:

— Օգնեցիք, օգնեցիք, եղիք ծառա ձեր հայրենեաց:

Նոյն բոպէին զբիշը ձեռիցս վայր ընկաւ. այնպիսի քազցր, հին յիշովութիւններ էին զարթեցնում այդ չարս խօսրը իմ մորի մէջ... Սի-

մնի խալֆան, իմ սիրելի Մահուելը, Գրիգորը, մեր պատասնիլը, պարտէզը...

— Ներազութիւն, աւր հայր, ասեցի ես, ինչպէս տոեցիք:

— Ասում եմ՝ եղիք ծառա ձեր հայրենեաց:

— Ինչ զեզեցիկ խօսր է... Խօսակցիս երեսի վերա ևս երեացին քազցր յիշովութիւնների նրանիներ:

— Իմ պաշտելի ոսուցչիս խօսրն էր զտ... տոեց նա համարեա ինքին իբան:

— Ներեցիք համարձակութեանս, տոեցի ես աւելի և աւելի յուզելով, բայց ինչպէս էր նոր անունը:

— Սիմոն խալֆա էր անունիք, պատասխանեց բահանան նոյնակիսի կամաց ձայնով:

— Սիմոն խալֆա...

— Ինչու էր զարմանում...

— Բայց ախար նա իմ էլ Սիմոն խալֆան էր:

— Ինչպէս, զուր 0...ում, Սիմոն խալֆայի մօտ ոսվորել էր:

— Տէր հայր, ձեր անունի ինչպէս է, ձեր անունը ինդրեմ:

— Հոգեարական անունն է Սահակ, աշխարհականն էր Մահուել:

— Մահուել... Մահուել, զու ինձ չես ճա-

նաշում, զոչեցի ևս և պրեեցի նորոն, չես յիշում Սարօնի, ևս Սարգիս Թառունեանին եմ:

— Umpró...

—Умнож...  
—Умнож...

Մենք գրկախռութեած լաց Եինք լինում ու-  
բախութիւնից, մինչ կինո, զարմացած, լաց  
զանից մեզ էք նայում:

— Սիրելիս, զաշեցի ևս հիմա կնոջո դիմելով,  
ախար սա Մահուելին է, իմ սիրելի Մահուելը,  
իմ միակ, աղնիւ բնկերը ..

Եւ նորից ես և Մանուէլը զրկախտանեցինք,  
Կարից իրաք հայեցինք, և նորից արցունիքները  
գիտացին մեր աշխրից...

—Մահմետէլ, զոշեցի ես, Մահմետէլ, իսկ ես,  
ես յիշ եղաւ:

— Նա նահատակեց երգերումսւմ, պատախութեց Մանեռէլը, խորին, սրբազնի լրջութեամբ և ոտի կանչնեց այդ լիշտպաթեան առաջ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0370121

13364